

# ՄԱՍԻՍ


ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 49 (1949) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՄԱՐ 4, 2020  
VOLUME 39, NO. 49 (1949) SATURDAY, JANUARY 4, 2020



Պաշտոնաթերթ  
Ս. Գ. Հեղինեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104



• HAPPY NEW YEAR •

# 2020

ՇՆՈՐՀԱԴՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
և  
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՄԱՍԻՍ - 2020

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարի Մըն Ալ Անցաւ Պատմութեան

Փակելով 2019 թուականը կը թեւակոխենք ոչ միայն նոր տարի մը, այլ նոր տասնամեակ, որ կու գայ նոր էջ մը բանալու մարդկութեան համար:

Իւրաքանչիւր տարուայ աւարտին պարտաւոր կ'զգանք ակնարկ մը նետելու եւ արժեւորելու նախորդ տարին՝ իր յաջողութիւններով ու բացթողումներով, իր երջանիկ ու տխուր էջերով, իսկ նոր տարին դիմաւորելու բարի մաղթանքներով ու սպասուող բազում մարտահրաւերներու յաղթահարման ակնկալիքներով:

Անցնող տարուայ ընթացքին Հայաստանի հանրապետութիւնը, անոր սահմաններու պաշտպանութիւնը ու քաղաքացիներու կեանքի պայմաններու բարելաւումը մնացին մեր պետութեան ուշադրութեան կեդրոնին: Շնորհիւ տարի մը առաջ իրագործուած Յեղափոխութեան Հայ ժողովուրդը նուաճեց նոր բարձունքներ: Տարին դարձաւ տնտեսական կայուն զարգացման տարի մը: Տնտեսական յեղափոխութիւնը սկսաւ տալ իր առաջին պտուղները: Հայաստան այցելող զբօսաշրջիկներու թիւը հասաւ 1.5 միլիոնի:

Օլիկարխիկ համակարգը, որ նախապէս իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած էր երկրի բոլոր բարիքները, վերացման ճանապարհին է ու երկրի հարստութեան աւելի հաւասար բաշխումը ապահովուելու ուղղութեամբ առնուեցան գործնական քայլեր: Տնտեսական աճի շնորհիւ ապահովուած պետութեան յաւելեալ եկամուտները սկսան վերադարձուիլ ժողովուրդին, կենսաթոշակներու ու աշխատավարձերու բարձրացման ու ենթակառուցութեան նորոգութեան ու արդիականացման միջոցաւ:

Եղծանումի (Կորուպցիայի) ու կաշառակերութեան դէմ պայքարը շարունակուեցաւ մեծ թափով, չխնայելով նոյնիսկ իւրայինները ու նախկին համակարգի բազմաթիւ կարկառուն ներկայացուցիչներ կանգնեցան դատարաններու առջեւ:

Արտագաղթը, որ վերջին տարիներուն վերածուած էր ազգային աղէտի, սկսաւ ցոյց տալ դանդաղեցման նշաններ՝ որպէս արդիւնք ժողովուրդի մօտ ապագայի նկատմամբ տիրող լաւատեսութեան ու դրական ակնկալիքներուն:

Հայաստանի ու Արցախի սահմաններու պաշտպանութիւնը եւ բանակի մարտունակութեան ամրապնդումը մնացին հայրենի իշխանութիւններու ուշադրութեան կիզակետը: Այս ուղղութեամբ առնուած գործնական քայլերով ու նոր ու արդիական զինատեսակներու ապահովումով, փոխուեցան տարածաշրջանէն ներս խաղի կանոնները: Թշնամիի յաջորդ քայլերուն սպասողի ու պաշտպանուողի վիճակէն, Հայաստան անցաւ յարձակողականի ու սկսաւ խօսիլ խաղաղութիւն պարտադրողի դիրքերէն:

Ժողովրդավարութիւնը, խօսքի ու մամուլի ազատութիւնները սկսան ծաղկիլ ու արմատներ նետել, հաւասար պայմաններ ստեղծելով տարբեր տեսակէտներու ու քաղաքական հոսանքներու առջեւ: Վերացաւ երկրէն ներս վախի մթնոլորտը ու յառաջ եկաւ բարոյաւորութեամբ նոր միջավայր: Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնները արձանագրելով այս բոլորը, Հայաստանը դասեցին այն հազուադիւտ երկիրներու շարքին ուր ազատութիւնները յառաջդիմութիւն կ'արձանագրեն:

Շնորհիւ Հայաստանի ու Սփիւռքի միատեղ ջանքերուն, Ցեղասպա-

նութեան ճանաչման աշխատանքները նոյն թափով շարունակուեցան: Ցեղասպանութեան փաստը հաստատող երկիրներու թիւը շարունակեց աճիլ ու տարին նշանաւորուեցաւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան եւ ապա, Ծերակոյտին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչմամբ: Հերթը այժմ եկած է պարտադրելու Ամերիկայի նախագահին՝ հետեւելու Գոնկըրէսի օրինակին ու այսուհետեւ Ապրիլ 24-ի պատգամներուն մէջ օգտագործելու Ցեղասպանութիւն բառը:

Այս դրական երեւոյթներու կողքի միջին Արեւելքի Հայութեան դիմագրուած դժուարութիւններն ու վտանգները բազմապատկուեցան: Սուրիոյ շարունակուող պատերազմը ու Հայ համայնքին կրած վնասներուն վրայ եկաւ աւելնալու լիբանանահայութեան դիմագրուած տնտեսական ու ընկերային նոր իրավիճակները: Երկրէն ներս տիրող սուր տագնապը հարուածեց նաեւ մեր ժողովուրդին, որոնք իրենց այլազգի քաղաքացիներուն հետ միասին կը գտնուին մեծ դժուարութիւններու առջեւ ու շատ-շատեր դարձան կարիքաւոր:


Սփիւռքի տարածքին, յաջողութիւններու կողքին արձանագրեցինք նահանջ: Փակուեցան դպրոցներ ու ազգային հաստատութիւններ, դադարեցան լոյս տեսնել մամուլի օրկաններ: Այսուհանդերձ, կապը Հայաստանի հետ աւելի եւս ամրապնդուեցաւ, հոն տիրող յոյսն ու լաւատեսութիւնը տարածուեցաւ նաեւ արտասահմանի Հայութեան վրայ դառնալով խթան՝ կառչած մնալու մեր արմատներուն:

Միջազգային գետնի վրայ Միացեալ Նահանգները շարունակեց վարել ինքնամեկուսացումի քաղաքականութիւն մը, կորսնցնելով նախկին իր վայելած դիրքն ու հեղինակութիւնը: Թէեւ մեծ տէրութիւններու միջեւ պատերազմներու սպառնալիքներ չեղան, սակայն այդ փոխարինուեցաւ երկրագունդի վրայ կլիմայի փոփոխութեան հետեւանքով յառաջացած մտահոգութիւններով: Բնական աղէտները եղան աւելի սաստիկ ու մահաբեր, դառնալով մարդկութեան սպառնացող ամենէն հրատապ ու սուր տագնապը: Այս վտանգին առաջը առնելու համար համախմբուած՝ աշխարհի գրեթէ բոլոր երկիրներու շարքին բացակայեցաւ Ամերիկան, որու այսօրուայ ղեկավարութիւնը շարունակեց վարել ժխտումի քաղաքականութիւնը մը, որ սկսած էր տարի մը առաջ Փարիզի Կլիմայի Միջազգային Համաձայնութենէն դուրս գալով:

Այժմ, մարդկութիւնը կը դիմաւորէ նոր տասնամեակը, նոր յոյսերով ու ակնկալիքներով, որպէսզի աշխարհի վրայ տիրէ խաղաղութիւն, վերանան բոլոր տեսակի պատերազմներն ու ազգամիջեան բախումները, աղքատութիւնը յաղթահարուի ու իւրաքանչիւր երեխայ՝ աշխարհի որ մասին վրայ ալ գտնուի, հացի կարօտ չունենայ ու բնական աղէտները դառնան նուազ կործանարար:

Աշխարհացրիւ Հայութեան համար մեր զոյգ հանրապետութիւններու՝ Հայաստանի ու Արցախի հզօրացումը ու ժողովուրդի բարեկեցութիւնը կը հանդիսանան ամանորի մեր մաղթանքներու շարքին գլխաւորը, որպէսզի մեր ժողովուրդի աճի, բազմանայ ու զարգանայ իր մայրենի հողին վրայ, որ է՝ ու կը մնայ մեր ազգի գոյատեւման միակ երաշխիքն ու գրաւականը:

Լաւատեսութեամբ ու հաւատքով կը դիմաւորենք նոր տասնամեակը ու կ'ըսենք՝ Շնորհաւոր Նոր Տարի:



**Ս. Գ. ՀՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ  
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԻՐ ԲՈԼՈՐ  
ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒՆ,  
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ԵՒ ԻՐ  
ՉՈՅԳ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ  
ՆՈՐ ՏԱՐԻՆ  
ԵՒ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՆԳԸ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ  
  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ  
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ  
  
**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>  
  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Շնորհաւորական Ուղերձը Ամանորի Եւ Սուրբ Ծննդեան Տօներուն Առթիւ



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA www.gov.am

Սիրելի ժողովուրդ,  
Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ, Արցախի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ, Սփիւռքի հպարտ հայրեր:  
Ձեզ դիմում եմ ուղիղ եթերում, Հայաստանի Հանրապետութեան եւ համայն հայութեան մայրաքաղաք Երեւանի սրտից՝ Հանրապետութեան Հրապարակից, որտեղ 2018 թուականի գարնանը իրար հետ իրականացրեցինք Ոչ բռնի, թաւաշեւ, ժողովրդական յեղափոխութիւնը:

Անցնող 2019 թուականը յետյեղափոխական առաջին ամբողջական տարին էր եւ 2018 թուականի Դեկտեմբերի 31-ի իմ ամանորեայ ուղերձում ձեզ խոստացել էի, որ 2019 թուականի ընթացքում մենք նուաճելու ենք նոր բարձունքներ, արձանագրելու ենք նոր յաջողութիւններ եւ առաջին հերթին մեր երկրի սոցիալ տնտեսական կեանքում:

Ուրախ եմ փաստել, որ տեսանելի, շօշափելի ու չափելի բազմաթիւ արդիւնքներ ենք արձանագրել անցնող տարուայ ընթացքում:

2019 թուականի արդիւնքներով Հայաստանը ամենամեծ տնտեսական աճն է ունենալու ոչ միայն մեր տարածաշրջանում, ոչ միայն Եւրասիական տնտեսական միութեան տարածքում, ոչ միայն ԱՊՀ-ում եւ յետխորհրդային ողջ տարածքում, այլեւ ենթադրաբար՝ Եւրոպական տարածաշրջանում: Հայաստանը վստահաբար 2019 թուականի տնտեսական աճի ցուցանիշներով աշխարհի առաջատար երկրների թուին է դասուելու:

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները կարող են տեսնել եւ զգալ մեր տնտեսութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները:

2019 թուականի ընթացքում Հայաստանում նորոգուել են այնքան աւտոճանապարհներ, որքան 2015, 16, 17 թուականներին միասին վերցրած:

Բարձրացել են զինուորականների, փրկարարների, ուսուցիչների, անտառապահների, բազմաթիւ բուժ աշխատողների աշխատավարձեր, 2020 թուականի Յունուարի մէկից բարձրանում են բոլոր տեսակի կենսաթոշակները եւ նպաստները, աւելանում է նուազագոյն աշխատավարձը:

Իրականացում են գուտ սոցիալական ծրագրեր. բիւջէի միջոցների հաշուին մասնատան 300 սաներ, ում պետութիւնը դեռ 2003 թուականից բնակարան յատկացնելու պարտաւորութիւն ունի, ի վերջոյ ստանում են բնակարաններ:

Լուծուած է զինթոշակաւորների բնակարանային խնդիրը, ինչի համար յատկացուել է աւելի քան 8 միլիարդ դրամ:

Մէկ միլիարդ 500 միլիոն դրամ է յատկացուել 121 փախստական ընտանիքների բնակարանով ապահովելու համար. նման ծրագիր Հայաստանում նախկինում երբեք չի իրականացուել:

Եւ ուրախ եմ արձանագրել, որ հիմա Հայաստանը գտնուած է աղքատութեան՝ ամենացածր մակարդակի վրայ, նման հաշուառում իրականացնելու մեկնարկի օրուանից ի վեր:

Մեր երկրի միջազգային պահանջարկը հասել են աննախադէպ ծաւալներ, գերազանցելով 2.8 միլիարդ դոլարը, 2019 թուականի պետական բիւջէի հարկային եկամուտները գերակատարուել են աւելի քան 100 միլիարդ դրամով:

Հայաստանի կառավարութիւնը բազմաթիւ ծրագրեր է իրականացնում, որոնց միջոցով հազարաւոր ընտանիքների աջակցում է աշխատանքով յաղթահարել աղքատութիւնը եւ կառուցել բարեկեցութիւն:

Կարելոր է ընդգծել նաեւ, որ 2018 թուականի Մայիսից ի վեր Հայաստանում ի յայտ է եկել շուրջ 84 հազար նոր աշխատատեղ, անշեղօրէն նուազում է գործազուրկների թիւը: Դեռ աւելին, այսօր Հայաստանում հազարաւոր թափուր աշխատատեղեր կան:

Սիրելի հայրենակիցներ,  
Մեր ձեռքբերումների ցանկը դեռ երկար կարելի է շարունակել: Այս թուարկումը, սակայն, անում եմ ոչ միայն 2019 թուականը ամփոփելու, այլեւ 2020 թուականի մեր նշաձողերը սահմանելու համար:

Նոր տարին դիմաւորում ենք բարձր տրամադրութեամբ, ամբապնդուած ինքնավստահութեամբ, սեփական ուժերի եւ ապագայի նկատմամբ նորոգուած հաւատով:

2020 թուականը պիտի դառնայ այս համազգային տրամադրութեան, ինքնավստահութեան ու հաւատի անհատականացման տարի: Նոր

տարում սեփական ուժերի եւ ապագայի նկատմամբ հաւատով ու եռանդով պիտի համակուեն նոյնիսկ թերահաւատները եւ մենք իւրաքանչիւր քաղաքացու պէտք է ուժ տանք, վստահութիւն, քաջալերանք, որ ինքը կարող է, ինքը ունակ է, ինքը ի վիճակի է ունենալ յաջողութիւններ՝ կրթութեան, կարիքային մէջ, ձեռներէցութեան, արդար, ստեղծագործ, գրագէտ աշխատանքով արդիւնք ստեղծելու, հարստանալու եւ սեփական երկիրը հարստացնելու գործում:

Մենք ծաւալուն փոփոխութիւններ ենք իրականացրել հարկային օրէնսգրքում, որ 2020 թուականը դառնայ մեր քաղաքացիների տնտեսական ակտիւութեան բացառիկ տարի: Յեղափոխութիւնից յետոյ հարիւր միլիոնաւոր յաւելեալ դոլարներ են մտնում Հայաստանի Հանրապետութիւն, եւ իւրաքանչիւր քաղաքացի պէտք է մտածի, թէ ստեղծարար ձեռնարկատիրութեան ինչ նախագծով կարող է իր մասնաբաժինը ստանալ այս ազգային հարստութիւնից եւ ազգային հարստութեան ինչ մասնաբաժին ինքը կարող է ստեղծել:

Սիրելի հայրենակիցներ,  
Հայաստանում հաստատուած են անհնարինը իրականութիւն դարձնելու ժամանակներ: 2018 թուականին շատ քչերն էին հաւատում, որ հնարաւոր է երկրում իրականացնել Ոչ բռնի, թաւաշեւ, ժողովրդական յեղափոխութիւն, 2019-ին շատ քչերն էին հաւատում, որ արձանագրելու ենք համաշխարհային ուշադրութեան արժանի տնտեսական ցուցանիշներ:

2020 թուականը դառնալու է թերահաւատների լուսավառուելու եւ հաւատաւորների թռիչքի տարի, Հայաստանի Հանրապետութեան տնտեսական, քաղաքական, սոցիալական ու հոգեբանական թռիչքի տարի: Սա է այս յեղափոխական՝ սիրոյ եւ համերաշխութեան բազմամարդ ու խինդառատ Հանրապետութեան Հրապարակի այս պահի խորհուրդը:

Սիրելի հայրենակիցներ,  
2019 թուականին մենք ըստ էութեան փակել ենք այսպէս կոչուած «80-ականների գէնքերի» ամօթալի էջը: Ընդամէնը օրեր առաջ Հայաստանը ձեռքբերեց «ՍՈՒ-30-ՄՄ» գերժամանակակից բազմաֆունկցիոնալ ռազմական օդանաւեր եւ վերջապէս ունեցանք կործանիչ ավիացիայ, ձեռք բերեցինք «ՏՈՐ-Մ2ԿՄ» հակաօդային եւ հակահրթիռային պաշտպանութեան գերժամանակակից համակարգեր:

2019 թուականին վերջին տարիների համար աննախադէպ քանակի գէնք եւ գինամթերք ենք ձեռքբերել, որոնք կամ հէնց 2019 թուականի արտադրութեան են, կամ բոլորովին չօգտագործուած: Սա աննախադէպ իրավիճակ է մեր բանակի պատմութեան մէջ:

Հարկ եմ համարում կրկին ընդգծել, որ գերժամանակակից այս գէնքերը մեզ անհրաժեշտ են խաղաղութեան եւ ոչ պատերազմի համար: Իսկ մեր խաղաղութիւնն ապահովում են այսօր, հիմա, հէնց այս պահին առաջնագծում, սահմանին կանգնած եւ իրենց զօրամասերում մեզ հետեւող զինուորները, սպաները, զենքայինները:

Ամանորի այս հանդիսաւոր հարթակից յատուկ ողջոյններ եմ յղում նրանց եւ շնորհակալութիւն եմ յայտնում մեր խաղաղութեան դիրքերում ամուր կանգնած լինելու համար:

Ասեմ նաեւ, որ բանակում սկսուել եւ մեծ թափով առաջ է շարժուած զինուորներին բարձրորակ սննդով ապահովելու նոր համակարգի ներդրումը, որը լայն դրական արձագանք է գտել զինուորների, նրանց ծնողների եւ հանրութեան շրջանում: 2020 թուականի արդիւնքներով մտադիր ենք սննդի ապահովման այսպիսի համակարգով ապահովել Հայոց բանակի բոլոր զօրամասերը ինչի արդիւնքում մեր զինուորների ամենօրեայ սեղանները կը լինեն իրենց մատուցած ծառայութեանը արժանի.....

Յատուկ ողջոյններ եմ յղում Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութեան, ազգային անվտանգութեան ծառայութեան, արտակարգ իրավիճակների նախարարութեան, արդարադատութեան նախարարութեան այն ծառայողներին, ովքեր ամանորեայ այս րոպէները անցկացնում են ծառայութեան մէջ, ապահովելով երկրի ու ժողովրդի անվտանգութիւնը եւ շնորհակալութիւն եմ յայտնում նրանց՝ ծառայութեան համար:

Ձերմօրէն ողջունում եմ առողջապահութեան, կներգետիկայի, հեռահաղորդակցութեան, տրանսպորտի, հանրային սննդի ոլորտի այն աշխատողներին եւ ընդհանրապէս բոլոր այն մարդկանց, ովքեր Ամանորը դիմաւորում են ոչ թէ ընտանիքի անդամների հետ, այլ աշխատանքի մէջ:

Եւ ի վերջոյ, ողջունում եմ Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներին, մեր բոլոր հայրենակիցներին, Հայաստանում, Արցախում, սփիւռքում... ու յատկապէս այն մարդկանց, ովքեր այս պահին այստեղ են՝ համայն հայութեան եւ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երեւանի սրտում՝ Հանրապետութեան Հրապարակում:

Սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորովիդ եւ խոնարհուած եմ բոլորիդ առաջ: Ծառայում եմ բոլորիդ. ձեր բոլոր ցաւերը իմ սրտում են, ձեր բոլոր կարիքները իմ մտքում են, ձեր բոլոր երազանքները իմ հոգում են:

Ժպտացէք իրար սիրելի հայրենակիցներ, որովհետեւ Նոր տարին ահա, եկաւ:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:  
Եւ ուրեմն՝  
Կեցցէ Ազատութիւնը,  
Կեցցէ Հայաստանի Հանրապետութիւնը,  
Կեցցենք մենք եւ մեր երեխաները, որ ապրում ենք եւ ապրելու ենք Ազատ եւ Երջանիկ Հայաստանում:

# Տարուայ Հայկական Գլխաւոր Իրադարձութիւնները

Նիկոլ Փաշինեան Նշանակուեցաւ  
Հայաստանի Վարչապետի Պաշտօնին



Յունուար 14-ին տեղի ունեցաւ Հայաստանի նորընտիր Ազգային ժողովի անդրանիկ նիստը, որու ընթացքին «Իմ ֆայըր» խմբակցութեան թեկնածու Արարատ Միրզոյեան ընտրուեցաւ Ազգային ժողովի նախագահ ստանալով 132 պատգամաւորներէն 131-ի ձայները:

Նոյն օրը, նախագահ Արմէն Սարգսեան նախագահական նստավայրէն ներս հանդիպում ունեցաւ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններու արդիւնքով մեծամասնութիւն ստացած ուժի՝ «Իմ ֆայըր» դաշինքի ղեկավար Նիկոլ Փաշինեանի հետ, հրամանագիր ստորագրեց Նիկոլ Փաշինեանը նշանակելով վարչապետի պաշտօնին:

«Ստացել եմ առաջարկութիւնը Ազգային ժողովից եւ դրա հիման վրայ ուրախութեամբ կը ստորագրեմ Ձեզ Հանրապետութեան վարչապետ նշանակելու հրամանագիրը», - այս առթիւ ըսաւ Արմէն Սարգսեան:

«Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութիւնը լիարժէք վերադարձուած է ժողովրդին, եւ Հայաստանում հաստատուած է ժողովրդավարութիւն: Այլ ինչիւր է, որ այդ ժողովրդավարութիւնը պէտք է համակարգային երաշխիքներով ամրապնդուի, որպէսզի ժողովրդավարութիւնը, օրէնքի գերակայութիւնը, տնտեսական գործունէութեան համընդհանուր հասանելիութիւնը երաշխաւորուեն ոչ թէ քաղաքական իրավիճակով, ոչ թէ անձերով պայմանաւորուած, այլ ժողովրդավարական, պետական, քաղաքական համակարգերի կայացմամբ», իր պատասխան խօսքին մէջ յայտարարեց Փաշինեան:

## Ֆրանսայի Նախագահը Ապրիլ 24ը Հռչակեց «Հայոց Յեղասպանութեան Յիշատակի Օր»

Ապրիլ 24-ը Ֆրանսայի մէջ հռչակուեցաւ Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր: Այս մասին յայտարարեց երկրի նախագահ Էմանուէլ Մաքրոնը՝ Փարիզի մէջ ելոյթ ունենալով Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի ամենամեայ ճաշկերոյթի ընթացքին:

«Ֆրանսան այն երկիրն է, որ ուղիղ կը նայի պատմութեան աչքերուն», - ըսաւ Ֆրանսայի նախագահը ֆրանսահայ համայնքի 350 ներկայացուցիչներու ներկայութեամբ: Մաքրոն յիշեցուց, որ Ֆրանսան առաջին երկիրներէն էր, որ 1915 թուականին Օսմանեան կայսրութեան մէջ հայերու կոտորածները անուանեց մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւն:

«Ֆրանսահայերու պատմութիւնը կը պատկանի Ֆրանսայի պատմութեան, եւ Հայոց ցեղասպանութիւնը մեր յիշողութեան մէկ մասն է, ուստի մեր հանրապետութիւնը պէտք է չիչէ այն», - ըսաւ Ֆրանսայի նախագահը:

France-Press լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ Մաքրոն յայտնած է, որ իր որոշման մասին նախապէս տեղեակ պահած է Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Էրդողանին:

Միջոցառման ժամանակ Ֆրանսայի նախագահը նաեւ յարգանքի տուրք մատուցեց Շարլ Ազնաւուրի յիշատակին: Աշխարհահռչակ շանսոնիէի որդին՝ Նիքոլա Ազնաւուրը Մաքրոնին ծիրանների փայտէ պատրաստուած տուտուկ նուիրած է:

Ապրիլը Հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակի ազգային օր հռչակելը 24-ը Մաքրոն խոստացած էր իր նախընտրական քարոզարշաւի ընթացքին:

Թուրքիա դատաւարտեց Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր հռչակելու՝ Մաքրոնի որոշումը:

«Հայերու, այսպէս կոչուած, ցեղասպանութեան մասին պնդումները քաղաքական սուտ են, չունին որեւէ իրաւական հիմք եւ կը հակասեն պատմական փաստերուն», - յայտարարեց Թուրքիոյ նախագահի խօսնակ Իպրահիմ Բայրըն:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը անդրադարձաւ Ապրիլ 24-ը Ֆրանսայի մէջ Հայոց ցեղասպանութեան յիշատակի ազգային օր հռչակելու մասին էմանուէլ Մաքրոնի յայտարարութեան: Նիկոլ Փաշինեանը «Թուրքիոյ»-ի իր էջին վրայ գրառում կատարելով ողջունեց Ֆրանսայի նախագահի յայտարարութիւնը:

«Դա համերաշխութեան եւ մարդու իրաւունքները պաշտպանելու ու զանգուածային վախճանութիւնները կանխելու վճռականութեան հզոր դրսեւորում է», - գրած էր Փաշինեան:

## Վիեննայի Մէջ Կայացան Փաշինեան-Ալիեւ Բանակցութիւններ

Մարտ 29-ին, Վիեննայի մէջ տեղի ունեցաւ Լեւոնայի Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման շուրջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:

«Վերջին օրերուն ատրպէյճանական կողմը հանդէս կու գայ յայտարարութիւններով, որոնք դուրս են համատեղ յայտարարութիւններու շրջանակներէն», ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակմամբ յայտարարեց Հայաստանի վարչապետը՝ անդրադառնալով Վիեննայի բանակցութիւններուն:

Բանակցութիւններէն ետք Իլհամ Ալիեւը ըսած էր. «Կարելոր է այն հանգամանքը, որ բանակցութիւններու ձեւաչափը անփոփոխ մնաց. բանակցութիւնները կը վարեն Հայաստանը եւ Ատրպէյճանը, ինչպէս եւ երկար տարիներ շարունակ»:

«Համաձայնէք, որ սա շատ լուրջ խնդիր է առաջացնում եւ ընդհանրապէս հարցականի տակ է դնում գործընթացի ողջ լրջութիւն», - ըսաւ վարչապետը:

Ըստ Փաշինեանի, բանակցութիւնները արդիւնաւէտ դարձնելու համար պէտք է մոռնալ հին եւ կրկնուող թեմաները, որոնք ցոյց տուած են իրենց անարդիւնաւէտութիւնը եւ նոր բանակցային գործընթացին մէջ պէտք է նոր մօտեցումներով առաջնորդուիլ: Վարչապետը վերահաստատած է՝ Վիեննա բացած է Ստեփանակերտի մէջ յայտարարած օրակարգով եւ Ղարաբաղի բանակցային սեղան վերադառնալու հարցը քննարկուած է:

## Նշուեցաւ Հայոց Յեղասպանութեան 104-րդ Տարելիցը

Ապրիլ 24-ին, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութիւնն ու ժողովուրդը Ծիծեռնակաբերդի յուշահամալիրէն ներս յարգանքի տուրք մատուցեցին Հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակին:

Յուշահամալիր այցելեցին ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան եւ այլ պաշտօնեաներ: Ըստ Անճէլըսի մէջ տասնեակ Հազարաւոր համախմբուած էին



# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ



# Տարուայ Հայկական Գլխաւոր Իրադարձութիւնները



Թրքական հիւպատոսարանին առջեւ դատապարտելու եւ արդարութիւն պահանջելու՝ Հայոց ցեղասպանութեան զոհերուն համար: Յիշատակութեան Միացեալ Մարմինի կազմակերպութեամբ կայացած հանրահաւաքին ներկայ էին մեծ թիւով երիտասարդներ, դպրոցական ուսանողներ, կրօնական ու քաղաքական ներկայացուցիչներ:

Ապրիլ 24-ին Սպիտակ Տունը տարածեց Միացեալ Նահանգներու նախագահ Տանտլա Թրամփի յայտարարութիւնը Հայոց ցեղասպանութեան 104-րդ տարելիցին առթիւ: Ինչպէս իր նախորդները՝ Թրամփ եւս չօգտագործեց «ցեղասպանութիւն» բառը ու բաւարարուեցաւ «Մեծ եղեռն» եզրույթով:

Պիլտոյ Մէջ Թուրք ոստիկանութիւնը Պոլսոյ Սուլթանահմէտ հրապարակին վրայ երկրորդ տարին ըլլալով արգիլեց Հայոց ցեղասպանութեան տարելիցին նուիրուած միջոցառմաները, որոնք տեղափոխուեցան փակ սրահի մէջ:

Կարօ Փայլանը յայտարարեց, որ Սուլթանահմէտի հրապարակին վրայ նախատեսուած միջոցառման չեղարկումը Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան նահանջի հերթական ապացոյցն է:

## Հայաստանի Կոչը Ըրաւ Միջազգային Հանրութեան՝ Դատապարտելու Ցեղասպանութեան Զոհերուն Երտողանի Հասցուցած Վիրաւորանքը

Հայաստան կոչ ըրաւ միջազգային հանրութեան՝ խստօրէն դատապարտելու Հայոց ցեղասպանութեան զոհերու եւ գաջն վերապրածներու յիշատակին եւ արժանապատուութեան Թուրքիոյ նախագահի հասցուցած վիրաւորանքին կապակցութեամբ:

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած պաշտօնական յայտարարութեան մէջ ըստուած էր որ, Թուրքիան կը շարունակէ կառչած մնալ ժխտողականութեան խորշիլի քաղաքականութեան՝ ցուցաբերելով ցեղասպանութեան զոհերու արժանապատուութեան ու յիշատակին հանդէպ վիրաւորանք եւ անցեալի հետ առերեսուելու անկարողութիւն, որ կրկին արտացոլուեցաւ Թուրքիոյ նախագահի՝ այս տարուան Ապրիլ 24-ի ուղերձին մէջ:

Ցեղասպանութեան զոհերու անուանարկումը՝ իբրեւ «հայկական հրոսակախումբերու եւ անոնց կողմնակիցներու» առաւել վիրաւորա կան է եւ ցաւալի:

## Փորթուկալի Խորհրդարանը Ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Փորթուկալի խորհրդարանը ճանչցաւ Հայոց ցեղասպանութեան փաստը: Ճանաչման նիստը կայացաւ Ապրիլին 26-ին Փորթուկալի մայրաքաղաք Լիզպոնի մէջ:

Բանաձեւին մէջ նշուած էր, «Օսմանեան իշխանութեան կողմէ հայերու սխտեմաթիկ բնաջնջումը պատմաբաններու միջազգային

հանրութեան կողմէ կը համարուի 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Փորթուկալի խորհրդարանը ցաւ կը յայտնէ հայերու ցեղասպանութեան զոհերու կապակցութեամբ՝ անոնց յիշատակը դիտարկելով որպէս ժողովուրդներու հաշտեցման եւ մարդու հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հական տարր:

## Սկսաւ Ռոպերթ Քոչարեանի Դատավարութիւնը



Երեւանի ընդհանուր իրաւասութեան Նոր Նորքի դատարանին մէջ՝ դատաւոր Դաւիթ Գրիգորեանի նախագահութեամբ, սկսաւ Ռոպերթ Քոչարեանի Մարտի 1-ի գործով դատավարութիւնը:

Քոչարեան ներկայ էր առաջին նիստին, իր փաստաբաններու խումբին հետ: Դատավարութեան սկիզբը Քոչարեանի պաշտպանները ինքնաբացառկի միջնորդութիւն ներկայացուցին դատաւոր Դաւիթ Գրիգորեան նկատմամբ:

Նոյն պահուն դատարանի մօտ բողոքի ցոյց կազմակերպած էին Ռոպերթ Քոչարեանի կողմնակիցները եւ հակառակորդները, որոնց միջեւ տեղի ունեցան բախումներ:

Մայիսի 18-ի դատաւորը ընդունելով Արցախի ներկայ եւ նախկին նախագահներու՝ Բակօ Սահակեանի եւ Արկաղի Ղուկասեանի անձնական երաշխաւորութիւնը որոշեց ազատ արձակել մեղադրեալ Քոչարեանը: Սակայն կարճ ժամանակ ետք վերաքննիչ քրէական դատարանը որոշեց բեկանել Առաջին Ատեանի դատաւորի որոշումը եւ Քոչարեան դարձեալ վերադարձաւ մեկուսարան, ուր կը մնայ մինչեւ օրս:

## Հայաստանի Սէջ Կայացաւ «Միտքերու Գագաթնաժողովը»

Ամէն տարի Ֆրանսայի Շամոնի քաղաքին մէջ տեղի ունեցող «Միտքերու Գագաթնաժողովը»-ը (Summit of Minds) այս տարի կայացաւ Հայաստանի մէջ, դառնալով առաջին երկիրը, որ կը հիւրընկալէ այս միջոցառումը՝ Շամոնիէն դուրս:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի նախաձեռնութեամբ, Յունիս 8-ին եւ 9-ին, Դիլիջանի մէջ տեղի ունեցած «Միտքերու Հայկական Գագաթնաժողովին» մասնակցելու համար Հայաստան ժամանած էին հեղինակաւոր քաղաքական եւ տնտեսական գործիչներ: Անոնց շարքին էին Ֆրանսայի նախկին վարչապետ Դոմինիկ դը Վիլյալէն, ԱՄՆ նախագահ Պարաք Օպամայի անվտանգութեան հարցերով խորհրդական, զօրավար Ջէյմս ձոնս, Միջազգային մշակութային համագործակցութեան հարցերով Ռուսաստանի նախագահի յատուկ



# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ



# Տարուայ Հայկական Գլխաւոր Իրադարձութիւնները

ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյ, աշխարհահռչակ Google ընկերութեան վաճառքի եւ արտադրութեան ղեկավար Թէյտ Սաուդեր եւ ուրիշներ:

Նախագահը Սարգսեան եզրափակիչ իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնելով բոլոր մասնակիցներուն ըսաւ.- «Ես շատ բան սորվեցայ զազաթաթողովէն, սակայն հիմնական երեք հարցերը կը շարունակեն մնալ. Ի՞նչ տեղի կ'ունենայ, Ի՞նչ ընել եւ Ի՞նչպէս ընել:

Միակ բանը, որուն հաստատ համոզուած եմ, հետեւեալն է. մենք կարիք ունինք տապանի, որ, հաւանաբար, «Միտքերու Գազաթաթողովն» է, որ կրնայ փրկել աշխարհը, քանի որ աշխարհը դարձած է շատ աւելի բարդ: Այդ բարդութիւնը աւելին է, քան որեւէ արհեստական բանականութիւն կրնայ լուծել: Մենք մարդկային միտքերու գազաթաթողովի, ինչպէս նաեւ ձեզի պէս մարդոց կարիքը ունինք՝ լուծուածներ գտնելու համար»:

Համաժողովի ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեան: Ան իր խօսքին մէջ յատկապէս ըսաւ.- «Երբ ծովի դար էր՝ մենք ծով չունէինք, երբ նաւթի դար էր՝ մենք նաւթ չունէինք, երբ բախտի դար էր՝ մենք բախտ չունէինք, երբ ուժի դար էր՝ մենք ուժ չունէինք եւ ահա եկել է մտքի դարը ու որեւէ կասկած չկայ, որ մենք ունենք միտք»:

## Ստեփանակերտի Մէջ Կայացաւ Համահայկական Խաղերու Բացման Հանդիսաւոր Արարողութիւնը



Օգոստոս 6-ի երեկոյեան, Ստեփանակերտի Ստեփան Շահումեանի անուան հանրապետական մարզադաշտին վրայ, տեղի ունեցաւ Համահայկական ամառնային եօթներորդ խաղերու հանդիսաւոր բացման արարողութիւնը:

Համահայկական ամառնային եօթներորդ խաղերու բացման գեղարուեստական ծրագիրը եւ մարզական շքերթը դիտելէ ետք վարչապետ Նիկոլ Փաշինեանը հանդէս եկաւ ելոյթով, որուն մէջ ան մասնաւորապէս ըսաւ. «Միեւնոյն հայրենակիցներ Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում, այսօր մեր հայրենիքում տօն է, որովհետեւ մեր ժողովրդի հազարաւոր զաւակներ՝ Եւրոպայից, Ասիայից, Աւստրալիայից, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներից մէկտեղուել են հայութեան արժանապատուութեան միջնաբերդ Արցախում, եւ մենք վայելում ենք միասին լինելու, իրար հետ լինելու երջանկութիւնը»:

Արցախի նախագահ Բակո Սահակեան իր ելոյթին մէջ յայտարարեցզ  
«Այսօր չիշարժան օր է Արցախի կեանքում. Համահայկական ամառնային խաղերն առաջին անգամ անց են կացւում մեր հանրապետութիւնում: Ստեփանակերտում են գտնւում մայր Հայաստանից, Արցախից եւ Սփիւռքից բազմաթիւ մարզիկներ ու մարզիչներ, երկրպագուներ ու պարզապէս մարդիկ, ովքեր սիրում են սփորթը: Այստեղ չկան հիւրեր, այստեղ բոլորն իրենց տանն են, իրենց պապենական օճախում: Բարի

գալուստ Արցախ աշխարհէ:

Համահայկական ամառնային եօթներորդ խաղերը տեղի ունեցան Հայաստանի եւ Արցախի մէջ: Խաղերուն մասնակցեցան պատուիրակութիւններ 35 երկիրներէ 161 քաղաքէ: Ընդհանուր առմամբ մարզական պատուիրակներու թիւը հասաւ մօտ 5300-ի: Համահայկական խաղերու փակման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Օգոստոս 17-ին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ:

## Հայաստան Կը Դատուի Մամուլի Ազատութեան Գծով Յառաջընթաց Արձանագրած Հազուագիտ Երկիրներէն Մին

«Ազատութեան Տուն» (Freedom House) ամերիկեան հետազօտական հեղինակաւոր կազմակերպութիւնը հրապարակեց աշխարհի մէջ մամուլի ազատութեան վերաբերեալ զեկոյց մը, որուն մէջ կը քննարկուի նաեւ Հայաստանի մէջ մամուլի ազատութիւնը:

Զեկոյցը արձանագրած է որ, ամբողջ աշխարհի մէջ մամուլի ազատութեան սահմանափակման միտումներ կան, սակայն այդ բացասական միտումներուն զուգահեռ՝ Freedom House-ը արձանագրած է դրական փոփոխութիւններ աշխարհի հինգ երկիրներու մէջ: Այս երկիրները ներկայացուած են «խաւարի մէջ ուղղորդող լոյսեր» ենթավերնագրի տակ: Անոնք են Եթովպիան, Մալիպիան, Էկուատորը, Կամպիան եւ Հայաստանը:

«Մամուլը եւ ժողովրդավարութիւնը» վերնագիրը կրող հատուածին մէջ զեկոյցը մանրամասն անդրադարձած է Հայաստանի մէջ յեղափոխութեան ընթացքին մամուլի դերակատարութեան: Ըստ Freedom House-ի, թէեւ յեղափոխութեան ընթացքին խոշոր հեռատեսիլի ընկերութիւնները սկզբնական շրջանին լուծութիւն կը պահպանէին երկրին մէջ տեղի ունեցող ցոյցերու վերաբերեալ, սակայն անկախ լրատուամիջոցներու փոքրիկ զանգուած մը կրցաւ ապահովել խորքային լրատուութիւն՝ ներառեալ ուղիղ հեռարձակումներն ու ընկերային մետիայի հմուտ կիրառումը:

## Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Այցելեց Լոս Անճելըս



Լոս Անճելոս քաղաքն ու շրջանի հայութիւնը պատմական օր մը ապրեցաւ Կիրակի, Սեպտեմբեր 22, 2019-ին: Հայաստանի թաւշեայ յեղափոխութեան առաջնորդ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ նշուեցաւ Հայաստանի անկախութեան 28րդ տարեդարձը: Վարչապետ Փաշինեանի եւ իր տիկնոջ Աննա Յակոբեանի երկօրեայ աննախաընթաց

▶▶▶▶

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ



# Տարուայ Հայկական Գլխավոր Իրադարձութիւնները

այցելութեան առթիւ տեղի ունեցած բազմաթիւ միջոցառումները, որոնց գագաթնակէտն էր «Կրանտ Փարք» զբօսայգիի մէջ տեղի ունեցած հաւաքը, բազմահարկ ժողովուրդի եւ տեղական քաղաքական անձնաւորութիւններու մասնակցութեամբ:

Նիկոլ Փաշինեան իր ծաւալուն ելոյթին մէջ յայտնեց, որ ժամանակն է նորովի խօսիլ Սփիւռքի հետ, նորոգել Հայաստան Սփիւռք կապերը: «Մենք յոյս ունենք, որ ինչպէս Սփիւռքը կանգնեց Հայաստանում տեղի ունեցող քաղաքական յեղափոխութեան կողքին, այնպէս էլ Սփիւռքը կը կանգնի Հայաստանում տեղի ունեցող տնտեսական յեղափոխութեան կողքին»:

«Այս վճռական պահին ես յոյս ունեմ, որ Սփիւռքը, յատկապէս Սփիւռքի երիտասարդութիւնը, երիտասարդ գործարարները, startup-եր ստեղծող մեր հայրենակիցներն իրենց ուշադրութիւնը կը կենտրոնացնեն Հայաստանի վրայ եւ իրենց գործունէութեամբ կը տեղափոխուեն Հայաստանի Հանրապետութիւն՝ իրենց նախնիների եւ իրենց հայրենիք», ըստՄԼ Փաշինեան իր ելոյթին մէջ:



Երեւանի մէջ Տեղի Ունեցաւ Տեղեկատուական Արհեստագիտութիւններու Համաշխարհային Ժողովը



Հոկտեմբեր 7-ին Երեւանի Կարէն Տեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ Տեղեկատուական արհեստագիտութիւններու (թեքնոլոժիներու) 23-րդ համաշխարհային համաժողովի (WCIT 2019) պաշտօնական բացման արարողութիւնը:

Երեւանեան համաժողովին ներկայ եղան աւելի քան 2500 մասնագէտներ՝ 70 երկիրներէ: Բացման ելոյթով հանդէս եկաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ ողջունելով համաժողովի մասնակիցները մասնաւորապէս ըսաւ. «Մեզ համար մեծ պատիւ է եւ հաճոյք այսպիսի համաժողով հիւրընկալելը, որովհետեւ այն շատ լաւ առիթ է ձեզ եւ ձեր միջոցով միջազգային հանրութեան հետ խօսելու Հայաստանը բարձր արհեստագիտական արդիւնաբերական երկիր դարձնելու մեր ռազմավարութեան մասին, եւ ես յոյս ունեմ՝ մեր երկրում անցկացրած մի քանի օրերի ընթացքում դուք կը զգաք այն նոր ուժն ու մթնոլորտը, որ մեր երկիրը համակել է նախորդ տարի Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թաւաշէտ, ժողովրդական յեղափոխութիւնից յետոյ:

Ուզում եմ ընդգծել, որ այդ յեղափոխութիւնը տեղի ունեցաւ ապակեդրոնացման միջոցով, ինչի արդիւնքում Հայաստանը համաշխարհային քարտէզի վրայ դարձաւ ժողովրդավարութեան կեդրոն: Քաղաքական յեղափոխութիւնից յետոյ այժմ մենք գտնուում ենք տնտեսական յեղափոխութեան շրջափուլում, որը նոյնպէս տեղի է ունենում ապակեդրոնացման շնորհիւ, որովհետեւ մենք տնտեսական յեղափոխութեան հիմնական միջոց համարում ենք իւրաքանչիւր քաղաքացու անհատական ջանքը, անհատական նախաձեռնութիւնը, որը նա անում է ոչ թէ կառավարութեան հրահանգով, այլ իր անձնական որոշումներով, իր անձնական նպատակներով եւ ձգտումներով»:

Համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած էր նաեւ հեռուստաստղ Քիմ Քարտաշեանը:

## Ամերիկեան Գոնկրէը Ճանցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Հոկտեմբեր 29-ին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը վաւերացուց թիւ 296 բանաձեւը, որ կու գար ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը:

Բանաձեւին կողմ քուէարկեցին 405, դէմ 11 եւ ձեռնպահ 3 գոնկրէսականներ:

2000 թուականէն սկսեալ չորրորդ անգամ ըլլալով Հայոց Ցեղասպանութեան բանաձեւ կը ներկայացուէր Ներկայացուցիչներու Տունէն ներս, սակայն առաջին անգամ ըլլալով քուէարկութեան կը դրուէր



## Երեւանի Մէջ Կայացաւ ԵԱՏՄ Երկիրներու Գագաթի Ժողովը

Ութ երկիրներու ղեկավարներու մասնակցութեամբ Հոկտեմբեր 1-ին Երեւանի մէջ կայացաւ ԵԱՏՄ գագաթի ժողովը: Նախագահական նստաւայրին մէջ տեղի ունեցած նիստին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած էին 8 պետութիւններու առաջնորդներ:

Ժողովին կը մասնակցէին Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին, Պելաուուսիոյ նախագահ Ալեքսանդր Լուբաշէնքօ, Ղրղզստանի նախագահ Սորոնուպա Ժէենպեկով եւ Ղազախստանի նախագահ Քասիմ Ժոմարթ-թոքաեւ: Մոլտովայի նախագահ Իկոր Տոտոն նիստին կը մասնակցէր՝ որպէս դիտորդի կարգավիճակի մէջ գտնուող երկրի ղեկավար:

Որպէս նախագահող երկիր, Հայաստանի կողմէ հրաւիրեալ երկրի ղեկավարի կարգավիճակով կը մասնակցէին նաեւ Իրանի նախագահ Հասան Ռոհանի եւ Սինկափուրի Հանրապետութեան վարչապետ Լի Սյեն Լուն: Նիստի բացման խօսքովին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան շեշտեց որ, Երեւանեան նիստը բացառիկ է այն առումով, որ կը մասնակցին Իրանի եւ Սինկափուրի ղեկավարները, եւ փաստօրէն, Միութիւնը կ'ընդլայնէ այլ երկիրներու հետ համագործակցութիւնը:

Նիկոլ Փաշինեանը յայտնեց, որ արդէն աւարտած են Սինկափուրի հետ բանակցութիւնները: Ստորագրուած է ԵԱՏՄ-ի, անոր անդամ երկիրներու եւ Սինկափուրի Հանրապետութեան միջեւ Ազատ առեւտուրի մասին հա-համաձայնագիրը:

Այս առթիւ տեղի ունեցաւ առանձին հանդիպում նախագահ Փութինի եւ վարչապետ Փաշինեանի միջեւ:

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԻԳԷՆ ԵՒ ՍԱԼԲԻ ՄԱՆԿՐԵԱՆ



# Տարուայ Հայկական Գլխաւոր Իրադարձութիւնները



ընդհանուր նիստին առջեւ: Գոնկրէսական Ատամ Շիֆ, որ Բանաձեւի հեղինակն էր, յայտարարեց, որ այս պահը արդէն իսկ ուշացած էր:

Դեկտեմբեր 12-ին, Միացեալ Նահանգներու Մերակոյտը հետեւելով Ներկայացուցիչներու Տան օրինակին միաձայնութեամբ հաստատեց թիւ 150 բանաձեւը, փաստօրէն ձանձնալով Հայոց Ցեղասպանութիւնը:

Հակառակ Գոնկրէսի երկու Պալատներու որոշումներուն վարչակազմը՝ Պետական Գրասենեակի խօսնակի միջոցաւ եկաւ յայտարարելու թէ, իրենց մօտ չէ փոխուած վերաբերմունքը՝ Ցեղասպանութեան նկատմամբ:

Միւս կողմէ, Թուրքիա հակադարձելով Գոնկրէսի որոշումներուն, սպառնաց փակել իր տարածքին գտնուող Ամերիկեան ռազմականները:

## Հայաստանի Կառավարութեան Վարկանիշը Կը Շարունակէ Բարձր Մնալ

Տարուայ ընթացքին Միջազգային Հանրապետական Հիմնարկի հրապարակեց Հայաստանի հանրային կարծիքին նուիրուած երկու հարցախոյզեր, որոնք եկան հաստատելու որ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած կառավարութեան վարկանիշը կը շարունակէ բարձր մնալ:

Դեկտեմբերին հրապարակուած հարցախոյզի համաձայն, բնակչութեան 76 տոկոսը դրական կը գնահատէ վարչապետի գրասենեակի աշխատանքը, իսկ 63 տոկոսը գոհ է Ազգային ժողովի աշխատանքէն: Հայաստանցիներու մեծ մասը նաեւ լաւատես է երկրի ապագայի վերաբերեալ եւ կը համարեն, որ երկրի զարգացումը կ'ընթանայ ճիշդ ուղիով:

Քաղաքացիներու 30 տոկոսը կառավարութեան ամենամեծ յաջողութիւնը կը նկատէ եղծանումի (քորուփցիայի) դէմ պայքարը, 19 տոկոսը՝ մարդոց հոգեբանական վիճակի բարելաւումը, իսկ 13 տոկոսը՝ ժողովրդավարութեան հաստատումը:

## Սահակ Եպիսկոպոս Մաշալեան Ընտրուեցաւ Պոլսոյ Հայոց 85-րդ Պատրիարք

12 Տարուան սպասումէ ետք Պոլսոյ նուիրապետական աթոռը նոր գահակալ ընտրուեցաւ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը, ստանալով Ազգային պատգամաւորական ժողովի ներկաներու մեծամասնութեան ձայները:

Սահակ սրբազանը ուրախութեամբ նշեց, որ Թուրքիոյ հայութիւնը վերջապէս հայր ունեցաւ: Ան երախտագիտութիւն յայտնեց այս ճանապարհին աւանդ ունեցած բոլոր անձանց, շնորհակալութիւն յղեց Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ թրքական իշխանութիւններուն՝ նախագահ Ռեճեպ Թայէպ Էրտողանին, ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուին եւ Պոլսոյ նահանգապետ Ալի Ենրլիքայիին:

Նորընտիր պատրիարքի խօսքերով, այսպիսով հայ համայնքի համար նոր փուլ կը սկսի՝ իսաղաղութեան եւ միասնութեան շրջան:



Միւս կողմէ սակայն, Թրքական խորհրդարանի Հայ անդամ՝ Կարօ Փալլան յայտարարեց, որ ինք չընդունիր նոր Պատրիարքը՝ որպէս իրը, քանի որ թրքական իշխանութիւնները սահմանափակած էին թեկնածու եկեղեցականներու թիւը:

## Հայաստան Ժամանց Արդիական Կործանիչներու Առաջին Խմբաքանակը



Դեկտեմբերի վերջին օրերուն Հայաստան բերուեցան արդիական նոր կործանիչներ: Գիւմրիի օդակայանին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեանին ներկայացուեցան Հայաստան բերուած Սու-30ՄՄ բազմագործառնոցթափային գերժամանակակից օդանաւերը:

Վարչապետը յայտարարեց, որ այդ օդանաւերը տարուայ գլխաւոր ձեռքբերումն են. «Այսօր շատ կարեւոր օր է մեզ համար, որովհետեւ ժամանուած են մեր այս տարուայ գլխաւոր ձեռքբերումը համարուող «ՍՈՒ-30ՄՄ» մակնիշի գերժամանակակից բազմագործառնոցթափային ինքնաթիռներ, որոնց ձեռքբերման մտադրութեան մասին դեռ նախորդ տարի էինք յայտնել: Այս ձեռքբերումը շրջադարձային նշանակութիւն ունի Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան, մեր ժողովրդի ապահովման գործում»:

Թէ քանի օդանաւ ձեռք բերուած է, յայտնի չէ: Օդակայանին մէջ կայանուածները չորս հատ էին: Օդանաւերու առաջին թռիչքներն իրականացուցուցին ռուս օդաչուները: Վարչապետը Պաշտպանութեան նախարարի հետ ծանօթացան անոնց հնարաւորութիւններուն:

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԻԿ. ՖԼՈՐԱ ՏՈՒՆԱՅԵԱՆՑ







**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԲԱՐԵՔԱՍՏԻԿ ԱՌԻԹՆԵՐՈՎ Կ՛ՈՂՁՈՒՆԵՆՔ ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ, ՄԱՂԹԵԼՈՎ ՈՐ 2020 ՏԱՐԻՆ ԻՐԵՆ ՀԵՏ ԲԵՐԷ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ, ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՐՅԱԽԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՃԱՆԱԶՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՐԴԱՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՈՐ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏԻՆ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ ՊՈՅԱՄԵԱՆ**

# Ազգայնականութիւն եւ Համաշխարհայնացում ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Տարեվերջի մեր այս խորհրդածութիւնները սկսինք հարցումով մը: Եթէ ճամբան քալած ժամանակը օտարի մը պատկանող մեծ գումար պարունակող դրամապանակ մը գտնես, կը վերադարձնես տիրոջը, թէ՞ կը գրպանես: Կրնաք դադար մը առնել եւ լրջօրէն մտածել այս մասին եւ կամ շարունակել ձեր ընթերցումը եւ իմանալ մեր պատասխանը:

Հաւաքականութեան մը մէջ, որ քան շատ ըլլան օտարին դրամապանակը վերադարձնողները, այնքան աւելի միակամ, ամուր եւ յառաջդիմած է այդ հաւաքականութիւնը, որովհետեւ անոր ամէն մէկ անդամը գիտակից ու նախանձախնդիր է նաեւ ընդհանուրի շահին: Իսկ որքան շատ ըլլան գրպանողները, այնքան աւելի պառակտուած, խոցելի եւ նախնական է այդ հաւաքականութիւնը, որովհետեւ ամէն մէկ անձ կը մտածէ միայն իր շահին մասին, նոյնիսկ իր ազգակիցին իրաւունքը չափշտակելու եւ անոր վնաս հասցնելու գնով: Ուրիշին դրամապանակը գրպանելը ճարպիկութիւն սեպոյղը, պիտի ուզէ՞ր, որ իր կորսնցուցած դրամապանակը ուրիշ ճարպիկ մը գրպանէր:

Հարցում մը եւս տանք: Ի՞նչպիսի հաւաքականութիւն մըն ենք մենք: Կ'արժէ, որ այս հարցումը հրապարակային լուրջ քննարկումներու արժանացնենք, որպէսզի երեւան հանենք մեր ազգային դրական եւ ժխտական յատկանիշները: Այդ ընելով, մենք պիտի կարենանք զարգացնել դրականը եւ նուազեցնել ժխտականը:

Դարձեալ հարցում մը: Ի՞նչն է, որ մեզ կը մղէ այս խորհրդածութեանց: Ուշադիր ընթերցողը վերի խորագրին նայելով, արդէն կուսահած պէտք է ըլլայ մեր մտահոգութիւնը: Համաշխարհային նոր համակարգի մը կազմաւորման փուլին մէջն ենք եւ եթէ ազգովին ճիշտ չկողմնորոշուինք, ապա հետեւանքները կրնան աղետալի ըլլալ: Ուրեմն, այս յօդուածով մենք պիտի ջանանք պարզել մեր պատկերացումը համաշխարհային զարգացումներու մասին եւ ատոր լոյսին տակ կատարել առաջարկներ, որոնք կրնան օգտակար ըլլալ մեզի, ճիշտ կողմնորոշուելու համար:


## Համաշխարհային Պատմութեան Կարեւորագոյն Եղելութիւններ եւ Մենք

Երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք համաշխարհային պատմութեան վրայ, կրնանք առանձնացնել մի քանի եղելութիւններ, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան համաշխարհային նոր համակարգերու զարգացման մէջ: Անոնցմէ են Քրիստոնէութեան տարածումը 4րդ դարէն սկսեալ, Մասնատկան կրօնքի տարածումը 7րդ դարէն սկսեալ, սպագրութեան գիւտը 15րդ դարուն եւ անոր հետ առնչուած վերածնունդի շարժումը, եւ վերջապէս համացանցի գիւտը եւ անոր յառաջացուցած շարժումը վերջին յիսուն տարիներուն:

Չժանրաբեռնելու համար մեր յօդուածը, շատ համառօտակի նշենք, որ հայութիւնը ի՞նչպէս առերեսուեցաւ այս դէպքերուն հետ:

Քրիստոնէութիւնը որպէս պետական պաշտօնական կրօնք ընդունող առաջին պետութիւնը եղանք: Ի՞նչու: Որովհետեւ անոր մէջ տեսանք Սասանեան-Մագդէական այլասերման վտանգը դիմագրաւելու մեր գէնքը: Բայց երբ քրիստոնէական կրօնքի համաշխարհայնացումը սպառնաց մեր ինքնութեան պահպանման, գիրերու գիւտով «ազգայնացուցինք» զայն: Ու կերտեցինք մեր «Ոսկեդար»ը: Այս զարգացումներու յայտնի դէմքերն են Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ Գ թագաւոր, Մեսրոպ Մաշտոց, Սահակ կաթողիկոս եւ վաւաճապուհ թագաւոր, եւ Արշակունիներու զօրավիգ Մամիկոնեան տոհմը:

Երբ 7րդ դարուն Մասնատկան արաբները, համաշխարհային ուժ դառնալով գրաւեցին նաեւ Հայաստանը եւ սպառնացին մեր ինքնութեան, Բագրատունեաց տոհմն էր, որ համակեցութեան լեզու գտաւ անոնց հետ, մինչ քրիստոնէական ջատագով Մամիկոնեանները նահանջեցին: Արաբական սպառնալիքի նահանջով, աճեցաւ քրիստոնէայ Բիւզանդիոնի ճնշումը, բայց վրայ հասած Սելճուքեան արշաւանքներուն պատճառաւ, հայութեան կորիզը փոխադրուեցաւ Կիլիկիա, ուր Ռուբէնեան թագաւորութեան միջոցաւ, հայութիւնը իր բախտը կապեց Մասնատկաններուն դէմ խաչակրական արշաւանքներ սկսած Քրիստոնէայ Եւրոպայի հետ,



մինչեւ թագաւորութեան անկումը՝ 1375-ին:

«Վերածնունդ»ի շարժումին (1300-1600) տարածման խթանիչը՝ սպագրութեան գիւտը (1439) հող պատրաստեց կրօնական, քաղաքական, գիտական, մշակութային եւ այլ մարզերու մէջ բարեկարգութիւններու եւ յեղափոխութիւններու ծագման, անգամի մը համար եւս վերափոխելով համաշխարհային համակարգը: Որպէս գլխաւոր օրինակներ կարելի է նշել Ամերիկայի «գիւտը» (1492), Մարթին Լուտերի Բողոքական Բարեկարգութիւնները (1517), արդի գիտութեան հայր՝ Կալիլէօյի խթանած շարժումը (1632) եւ աւելի ուշ՝ Ֆրանսական յեղափոխութիւնը (1789): Գրեթէ միաժամանակ, 1453-ին Կոստանդնուպոլսոյ անկումով սկսած եւ 16րդ-17րդ դարերուն Եւրոպայի սարսափեցնող Օսմանեան կայսրութեան ասպատակութիւնները, իրենց ծանրակշիռ հետեւանքները ունեցան շատ մը ազգութիւններու վրայ, ներառեալ անշուշտ հայութեան: Ֆրանսական յեղափոխութեան խթանած ազգայնականութեան զարգացման տարածումը նպաստեց ազգ-պետութիւններու ստեղծման, ինչպէս օրինակի համար՝ Գերմանիայի եւ Իտալիայի միավորումները: Այս շրջանին, Միխիթար Սեբաստացիի (1676-1749) գլխաւորած Միխիթարեան շարժումն էր, որ հայութեան մէջ վերարծարեց ազգայնական գաղափարները, Մեսրոպ Մաշտոցի նման, իւրացնելով ժամանակաշրջանի լաւագոյն զարգացմանը ու զանոնք ներմուծելով հայութեան մէջ, այդպիսով նպաստելով մեր Զարթոնքին: Եթէ չըլլար Միխիթարեան շարժումը, վտանգուած պիտի ըլլար հայութեան ապագան:

Մօտ հինգ տասնամեակներէ ի վեր համացանցի գիւտի յառաջխաղացումը, կոչուած է ունենալու նոյն եւ աւելի մեծ տարողութեան զարգացումներ, քան այն ինչ, որ սպագրութեան գիւտը ունեցաւ եւ շատ աւելի արագ ընթացքով: Պերլինի Պատի քանդումով (1989-ին) երկու Գերմանիաներուն վերամիավորումը, ինչպէս նաեւ Սովետական Միութեան փլուզումը (1991), մեկնակէտը կարելի է համարել համաշխարհային նոր համակարգի մը ստեղծման գործընթացին: Այս գործընթացի արդիւնքներէն մին հանդիսացաւ Հայաստանի նորանկախ Հանրապետութիւնը: Բայց որպէսզի ան կարենայ յարատեւել, ապա պէտք է գինուի իր ինքնութիւնը ապահովող «գէնքերով», կուլ չերթալու համար համաշխարհայնացման գործընթացին: Մեր կարծիքով, նորօրեայ Զարթոնքի անհրաժեշտութիւնը կայ, որ պէտք է խթանուի ժողովուրդի լայն խաւերուն մէջ ազգայնականութեան առողջ զարգացման տարածմամբ եւ ընկալմամբ: Հետաքրքրական է նկատել, որ ոչ միայն մեզ նման փոքր պետութիւններ, այլ նոյնիսկ մեծերը լծուած են այդ աշխատանքին: Կը բաւէ հետեւիլ Տանըրտ Թրամբի (ԱՄՆ), Ժի Ժինփինկի (Չինաստան) եւ Վլատիմիր Փութինի (Ռուսիա) քայլերուն, համոզուելու համար ազգայ-



# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ԱՐԺ. Տ. ՏԱԹԵՒ ՔՀՆՅ. ԵՒ ԵՐԷՑԿԻՆ ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ

# Ազգայնականութիւն եւ Համաշխարհայնացում

նականութեան գաղափարի խաղաղացած կարեւոր դերին: Եթէ փոքրերուն մտահոգութիւնը ինքնապաշտպանական է, ապա մեծերունը աւելի ծաւալողական նպատակներ կը հետապնդէ՝ գինուորական, հաղորդակցական, տնտեսական եւ այլ միջոցներով տիրապետել միւս ազգութիւններուն վրայ: Իրենց նպատակներուն իրագործման համար, անոնք «վերահսկելի» բռնկումներ կը ստեղծեն աշխարհի տարածքին: Բայց եթէ յանկարծ «վերահսկելի» խախտի ու հսկողութեան սահմաններէն դուրս գայ, ապա հաւանականութիւնը մեծ է, որ պատճառ դառնայ Երրորդ Համաշխարհային պատերազմի բռնկման: Բոլորս ալ գիտակից ենք, որ ինչ ահաւոր վնասներ կրեցինք Համաշխարհային Առաջին եւ Երկրորդ պատերազմներու ընթացքին: Հետեւաբար, պէտք է լրջօրէն մտահոգուինք Երրորդի հաւանական հետեւանքներով եւ ըստ այնմ պատրաստուինք:

Վերելի ուրուագիծի հիման վրայ, յստակ կը դառնայ, որ ազգովին պէտք է լծուինք ուրիշին կորսնցուցած դրամապանակը վերադրձնող հաւաքականութիւն դառնալու աշխատանքին, որ պիտի ամրապնդէ ազգային շահը ամէն տեսակի հատուածական շահերէն զերազատելու մեր հաւաքական գիտակցութիւնը, այդպիսով նպաստելով մեր գոյութեան ապահովման եւ ամրակայման, որպէս ինքնորոշ ազգ: Եթէ այդպէս շարժած ըլլայինք նախա-Եղեռնեան շրջանին, մեր պատմութիւնը տարբեր ընթացք պիտի ունենար: Թէեւ «եթէ»ներով պատմութիւնը վերահիւսելը իրականութիւնէն բան պիտի չփոխէ, բայց եւ այնպէս այդ աշխատանքը կրնայ նպաստել անկէ դասեր քաղելու եւ ապագային նոյնատիպ սխալներէ խուսափելու: Հետեւաբար, կ'արժէ այստեղ արագ վերաքաղ մը ընել մեր մօտիկ անցեալի պատմութեան:

## Մեր Սօսիկ Անցեալի Պատմութիւնը

Ազգայնականութեան գաղափարի տարածումը Եւրոպայի մէջ 19-րդ դարուն, նպաստեց այդ ցամաքամասի «հիւանդ մարդ»ուն՝ Օսմանեան կայսրութեան կորստման գործընթացին: Նշենք միայն Յունաստանի (1832) եւ Պոլիարիոյ (1878) անկախութեան օրինակները: Քաջալերուած այդ օրինակներէն, կայսրութեան բաղկացուցիչ միւս ազգութիւններն ալ սկսան գլուխ բարձրացնել, ներառեալ հայութիւնը: Ասոր ի տես, կայսրութեան իշխանական վերնախաւի մօտ բնականաբար աճեցաւ իրավիճակը (status quo) պահելու ինքնապաշտպանական բնազդն ու հակազդեցութիւնը: Պատահականութեան պէտք չէ վերագրել, որ 19-րդ դարի վերջին քառորդին մէջ հիմնուեցան Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը, Հ.Յ. Դաշնակցութիւնը, Իթիսափաթ վէ Թերաքըր կուսակցութիւնը, ինչպէս նաեւ Սիոնական կազմակերպութիւնը: Հայերն ու հրեաները կը ձգտէին ունենալ իրենց պետութիւնները, իսկ Թուրքերն ալ կ'ուզէին պահպանել իրենց ունեցածը: Հակառակ անոր, որ մենք կը ներկայացնէինք կայսրութեան սիրտը համարուող Փոքր Ասիոյ տարածքի բնակչութեան 20%-ը, բայց մեր թիւին համապատասխան ուժ չէինք ներկայացնէր, որովհետեւ տարադրուած էինք, գէնք կրելու իրաւունքէն զրկուած էինք, մեր վերնախաւը սերտաճած ըլլալով Թուրք վերնախաւին հետ, հետամուտ էր իր դասակարգային շահերու հետապնդման, մեր ժողովուրդի մեծամասնութիւնը կը բաղկանար դարերու լուծի տակ ընկճուած, իր օրապահիկով մտահոգուած գիւղացիներէ, եւ այլ նուազ կարեւոր պատճառներ: Ուրեմն, մեր ցանկութիւնը մեր սեփական ուժերով իրագործելու անկարող ըլլալով, մենք ակնկալեցինք «Քրիստոնեայ Եւրոպայի» օգնութեան հասնիլ մեր նպատակին: Սկսանք կազմակերպել ցոյցեր եւ ասհարհալի արարքներ, մէկ կողմէ հրահրելու համար մեր ժողովուրդը, որ ձգտի իրավիճակի փոփոխութեան եւ միւս կողմէ ալ սպասելով Եւրոպայի օգնութեան: Մասունի 1894-ի եւ Զէյթունի 1895-96-ի ապստամբութիւնները եւ անոնց հետեւանքները ցոյց տուին, որ մեր հետապնդած նպատակները այդքան ալ իրականալի ծրագիրներ չէին, որովհետեւ հայութեան համախումբ ըմբոստացումը կարելի պիտի չըլլար իրագործել: Հարկ էր վերատեսուութեան ենթարկել անոնց իրագործելիութիւնը: Այս մասին եղած բուռն քննարկումները նոյնիսկ պատճառ դարձան ՄԴՀԿ-էն եւ ՀՅԴ-էն ներս պառակտման շարժումներու: Մինչ ՄԴՀԿ-ը ընդհանրապէս դադրեցուց ասհարհալի գործունէութիւնը, ՀՅԴ-ն աւելի բուռն կերպով լծուցաւ անոր մինչեւ Իթիսափաթ վէ Թերաքըրի յաջողցուցած 1908-ի յեղափոխութիւնը: Այս յեղափոխութիւնը փոշի ցանց մեր



վերնախաւի աչքերուն, որ տարուած օրուան իր շահերէն եւ Օսմանեան կորստի դարանէն ներս քանի մը աթուռ ունենալու խաչքէն, անտեսեց նախորդ 20 տարիներու գործունէութիւնէն քաղուած դասերը, մեզի սպառնացող վտանգները, ինչպէս նաեւ հնչեցուող գոլուշացումները: Վրայ հասաւ Համաշխարհային Ա. Պատերազմը եւ Թուրքը հայերու ցեղասպանութեամբ լուծեց իր ազգ-պետութեան հիմնադրութեան հարցը:

Համաշխարհային նոր պատերազմի մը պարագային, Թուրքը պիտի չուզէր աւարտին հասցնել իր կէս մնացած գործը՝ փան-թուրանական ծրագիրը: Այս հարցումին պատասխանը ստացանք երկու շաբաթներ առաջ, լուրերէն տեղեկանալով, որ անոնք Հայաստանի վրայ յարձակման ծրագիր մշակած են 2001-ին: Այս լուրը բաւական է բոլորիս մէջ արթնցնելու «մէկը բոլորին, բոլորը մէկին» ազգային հաւաքական գիտակցութիւնը, ամէն գնով պատրաստուելու դիմակայելու այդպիսի հաւանականութիւն մը:

## Մեր Ազգային Առաջնահերթութիւնը

«Մէկը բոլորին, բոլորը մէկին» ազգային հաւաքական գիտակցութեան ընկալումը պէտք է դարձնենք մեր առաջնահերթութիւնը, զայն ընդելուզելով մեր ապրելակերպին եւ գործելակերպին մէջ: Այդ պիտի ընենք առաջին հերթին մեր կրթական համակարգերէն ներս ներմուծելով համապատասխան ծրագիրներ: Այդ պիտի ընենք մեր մշակութային, հասարակական, քաղաքական, տնտեսական եւ այլ մարզերու գործունէութեան մէջ: Միայն այդ գիտակցութեան ընկալմամբ մենք պիտի յաջողինք դէմ դնել համաշխարհայնացման գործընթացի ժխտական երեւոյթներուն դէմ եւ օգտուիլ անոր բարիքներէն: Օրինակի համար, սոցիալական ցանցերը օգտագործել ազգային արժէքներ ջատագովելու եւ ոչ թէ օտարամօլ բարքեր տարածելու համար: Քաջալերել իրար-հասակացողութեան եւ ուժերու համալրման բարիքները ընդգէմ կեղծաւոր, բաժանարար եւ պառակտիչ գործունէութեան շարիքներուն: Քաջալերել «ամբողջ»ի, այսինքն ազգի գերագոյն շահերը հետապնդելու անհրաժեշտութիւնն ու հակառակութիւնը, ընդգէմ «մաս»ի, այսինքն հատուածի մը շահի ամէն տեսակի գայթակղութեանց: Ամէն մէկ հայի մտքին մէջ քանդակել «ամբողջ»ի յաւերժութեան գաղափարը, «մաս»ի ժամանցելիութեան փաստին դիմաց: Օգտագործել մեր առօրեայ անհրաժեշտութիւն դարձած smartphone-ը ոչ միայն հաճոյքի եւ ժամանցի համար, այլ նաեւ ուսման եւ դաստիարակական նպատակներու համար: Չարտօնել, որ այդ գործիքները բթացնեն մեր մտքերը, մեզ վերածելով գօմպիներու, այլ օգտագործել մեր մտքերու զարգացման եւ քննադատական մտածելակերպի աճին համար:

Մեր պատմութիւնը մեզի ցոյց տուած է, որ մեր ազգային առողջ բնազդով մենք յաջողած ենք հայացնել օտարածին Պարթեւները, Մամիկոնեաններն ու Բագրատունիները, որոնք մեծ ներդրում ունեցած են մեր յաւերժի երթին մէջ: Ինչը կ'արգիլէ Հայաստանի բնակիչ հային եւ սփիւռքահային, արեւելահային եւ արեւմտահային, անշահախնդիր ներդրումով եւ միասնական ուժերով նպաստելու մեր յաւերժի երթին:

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՄԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ




**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԳԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ,  
ՍՐՏԱԳԻՆ ԲԱՐԻ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ  
ՄԵՐ ԲՈՒՆՈՐ ՀԱՐԱՉԱՏՆԵՐՈՒՆ**

**ԹՈՂ 2020-Ը ԸԼԼԱՅ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ  
ՓԱՓԱՔՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԻ ՄԸ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ  
ՔԷՕՐՈՂԼԵԱՆ**





**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**PASADENA CITY PHARMACY, INC.**

*Medical - Supplies*

**Second Generation Pharmacy**

**COMPOUNDING CENTER**

MONDAY - FRIDAY 9:00 AM - 6:00 PM

**ABSOLUTELY LOWEST PRICES  
IN PASADENA**

***FREE DELIVERY***



We Accept Medi-Cal, Medi-Care  
and Most Insurances

**DIRAN JEREDJIAN, RPh  
DR. ANITA JEREDJIAN, Pharm D**

**684 EAST WASHINGTON BOULEVARD  
PASADENA, CALIFORNIA 91104**

**626-797-6661**

**FAX: 626-797-9415  
pasadenacitypharmacy@yahoo.com**

Ամանորեան Խոհեր

2019 Թուականը Իմ Տեսանկյունից

ԳԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

...«Ձախորդ օրերը ձմեռան նման կու գան ու կ' երթան...»  
ՋիվԱՆԻ

... ՃՇԴՈՒԱԾ է՝ Մեծերը չեն սխալում:

Նոր Տարի է, նոր սպասելիքներ, նոր յուզումներ, նոր՝ երջանկացած գոյգեր, եւ հաւանաբար՝ նոր հիասթափութիւններ նաեւ: Առերեւոյթ յաջող տարի էր՝ «Թաւշեայ Յեղափոխութեան» արդիւնքում ծնուած Նոր Հայաստանի երկրորդ տարին՝ 2019 թուականը:

Այնուհանդերձ, ինչ որ մի բան այնպէս չէ, չի ստացւում, չենք կարողանում մէկտեղուել, ուզում ենք միանգամից ամէն ինչ իմանալ, ունենալ, չենք հաւանում ուրիշի արածը, եւ միշտ մեզ թւում է, թէ մենք աւելի լաւ կարող էինք անել:

Մէկ վայրկեան մտովի գնացէք գրեթէ երկու տարի ետ եւ տեսէք թէ ինչպէս, ինչ ճանապարհով մեր վարչապետ Նիկոլ Փաշինեանը 8-10 համախոհներով Գիւմրիից սկսելով իր քայլարշաւը, ընդամէնը քսան օր յետոյ, համաժողովրդական պայքարի արդիւնքում, Նիկոլ Փաշինեանը Սերժ Սարգսեանին առաջարկեց հրաժարական տալ: Վերջինս, ի լուր աշխարհի, համաժողովրդական ճնշման արդիւնքում ստիպուած եղաւ, «մեղալի գալ» ու բարձրաձայնել՝ «Ես սխալ էի, դուք ճիշդ էք...»:

Աշխարհի պատմութեան մէջ իր տեսակի առումով միակը հանդիսացող իշխանափոխութեան այդ փառայեղ պատկերը ցնցեց աշխարհը՝ օրինակ դառնալով բազմաթիւ, հիմնականում մեզ նման փոքր-մոքր երկրների եւ պետութիւնների համար:

Այնպէս որ, սիրելի բարեկամներ, համբերել է պէտք, միայն թէ չ'ասէք թէ «Մասնորոշի ձէնը տաք տեղից է գալիս», - ո՛չ, այլպէս չէ, մենք էլ, ինչպէս եւ հարիւրաւոր հայ ընտանիքներ, 6 հոգով թխմուել ենք մէկ ննջարան ունեցող բնակարանում, հաց կերել Երեւանից բերուած մետաղեայ խոշոր արկղի վրայ ու քնել փողոցից բերուած բազմոցին:

Լրջմիտ հայեացքով նայելով մեր վարչապետի կատարած աշխատանքին, չենք կարող չտեսնել հայրենիքում իրականացուող բարեփոխումները: Ինչ է, կարծում էք դիւրին է քանդել Փտախտով (կոռու-պացուած) վարակուած ՄԻԱՊԵՏԱԿԱՆ (Ո՛չ մի դէպքում՝ Ազատ, Անկախ, - շեն. Ա.) երկրի ամրակուռ հիմերը: Ի՞նչպէս կարողացաք գրեթէ 30 տարի ստրկական վիճակում գոյատեւել առանց ձէն, ծպտուն հանելու, սիրելի հայաստանցիներ: «Թփրտացողներն» էլ, ինձնից լաւ գիտէք, հանգչում են Երեւանի գերեզմանոցներում:

Գրեթէ 30 տարի, մենք՝ սփիւռքահայերս ժպիտ չէինք տեսնում մեր ազգականների, բարեկամների դէմքերին: Շատ անգամ էլ զգուշանում էինք նրանց տուն այցելել գէթ մէկ բաժակ սուրճի շուրջ գրուցելու, եւ մեր ամբարուած կարօտն առնելու համար բաւարարում էինք նրանց հետ հանդիպել այս կամ այն սրճարանում կամ ռեստորանում:

Ես աչքովս եմ տեսել, թէ ինչպէս է ծերուկը «սողում» բեռնատար մեքենայի տակ՝ երանելի մի գլուխ սոխին տիրանալու համար. ինչպէս եւ երեսը ծածկ երիտասարդ կնոջը՝ աղբարկղի միջինը «քուշուշ» անելիս:

Մինչեւ հիմա էլ երազումս է գալիս երեք փոքրահասակ երեխաների մայր, իմ տնից մի քանի տուն վեր բնակուող բարեսէս տիկին Մէրին, որը մի անգամ տանս աղբը տանելիս, ինձ կանգնեցրեց ու թախանձալից տօնով ասաւ.

- Ինչի՛ էք էդքան հեռու տեղ գնում աղբը տանելու համար, պարոն Անասեան, էն էլ ձեր տարիքում: Դուք ամէն օր աղբը դրէք ձեր բակի էն խոշոր ծառի տակ՝ ես կը տանեմ:

- Ի՞նչ նեղութիւն աղջիկս, - սասցի ես, - ինձ համար դժուար չէ, համ էլ՝ իմ տարիքում քայլելը լաւ է:

Ինքնին հասկանալի է, որ այդ օրուանից յետոյ, իմ «աղբը» բոլորովին էլ աղբ չէր..., եւ երբ օրեր անց փորձեցի դրամ տալ Մէրինի՝ վերադարձեց՝ ասելով.

- Ձէ, չէ, պարոն Անասեան, էդ ի՞նչ էք անում, պէտք չէ, պէտք չէ, մենք լաւ ենք...

էս ի՞նչ արեցիք դուք մեր ժողովրդի հետ, ա՛յ երեք Միապետեր:

Դուք խիղճ, գութ չունէ՞ք: Մէկը միւսից առաջ անցնելով, սաղայէլական նորովի միջոցներով խեղեցիք մի ամբողջ ժողովուրդ:

Պատուախնդիր, հպարտ, հիւրասէր հայաստանցիին խեղճացրիք, փոքրացրիք, նսեմացրիք, թող ներու՛ի՝ դարձրիք նորովի մուրացկան:

Դու՛ նախկինում կոմունիստ Լեւոն Տէր-Պետրոսեան (որքան միամտօրէն հաւատում էի քեզ), ի՞նչ արեցիր քեզ երկրպագելու եկած, 6-7 հազար լուսանջլրսահայերի աչքերի առջեւ, Ֆրէզնոյաբնակ մեծահարուստ Շամլեանի կողմից, բեմի վրայ մէկ միլիոնանոց չէք վերցնելուց յետոյ: Հետագայում՝ ոչ մի արձագանգ, անամօթաբար, բոլորի աչքերի առջեւ գրպանեցիր նորանկախ Հայաստանի բարգաւաճման համար, յայտնի մեծահարուստի հալալ քրտինքով վաստակած դրամը: Հենց քեզից էլ սկսուեց սեփական ժողովրդին թալանելու 30ամեայ մարաթոնը:

Ներկայիս, Երեւանի ծախուած խուժանն ու միամիտ ուսանող երիտասարդութիւնը Փաշինեանի «Թաւշեայ ծածկոցի» վրայ ննջելուց յետոյ, առիւծ դառած, օր ու գիշեր տեղի-անտեղի, շատ անգամ էլ անմտածուած ցոյցեր է անում Երեւանի հրապարակներում ու փողոցներում՝ առանց խորամուկ լինելու դէպքերի, իրողութիւնների մէջ:

էս ի՞նչ ցոյցամրցոյթ-ցուցահանդէս է: էս ի՞նչ բան է, դուք գործբան չունէ՞ք, աշխատող, սովորող չկա՞յ մեր երկրում: Ե՞րբ են այդ ցուցարարները աշխատանքի, կամ դասի գնում: Ի բացառեալ ինքնաբուխ, արդարացի ցոյցերի, մնացեալի մէջ՝ դրականն այն է, որ դրանց մասնակիցները վարձատրուում են Քոչարեանի պիցայով ու դրամներով՝ քամուն տալով ժողովրդից եւ պետութիւնից խլուած միլիոնները:

Մօտ երկու տարուայ մեծաթիւ ցոյցերի մէջ իմ եւ, վստահ եմ, Հայաստանի գրեթէ ողջ մտաւորականութեան շրջանում մտահոգութեան լուրջ նիւթ դարձած՝ հայոց լեզուի, հայ գրականութեան եւ հայ ժողովրդի պատմութեան բացառումն է Հայաստանի Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւններում:

Երիտասարդ ցուցարարների բողոքի արդիւնքում, որպէս «մեղմացուցիչ դէպք հանցանած», Նախարար Արայիկ Յարութիւնեանը, վարչապետի հաւանութեամբ անշուշտ, որոշում կայացրեց վիճարկուող հարցի լուծումը թողնել ԲՈՒՀ-երի տնօրէնների հայեցողութեանը:

- Մժ..., խե՛նթ են այս մարդիկ, - ասում է մէկ բաժակ սուրճի եկած իրաքահայ բարեկամս, - մայրենի սրբացած լեզուին դպնալ կ' ըլլա՞յ: Այս մարդիկ չեն հասկնար, որ երկիրը պահողը լեզուն է: Չկայ Մայրենի լեզու՝ չկայ Հայաստան: Քեզի բան մը ըսեմ մահսթրօ, - շարունակում է բորբոքուած բարեկամս, - սա մեր Նիկոլը սկսած է սխալներ գործել՝ ամէն բան իր ուսերուն վրայ առնելով, ինչ է, ուրիշ գործ ընող չիկա՞յ...

- Իրաւ ես բարեկամս: Միայն վարչապետը եւ Նախարարը պիտի չլուծեն այս հարցը: Համազգային տարողութեան այս խնդիրը լուծելու ճիշդ ճամբան՝ հարցը Ազգային ժողովին յանձնելն է:

Քոչարեանի փողի, ինչպէս կ' ասէր թուրքը՝ «նաղդ փարայի» վրայ յոյս դնելով էլ հրապարակ իջաւ բազմերես, մի կուսակցութիւնից կամ խմբից միւսը ճպուռի նման թռչող վազգէն Մանուկեանը՝ առանց խբնելու (մայրիկս էր ասում՝ Ամաչել, - շեն. Ա.), անամօթաբար օգտագործելով մեծն Թումանեանի յօրինած ՎԵՐՆԱՏՈՒՆ անունը՝ ստեղծելով մի նոր ապագային միաւորում: Ո՞վ է ձեր մէջ գրող-մտաւորականը, չափ ու սահման չճանացած, պղծում էք մեծ լուսեցու անունը:

Ա՞յ՛ յայտեղ է որ գիտակից երիտասարդութիւնը ցոյցի պիտի ելներ ու ջարդուփշուր աներ այդ յօրինովի ապագային հաստատութեան կայքն ու կահկարասին:

Այս նիւթի կապակցութեամբ հիանալի յօդուածով է հանդէս եկել քաղաքագէտ Նազարէթ Պէրպէրեանը՝ «Ասպարէզ» օրաթերթի Նոյեմբերի 23-ի համարում: Ահա մի հատուած այդ երկարաւուն լուսաբանութիւն - յօդուածից.

«Նիւթական-դրամական միջոցներու վրայ հակակշիռ ունեցող, բաց արժանահաւատութեան դոյզն դրամագլուխն իսկ չունեցող հին թէ նոր

» » »

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԻՄՈՆ ԵՒ ԺԱՆԷԹ ՍԻՄԻԹԵԱՆ



# 2019 Թուականը Իմ Տեսանկյունից

հեղինակութիւնները, այսօր իրենց անձնական ուղղակի քարոզչութեան սալին լծած են անցեալի «պալատական աշուղներ»ը չիշեցնող մտաւորականներ, հրապարակագիրներ եւ քաղաքական մեկնաբաններ, որոնք ամսական երկու-երեք հազար տոլարի սիրողն, ինչ որ Հայաստանի մէջ շատ խոշոր եկամուտ է, կը ծախեն ոչ միայն խիղճ, այլեւ նոյնինքն խօսքի եւ հեղինակութեան արժանահաւատութիւնը»:

Պիտի չթաքցնենք. Բնաւորութեամբ բարի ու ազնիւ Փաշինեանը իր «Թաւշեայ» յեղափոխութեամբ լայն դուռ բացեց ամենաթողութեան համար: Նա չէր պատկերացնում, որ իր առջեւն է անօթի, խաբուած, հարստահարուած մի հսկայական զանգուած կայ, որի բերանները 28 տարի անընդհատ, անընդմէջ գմուտած են եղել:

Նա դիպուկահարի ճշգրտութեամբ որսաց պահը եւ «իրենով արեց» հարստահարուած, պատուազրկուած գրեթէ ողջ ժողովրդին: Եւ արդիւնքում՝ այսօր ունենք այն՝ ինչ ունենք. Ազգային եւ Ապագային ուժերի անմտածուած սահմակեցուցիչ բախումներ, հակոտնեայ մտքեր ու առաջարկութիւններ, իրարամերժ ընկալումներ:

Փողատէր իշխանատենչ ուժերն այսօր, ի գին ամէն մի ստորութեան, պատրաստ են նոր իշխանափոխութեամբ տապալել այն ամէնը՝ ինչ ձեռք բերուեց Նիկոլի ղեկավարած աննախադէպ «Թաւշեայ Յեղափոխութեան» շնորհիւ:

Այս մտքերի ամփոփումն անենք «Մասիս» շաբաթաթերթի Նոյեմբերի 30-ի խմբագրական յօդուածից.

«Նախկին համակարգի ներկայացուցիչները իրենց պատկան լրատուամիջոցներու լայն ցանցին միջոցաւ կը փորձեն համոզել հասարակութիւնը, որ Թաւշեայ Յեղափոխութիւնէն ետք ոչինչ չէ փոխուած: Նոյն միտքը կը կրկնէ նաեւ Սերժ Սարգսեան: Լսելով անոր խօսքերը, մենք եւս կու գանք այդ համոզումին, իսկապէս ոչինչ չէ փոխուած ոչ թէ Հայաստանի մէջ, այլ՝ նախկին մերժուած իշխանութիւններու ուղեղներուն մէջ»:

Քանի որ խօսք գնաց Սերժ Սարգսեանի մասին, արժէ յիշատակել նրա «հանճարեղ» մտքի առկայծումներից մէկը, որում կ'երեւայ նրա «գիտական» պաշարը.

- Անհանդուրժողականութեան կամ կուլակաթափութեան կոչերով ոչ մի տեղ չէք հասնի,- ասում է պաշտօնաթող վարչապետը:

- Այ՛ միամիտ նախկին վարչապետ, դու գլխի էլ չես ընկել, որ քո օգտագործած գոյգ բառերով, ակամայ հաստատում ես, որ քո եւ երկու նախկին վարչապետերի 28 տարիների «կառավարման» տարիներին մշտապէս եղել է «անհանդուրժողականութիւն»:

Իսկ ինչ վերաբերում է «կուլակաթափութեան»ը, ասեմ որ, կուլակները անցեալ դարի Սովետի 20-30-ական թուականների՝ աշխատանքով ձեռք բերուած հարուստներն էին, որոնցից խլուած դրամների օգնութեամբ, հաւատաւոր կոմունիստները երկիր ստեղծեցին: Իսկ Հայաստանի կուլակ-միլիոնատէրերը ժողովրդից եւ պետութիւնից շորթած դրամն օգտագործեցին, եւ այսօր էլ օգտագործում են շքեղ պալատներ կառուցելու, աշխարհի տարբեր հորիզոնականներում հողատարածքներ գնելու վրայ:

Այս ամէնի արդիւնքում էլ յուսահատ Հայաստանցին լքում է իր երկիրը՝ իրեն փրկուած համարելով հայաստանեան մղձաւանջից: Արդեօք փրկուո՞ւմ է նա որպէս հայ, հայ մարդ, թէ՛ ժամանակի ընթացքում, ամերիկեան հոսանքի հետ մոռանալու է թէ՛ ազգութիւն, թէ՛ կրօն, եւ ավանդութիւններ, սրբութիւններ, որ իրեն է փոխանցուել իր պապերից: Եւ գալու է ժամանակը, երբ մենք՝ արտագաղթած սփիւռքահայերս նմանուելու ենք յորդառատ գետի մէջ նետուած նաւակի, որն իր սլացիկ ընթացքի մէջ, խփուելով գետի եզերքների ժայռերին, ի վերջոյ ջարդուփշուր է լինելու, եւ մնալու է որպէս յուշ՝ այն մարդկանց համար, ովքեր աշխարհից գոհ, Մոնակոյում ու Լաս Վեգասներում, սեփական ժողովրդի քրտինքով միլիոններ դիզած գումարները քամուն տալով, ժպիտը դէմքերին՝ նաւակը նետեցին յորդառատ գետի մէջ:

Նիկոլ Փաշինեանի վարած քաղաքականութեան շնորհիւ, մէկուկէս տարուայ ընթացքին գրեթէ ողջ աշխարհը ճանաչեց Հայաստանին: Եւ այդ փաստը պատճառ դարձաւ, որպէսզի ռուսները 180 աստիճանով փոխեն

իրենց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Նախորդ երեք վարչապետերը 30 տարուայ ընթացքում «ամէն ջանք» գործադրելով իսկ՝ չկարողացան գէթ մէկ-երկու նախադասութեամբ Ղարաբաղի հարցում նպաստաւոր արտայայտութիւն կորզել նրանց շուրթերից:

Նիկոլ Փաշինեանը քաղաքական համառ պայքարի շնորհիւ կարողացաւ ստիպել դիմացինին, որպէսզի պաշտօնական խօսակցութիւններն ու որոշումները իրականացուեն հաւասարը-հաւասարի իրաւունքով: Նա նոյնիսկ չթոյլատրեց Պուտինին բանտախցում հանդիպել Հայաստանի երկրորդ վարչապետ, իր ընկերոջ՝ Ռոբերտ Քոչարեանի հետ:

Նման համարձակ քայլով Փաշինեանը շահեց ողջ աշխարհի համակրանքը, եւ դրանից օրեր անց, Մոսկուայում Պուտինը «եղբայրաբար» գրկախառնուեց մեր վարչապետի հետ:

Դրան յաջորդեց Պուտինի թելադրանքով արուած երկու՝ չափազանց կարեւոր, ճակատագրական գոյգ յայտարարութիւններ, որ ի լուր աշխարհի արեցին Ռուսաստանի երկու կառավարական անձերը:

Ահա թէ ինչ է ասում Ղարաբաղի մասին յայտնի պետական գործիչ Կոնստանտին Զատուլինը.- «Պէտք է ճանաչուի Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման եւ Ադրբեջանից անկախանալու իրաւունքը»:

Նրանից ետ չի մնում աշխարհաճանաչ պետական քաղաքական գործիչ, Ռուսաստանի Արտաքին Գործերի Նախարար Սերգէյ Լաւրովը (հայրը՝ հայ, մայրը՝ վրացի,- Հեն. Ա.).

- Առանց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համաձայնութեան, որեւէ պայմանաւորուածութիւն չի լինի ձեւակերպել, Հայաստանն էլ պարզապէս այն չի ստորագրի,- ասում է նա:

Նման «թիկունք» ունենալով իր ետին՝ Նիկոլ Փաշինեանն ասում է.

- Ոչ ոք չի կարող Հայաստանի հետ խօսել ուժի դիրքերից... Առերեւոյթ չափազանց ինքնավստահ յայտարարութիւն է սա, այն պատասխան է տարիներէ ի վեր Ալիեւի կողմից արձակուող վայրահաչ գառանցանքներին:

Փաշինեանն այդպիսի վճռական յայտարարութեամբ է հանդէս գալիս, որովհետեւ ի տարբերութիւն նախորդների, ընդունում է Սփիւռքի ուժը, կարողութիւններն ու հնարաւորութիւնները, եւ բարձրաձայնում, որ Սփիւռքն էլ է Հայաստան եւ որ ամէն մի սփիւռքահայ, որտեղ էլ նա ապրելիս լինի՝ հայաստանցի է, Հայաստանի քաղաքացի: Մինչ, ժամանակին անփառունակ Լեւոն Տէր - Պետրոսեանը հանդէս էր գալիս պժգալի յայտարարութեամբ, թէ՛ «Փարիզում եւ Նիւ Եորքում նարինջ ուտող հայը իրաւունք չունի մեզ քաղաքականութիւն թելադրել»:

Այս բոլոր յաջողութիւնների հետ մէկտեղ, հիմնականում քաղաքական անփորձութեան պատճառով, մեր սիրելի վարչապետը սկսել է սխալներ թոյլ տալ՝ ամէն մի յաջող քայլ վերագրելով իր անձին, իր ԵՄ-ին՝ որոշակի դժգոհութիւն առաջ բերելով ոչ միայն ընդդիմադիր ուժերի շրջանակում, այլեւ իրեն հարող «Իմ քայլը» կուսակցութեան մէջ: Միշտ պիտի յիշել, որ Եսակենտրոն ղեկավարմամբ շատ հեռուն չես գնայ եւ նպատակը կիսատ կը մնայ...

2019 թուականի աւարտից երկու ամիս առաջ, Հոկտեմբերի 29-ին, որտեղից-որտեղ, Միացեալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատը քուեարկութեան դրեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը՝ զարմանքի եւ ուրախութեան հօգի ալիք բարձրացնելով ողջ հայութեան հոգիներում: Չորս հարիւր ներկայացուցիչ-մասնակիցները գրեթէ միաձայնութեամբ ընդունեցին բանաձեւը, սակայն վերին Մարմնի՝ երկու անդամներ, Սպիտակ Տան թելադրանքով, մերժեցին ստորագրել բանաձեւի տակ՝ պատճառաբանելով թէ այս օրերին, ԱՄՆ-Թուրքիա լարուած յարաբերութիւնների պայմաններում բնաւ հարմար չէ նման բանաձեւի տակ ստորագրելը:

Բարեկամներս, մի անհանգստացէք, միեւնոյնն է, գալու է այդ բաղձալի օրը, երբ աշխարհը կը ճանաչի 20-րդ դարի մեծագոյն ոճիրը: Սակայն, ի՞նչ է տալիս դա մեզ՝ միայն բարոյական յաղթանակ, բա մեր զաւթուած հողերը, մեր ինչքն ու հարստութիւնը, բա մեր ձիւնափառ

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՔԹ. ՉԱԻՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ**

**ARSLANIAN MEDICAL CLINIC**

Մեր Արխիվ

Նիւթեր ՍԴՅԿ Հալէպի Շրջանի Պատմութեան Համար (1889-1925)  
ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԵՆՐԵՆԵԱՆ

Հալէպի մէջ Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան մասին մեզի հասած առաջին վկայութիւնները կու գան Զէյթունի ապստամբապետ Աղասիէն (Կարապետ Թուրապիսեան), որ դէպի Զէյթուն իր ուղեւորութեան ճամբուն վրայ, 1891-ի վերջաւորութեան կը հանդիպի Հալէպ: Աղասի հետեւեալ տպաւորութիւնը կու տայ Հալէպի Հնչակեան մասնաճիւղին մասին. «Առաջին անգամն էր որ կը գտնէի Սոցեալ Դէմոկրատ Հնչակեան կազմակերպուած Մասնաճիւղ մը ի Հալէպ: Երկրորդը՝ գտայ ի Քիլիս, որը ծնունդն էր Հալէպի, ու մասնաւոր ընկեր [Տիգրան] Ինֆիլէճեանին, որ, եթէր տարի բժիշկ եղած էր Քիլիսի մէջ եւ ստեղծած ու կազմակերպած Հայ եւ Թուրք իրապէս ազատական տարրերը»(1): Աղասի կը նշէ, թէ Քիլիսի մասնաճիւղին թիւը 32 հոգի էր, որ շուտով կը հասնի 200-ի. իսկ Հալէպի պարագային թիւ չի նշեր:

Հակառակ այն իրողութեան, որ Աղասի գնահատականներ կատարելու տեսակէտէն ընդհանրապէս եղած է շատ զուսպ եւ ժլատ, մենք մեզի իրաւունք տուինք հետամուտ ըլլալու, թէ ինչպէ՞ս կրնայ 1891-ին Հալէպի մէջ «կազմակերպուած» Հնչակեան մասնաճիւղ մը գոյութիւն ունենալ:

Հնչակեան Արխիւին մէջ Հալէպի շրջանին վերաբերող ամենէն հին փաստաթուղթէն կարելի եղաւ յայտնաբերել, որ Հալէպի Հնչակեան մասնաճիւղը սկսած է գործել 1889-էն: Այդ, Հ[այ] Յ[եղափոխական] Հնչակեան] Ս[ոցիալ] Դ[եմոկրատ] Կուսակցութեան (2) Բերիոյ վարչութեան (Ա. պետ՝ Լոնէ, Ա. դպիր՝ Մամիկոն) 8/21 Նոյեմբեր 1908 թուակիր նամակն է յղուած Աղեքսանտրիոյ Հնչակեան վարչութեան, ուր ցանկութիւն կը յայտնուի երկու մասնաճիւղերուն միջեւ ստեղծել գործակցութիւն: Մեզի հետաքրքրող մասը այն է, որ նամակին մէջ երկու անգամ կը կրկնուի, «արդէն թէ 9 տարիներէ ի վեր կազմակերպուած մասնաճիւղ ենք...» հաստատումը. (որպէս հասցէ կը տրուի. - Հալէպ, Պապլֆարաթ Կարապետ Պարսումեան):

Իսկ այդ երկու տարիներուն ընթացքին, 1889-1891, մասնաճիւղը ո՞ւր եւ ինչպէ՞ս կրցած էր ձեռք բերել «կազմակերպուած» նկատուելու վաստակը: Աղասի կը նշէ, թէ Հալէպի եւ Քիլիսի մասնաճիւղերը ունէին իրենց սեփական ձիւրն ու շորեպանները, որոնց միջոցով անոնք մնայուն կապի մէջ էին իրարու եւ այլ շրջաններու հետ: Սա իրօք կարելի է կազմակերպուած աշխատանքի մը արդիւնքը նկատել: Սակայն, խորքին մէջ կար այլ պարագայ մը, որ կարելի չէ գանց առնել: Հալէպ քաղաքը համանուն նահանգին կեդրոնական քաղաքն էր: Հալէպի նահանգին մէջ կ'իյնային Կիլիկիոյ մաս կազմող Զէյթունը, Քիլիսը, Ուրֆան, Պէյլանը, Անթապը, Իսկէնտէրունը եւ այլ հայաշատ բնակավայրեր: Որպէս նահանգակեդրոն քաղաք, Հալէպի մէջ կը գտնուէին նահանգին գլխաւոր դատարանն ու բանտը: Սկսած Զէյթունի Պապիկ իշխանին գլխաւորած 1876-1878 ապստամբական շարժումներէն, անոր յաջորդող Կիլիկիոյ լեւներուն վրայ թափառող հայ ֆետայական խումբերու (Շամ Բէշլի Օղլու Հաճի Փանոս) գործունէութենէն, եւ աւելի ուշ, ազգային խառն կազմերով յատկանշուող Զէյլո ընդհանուր անունին տակ գործած հրոսակախումբերուն հրապարակ գալէն, Հալէպի դատարանն ու բանտը կը վերածուին Հալէպ նահանգին մէջ ձեռք բերուած հայ յեղափոխականներու եւ կասկածելիներու մէկտեղման վայրի: Այդ օրերէն, հայ ազգային ազատագրական շարժման ամենատարբեր էջերուն վրայ յաճախ կը հանդիպինք «Հալէպի բանտարկեալները» եզրին: Ազատագրական գաղափարներու տէր Հալէպի հայ ազգայիններէն ու երիտասարդներէն խումբ մը, ինքնաբերական կերպով, իր առջեւ գործ կը դնէ մնայուն կապի մէջ ըլլալ հայ բանտարկեալներուն հետ եւ անոնց տրամադրել անհրաժեշտ օգնութիւններ: Ազգային հայ հայերուն տունները նաեւ ապահով կացարաններ կ'ըլլան ազատագրական գաղափարները տարածելու համար շրջապայթիւններու ելած հայ գործիչներուն համար: Ասոնց շարքին, հանրածանօթ Ժիրայր (Մարտիրոս Պոյաճեան), 1876-ին Հաճընէն դէպի Փոքր Հայքի շրջաններ կատարած իր ուղեւորութեան ճամբուն վրայ, Հալէպի մէջ կ'իջեանի Գրիգորեան եղբայրներու բնակարանը:(3)

Այս միջոցորտէն ծնած նուիրեալներն են, որ ապագային կը կազմեն Հալէպի Հնչակեան մասնաճիւղին կորիզը, իրենց հետ բերելով ընդլայնակեայ

գործունէութեան արդէն կուտակուած փորձը: Հիմնականին մէջ, նոյն գործն է որ կը շարունակուի, աւելի համախումբ ձեւով, բայց արդէն որպէս կուսակցական մասնաճիւղ:

Բանտարկեալներուն հետ մնայուն կապ ստեղծելու կարեւոր աշխատանքին կողքին, Հալէպի մասնաճիւղը նաեւ այդ մասին պարբերաբար տեղեկագիրներ կը յղէ Հնչակեան կեդրոնական վարչութեան, որոնցմէ հատուածներ, «Նամակներ Թուրքիայից» ընդհանուր խորագիրին տակ, լոյս կը տեսնեն «Հնչակ»ի մէջ, պատմական կորուստէ փրկելով «Հալէպի բանտարկեալներուն» վերաբերող շատ մը տեղեկութիւններ (4), ուր մարամասնութիւններ կը տրուին Զէյթունէն, Մարաշէն, Պէյլանէն, Չորք Մարգպանէն եւ այլ վայրերէ Հալէպ բերուած բանտարկեալներուն ինքնութեան, դատավճիռին, բանտային պայմաններուն, կրած շարժարանքներուն եւ այլնի մասին: Այս հրապարակումներուն մէկ մասը, Տօրոսցի ծածկանունին տակ, կատարուած է Աղասիին կողմէ (կասկածներ ունինք, որ Մեղրունի եւ Մեղու ծածկանուններուն տակ եւս Աղասին ըլլայ): Սա ենթադրել կու տայ, որ Հալէպի Հնչակեան վարչութիւնը շարունակած է մնայուն կապ ունենալ Աղասիի հետ, երբ վերջինս արդէն Հալէպէն մեկնած էր ձէպէլ Մուսա:

1894 Օգոստոսին, հնչակեաններուն հանդէպ համատարած ձեռքարկութիւններուն ալիքը կ'ընդգրկէ նաեւ Հալէպը: Կը ձեռքարկուին Գրիգորեան եղբայրներէն Յարութիւնը եւ լուսանկարիչ Գ. Մարլեանը:(5) Ընդլայնակեայ այս գործունէութիւնը կը շարունակուի մինչեւ Օսմանեան Մահմանդութեան հռչակումը: Դժբախտաբար, այս շրջանէն արխիւային նիւթեր պահպանուած չեն, հիմնականին մէջ զաղտնապահական պատճառներով. վտանգաւոր որեւէ գրութիւն, զգուշաւորութեան համար, անմիջապէս կը փճացուէր: Հնչակեան կեդրոնական վարչութեան յաճախակի տեղափոխութիւնները եւ ներքին տագնապները պատճառ կը դառնան, որ արտասահմանի մէջ եւս կուսակցական արխիւը չպահպանուի եւ ժամանակի ընթացքին կորսուի:

Հնչակեան Արխիւին մէջ, այլ շրջաններու նման, Հալէպի մասնաճիւղի գործունէութեան մասին արխիւային նիւթերու կը հանդիպինք Օսմ. Սահմանադրութենէն ետք:

23 Յուլիս 1909-ին Կ. Պոլսոյ մէջ կը բացուի ՍԴՀԿ Զ. Պատգամաւորական Ժողովը (Համագումար): Ժողովը առաջին հերթին կը զբաղի պատգամաւորներուն լիազօրագիրներու ստուգման հարցով: Խնդիրը այն էր, որ Սահմանադրութենէն ետք ստեղծուած էին մեծ թիւով նոր մասնաճիւղեր եւ մեծապէս աճած էր կուսակցականներու թիւը. պէտք էր ընդհանուր սկզբունքներով յատկացուէին մասնաճիւղի մը համագումարին մասնակցելու իրաւունքը, «լիազօրագիր» հասկացութեան բնոյթը եւ կուսակցականի մը պատգամաւոր ընտրուելու անհրաժեշտ պայմանները: Համագումարը, իր նախապատրաստական նիստերուն ընթացքին երկարօրէն կը զբաղի այս հարցերով եւ ընդհանուր սկզբունքներու հիման վրայ, նախ կը յատկացնէ այն մասնաճիւղերուն անուանացանկը, որոնք իրաւունք ունէին առանձին պատգամաւորով ներկայանալ համագումարին եւ ապա մէկ առ մէկ կը վաւերացնէ (կամ կը մերժէ) պատգամաւորական լիազօրագիրները: Համագումարը կ'արձանագրէ համագումարին պատգամաւորով մասնակցելու իրաւունքը ունեցող 187 մասնաճիւղերուն անուանացանկը, որուն համաձայն Տաճկաստանի շրջանէն (Իմա՝ Օսմ. Կայսր.) 89 մասնաճիւղ, Ռուսաստան՝ 38, ԱՄՆ՝ 33, Պարսկաստան՝ 11,



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԻՎԱՐ ԵՒ ՈՍԿԻ ԱՆԹՈՍԵԱՆ





# Նիւթեր ՍԴՅԿ Յալէպի Շրջանի Պատմութեան Համար (1889-1925)

Ռուսմանիա՝ 7, Պուլկարիա՝ 7, Եգիպտոս՝ 2:(6) Տաճկաստանի մասնաճիւղերուն շարքին կը յիշատակուի Հալէպի մասնաճիւղը. կը նշուին նաեւ Հալէպի նահանգին մէջ մտնող Իսկէնտէրուլի, Այնթապի, Քիլիսի, Պէրէճիկի, Պէյլանի եւ Պազարճըքի մասնաճիւղերը (այս շարքին մէջ ակնբախ է Չէյթունի եւ Մարաշի մասնաճիւղերուն բացակայութիւնը): Կիլիկիա հասկացութեան գլխաւոր մասը կազմող Ատանայի նահանգէն, այս ցանկին մէջ կը յիշատակուին Ատանայի, Հաճընի, Չորք Մարգպանի (Տէօրթ Եօլ), Սիսի, Մերսինի եւ Տարսոսի մասնաճիւղերը. Սուրիոյ նահանգէն՝ Պէյրութի եւ Թրիփոլի մասնաճիւղերը (Դամասկոսի մասնաճիւղը կը հիմնադրուի աւելի ուշ): Լիպարազիւրներու ստուգումէն ետք, կը վաւերացուի նաեւ Հալէպի (միաժամանակ Քիլիսի եւ Պէրէճիկի) պատգամաւոր Հրանդ Սիւլահեանի լիպարագիրը:(7) Սակայն ան կը բացակայէր ժողովէն: Համագումարը նախատեսուած էր 1909 Ապրիլին եւ այլ պատգամաւորներու կողքին Հ. Սիւլահեան ժամանած էր Կ.Պոլիս եւ իր լիպարագիրը ներկայացուցած Կեդր. Վարչութեան: Յետաշրջական շարժման եւ Ատանայի Եղեռնին պատճառով Համագումարը կը յետաձգուի եւ Հ. Սիւլահեան, ինչպէս նաեւ Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի շրջաններէն եկած այլ պատգամաւորներ, կը վերադառնան իրենց բնակավայրերը, ստեղծուած վտանգաւոր կացութիւնը դիմազարակելու համար: Նկատի առնելով այս պարագան Համագումարը կ'որոշէ. «Հալէպի, Քիլիսի եւ Պէրէճիկի մասնաճիւղերու պատգամաւորը բացակայ ըլլալով, որոշուեցաւ այդ շրջանի գործիչ ընկ. Բենիամին Հլղաթեանը խորհրդակցական ձայնով հրաւիրել մասնակցելու ժողովի այն նիստերուն, ուր կը քննուին Կիլիկեան անցքերը»:(8)

Ժամանակագրական շարքով յաջորդ փաստաթուղթը, Հալէպի Հնչակեան վարչութեան 1/13 Ապրիլ 1909 թուակիր նամակն է (Ա. պետ՝ Ամպ, Ա. դպիր՝ Վարդ) յղուած Գահիրէի Հնչակեան վարչութեան:(9) Ինչպէս թուականը կը յուշէ, ան գրուած է Ատանայի Աղէտի օրերուն: Նամակը ունի մասնաճիւղի գործունէութեան շուրջ գեկուցագրի բաժին մը, որմէ կը պարզուի, որ հակառակ նիւթական սուղ պայմաններուն, մասնաճիւղին ջանքերով կարելի եղած է Կիլիկիոյ մէջ 10-էն աւելի մասնաճիւղեր կազմել, չհաշուած Ատանայի շրջանը, ուր արդէն զօրաւոր մասնաճիւղեր կան: Յատկանշական է այն միտքը, որուն համաձայն, «Հոս ներկայիս բաւական խառնակ վիճակ մը ունի. Արաբները առանձին կազմակերպութիւններ կ'են « րիաքսիոնի » կողմնակից հակասահմանադիրներուն պայքար կուզեն մղել. ժողովուրդը հայերը դեռ բոլորովին անպատրաստ են ինքզինքնին պաշտպանելու պատահականութեան մը հանդէպ. այս մասին յաճախ գրած ենք պէտք եղած տեղերը, սակայն « ձայն բառբարոյ յանապատի » մնացինք»:

8 Յունիս 1909 թուակիր փաստաթուղթը, ՍԴՅԿ Հալէպի վարչութեան (Շ. Երկաթ) կողմէ տրուած «վկայագիր» մըն է, որ կը հաստատէ Հայկ Մակարեանի կարգապահ կուսակցական մը ըլլալը:(10)

14/27 Յունիս 1909 թուակիրով, ՍԴՅԿ Հալէպի վարչութիւնը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ընկերներուն կը բացատրէ, թէ « 1895-96 կոտորածները կը նսեմանան Կիլիկիոյ խժոժութեանց քով ».(11) ապա անոնցմէ կը խնդրէ դիրւարացնել իր ընկերներէն Բենիամինին եւ Հրատին առաքելութիւնը, յատկապէս Ուլնիս (Չէյթուն) օժանդակութիւն հասցնելու հարցով:

Այս նամակէն ետք, Հալէպի վերաբերող արխիւապանակին մէջ տասը տարուան «բաց» մը կը գոյանայ:(12) Շարքը կը վերսկսի 27 Հոկտեմբեր 1919-ին վարդ-Մեխակի (վարդավառ Ղարանֆիլեան) Գահիրէ յղած անձնական մէկ նամակով, ուր ան Եգիպտոսի ընկերներուն իր «չափազանց գոհ մնացած» ըլլալը յայտնելէ ետք, անոնց կը տեղեկացնէ իր նոր աշխատութեան՝ «Չէյթունի վերջին Անցքերը» գիրքին մասին, Գահիրէի ընկերներէն խնդրելով օժանդակել անոր հրատարակութեան:(13)

10 Դեկտ. 1919 թուակիրով, ՍԴՅԿ Հալէպի վարչութիւնը (Ա.պետ՝ Գ. Նարեկ, Ա.դպիր՝ Տիգրան) Գահիրէի «Փարամագ» մասնաճիւղին կը տեղեկացնէ, թէ արդէն սկսած են լոյս ընծայել «Եփրատ» թերթը եւ իւրաքանչիւր թիւէն 10 օրինակ պիտի դրկեն Գահիրէ. կը խնդրեն, որ այս հարցով ընկեր մը լիպարուի: Նամակին իւրաքանչիւր թիւնը այն է, որ ան կը կրէ հայերէն եւ ֆրանսերէն տպագրուած entete եւ

հերթագրութիւն՝ թիւ 33:(14)  
 1919-1920 թուականներու Կիլիկիոյ եւ Հալէպի շրջաններու մասնաճիւղերու նամակներուն բնորոշ են հայրենիք վերադառնալու, Կիլիկիան շէնցնելու, Անկախ Կիլիկիա ստեղծելու համար «հնչակեան գործին» ենթահողը պատրաստելու գաղափարին հանդէպ խանդավառ ընդունելութիւնը: Այդ խանդավառութեան ցայտուն օրինակներէն է ՍԴՅԿ Գարատուրանի մասնաճիւղին ՍԴՅԿ Գահիրէի վարչութեան յղած նամակին մուտքը. «Ազնիւ ընկերներ, ուրախութեամբ կու գանք յայտնելու Ձեզ թէ ամբողջ ընկերներով հայրենիք վերադարձած ենք: Գաղթավայրի ծովածաւալ տառապանք թէեւ քամեց ընկերներու նիւթական ոյժերը, սակայն կուսակցութեան սկզբունքներուն վրայ հաստատ մնացած ըլլալով՝ կը շարունակենք երկրի փլատակներու վրայ եւս հաստատ պահել ընդգրկած սկզբունքները»:(15)

1920 թուականէն Հնչակեան Արխիւի Հալէպի բաժնին մէջ պահպանուած է միայն մէկ բնագիր նամակ, որ ունի գեկուցագրի բնոյթ եւ կը պարունակէ տեղեկութիւններ Հալէպի մօտակայ մասնաճիւղերու մասին. ստորեւ այն կը ներկայացնենք ամբողջութեամբ:

Ս. Դ. ՀՆԶ. ԿՈՒՍԱԿԳՈՒԹԻՒՆ  
 ՀԱԼԷՊԻ  
 ՄԱՍՆԱԾԻՒԴԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

PARTIE SOC. DEMOCRATE  
 HENTCHAGUISTE  
 BRche D'ALEP

ոչ-հրատարակելի  
 Հալէպ 1 Սեպտ. 1920  
 Պատ. Կեդր. Վարիչ Մարմին  
 Ս. Դ. ՀՆԶ. Կուսակցութեան Ամերիկայի Շրջանի  
 Շիքակօ

Սիրելի ընկերներ,  
 Կը հաստատենք մեր 9 Օգոստ. [1]920 եւ 83 թիւ նամակը, որուն կցած էինք Այնթապի դէպքերու Պոսթոնի »Հայրենիք« քերթին 2476 թիւին մէջ հրատարակուած յօդուածի մը համար հերքումնազիր մը. մ-ճիւղիս գործօն անդամներէն ընկ. Մատթոս Ղազարոսեանի Ամերիկա մեկնումը մեզի առիթ տուաւ որ տեղեկութիւններ տանք Ձեզ տեղւոյս եւ շրջակայից կուսակցական կեանքին մասին. Սուրիոյ մէջ գրաքննութիւն հաստատուած ըլլալուն բնական է որ փոսթով չ'պիտի կրնանք մեր ամէն ուզածը գրել:

Կազմակերպչական.- ներկայիս մ-ճիւղը ունի 100 ընկերուհի եւ ընկեր. ունի »Անդրանիկ« թատերախումբ մը. Ուսանողական Միութիւն մը. Կանանց մ-ճիւղ մը. ու մօտ հարիւր համակիր ընկերներ: Ազգային բոլոր մարմիններուն մէջ ունինք մեր ներկայացուցիչները: »Կիլիկեան շարժումին« սկզբնաւորութենէն ասոյին տեղւոյս մէջ համակրանք մը ստեղծուեցաւ հանդէպ կուսակցութեանս. մեր բոլոր ուժերը լծեցինք ժողովրդային եռանդը աւելցնելու եւ կարելի միջոցները գործածելու վրայ ենք մերովսան օգնելու համար Կիլիկիոյ ներկայ շարժման. սակայն որ տեղւոյս մէջ տիրող տնտեսական քրիզը արգելք կ'ըլլայ լիովին գոհացում տալու մեր փափաքին:

Շրջակայ քաղաքներէն Քիլիսի մ.ճիւղը ունի 60 ընկերներ, եւ ամիսներէ ի վեր շրջակայքը տեւող ֆրանքո-թուրք կռիւներու պատճառով նիւթական անցուկ վիճակ մ'ունին, եւ մեզմէ կը սպասեն ու կը պահանջեն դրամ:

Այնթապի մ.ճիւղը ունի 200 է աւելի ընկերներ, որոնք Այնթապի ինքնապաշտպանութեան գործին մէջ մեծ դեր ունեցան, ամիսներէ ի վեր, կ'աշխատին պատրաստելու կռուի վերաբերեալ պատկերազարդ հաւաքածոյ մը, որու մէջ անփոփոխած են բոլոր դիրքերու, գրաւուած մզկիթներու, հայոց ձեռքով շինուած ռումբերու, թնթանողներու, պաշտօնական գրութիւններու, գործող կարեւոր անձերու եւ ընկերներու լուսանկարները. այս գործերուն համար ... որ ամբողջացուելուն պէս պիտի դրկուի եր. Հայաստանի ... իրենց բոլոր նիւթական ծախսելէ վերջ, ստիպուեցան մեզի դիմել եւ այս շաբթուն փոխագիր մը քաշած էին մեր վրայ, ու մենք թէեւ նիւթական չունինք ստիպուեցանք վճարել որպէսզի սկսուած գործը կանգ չ'առնէ:

Ուրֆայի մ-ճիւղէն առնուած տեղեկութիւնները անանկ կը ցուցնեն թէ տեղւոյս հայութիւնը եւս ներկայիս ճգնաժամներ կ'անցնէ, եւ մեզմէ կը խնդրեն



## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՒԵՏԻՍ ԵՒ ԱՐՄԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ



# Նիւթեր ՍԴՅԿ Հալէպի Շրջանի Պատմութեան Համար (1889-1925)

Գիւթական մեծ օգնութիւններ, պատրաստուելու համար ապագայ ամէն հաւանականութեան դէմ:

Այս է ահա, սիրելի ընկերներ, մեր եւ շրջակայից ներկայ վիճակը. ու ամէն կողմէն շարունակ դիմումներ կ'ըլլան հոս, նկատելով թէ Հալէպ բաղդատարար հանդարտ տեղ մըն է. Մէրսիսէն, Պէյրութէն, Քիլիսէն, Ձէյթունէն, Ուրֆայէն միշտ դիմումներ կ'ըլլան ու պրոպականտի համար թերթի պէտք ունէինք եւ գիտէք որ եփրատը հրատարակելու սկսանք. սակայն Գիւթականի ներդրեան պատճառաւ ստիպուեցանք դադարեցնել:

Համոզուած ենք եւ քաջ գիտենք որ Կիլիկիան ներկայ դրութեամբ հնչակեան գործ մըն է, եւ մենք ալ իբր հնչակեաններ պարտաւոր ենք այդ մեծ ու սրբազան գործին: Բոլոր ընկերներու իղծն ու փափաքը այս է: Ձեզ հետ մենք եւս որոշած ենք որ Կիլիկիան պէտք է ըլլայ հնչակեանութեան կեդրոնը, մեր Ս. Դրօշը պէտք է միշտ բարձր մնայ այդ մաքրամաքուր հողին վրայ. սակայն մեր այս փափաքը իրականացնելու համար, շրջակայ մ-ճիւղերը, որոնք ազատութեան սիրոյն կռիւ կը մղեն դարաւոր թշնամւոյն դէմ, Գիւթապէս գոհացնել կարենալու համար պէտք ունինք ձեր Գիւթական աջակցութեան: Ապագան միայն պիտի ցոյց տայ թէ երբ ունենանք Գիւթական կարելոր ոյժ մը, Հալէպի մ-ճիւղը ինչե՛ր կ'ընայ ընել եղեր. այժմէն այս մասին երկար խոստումներ շռայլել չենք ուզեր. այլ կը փափաքինք որ ամսիջապէս գոնէ 1000 (հազար) տղարի օգնութիւն մը ընէք մեզ: Պահանջը շատ մեծ է, ազնիւ ընկերներ, ու պարտականութիւնը ունինք այդ պահանջը գոհացնելու. մեզ առանձին պիտի լքէ՞ք արդեօք...:

Դրամը կը դրկէք հետեւեալ հասցէին  
Mr. Hovhannes Narzikian  
Han el Taff  
Ahd [?]

Ընկերական սիրալիր բարեւերով  
Ի դիմաց Ս. Դ. Հնչ. Կուս. Հալէպի Մ.դի վարչութեան  
Ա-դպիր Ա-պետ  
Վրոյր Վարդ  
[Կնիք]

\*\*\*\*\*

Առաջին անգամ հրատարակուող վերոյիշեալ նամակէն յստակօրէն կ'երեւի, որ Համաշխարհային Ա. Պատերազմին Օսմ. Կայսրութեան տարանջատման, Յեղասպանութեան եւ Կիլիկիոյ հայաթափման պայմաններուն տակ, երբ Կ.Պոլսոյ մէջ գործող ՍԴՅԿ Կեդրոնական Վարչութիւնը եւ Տաճկաստանի Վարիչ Մարմինը կը դադրին գործելէ, ՍԴՅԿ Հալէպի մասնաճիւղը իր շրջանէն ներս կը սկսի խաղալ կեդրոնական մասնաճիւղի մը դերը: Մինչ այդ, միեւնոյն պատճառներով, 1916-1924-ին, ՍԴՅԿ-ը կ'ունենայ երկու Կեդրոնական Վարչութիւն՝ Թիֆլիս եւ Շիքակօ:(16) Կիլիկիոյ շրջանը, ներառեալ Հալէպը, կ'իյնայ ՍԴՅԿ Ամերիկայի Կեդր. Վարիչ Մարմին իրաւասութեան շրջագիծին մէջ (Հալէպի մասնաճիւղին զեկուցագիրները կը դրկուին անոր, որոնցմէ հաստուածներ կը սպագորուին «Երիտասարդ Հայաստան»ի մէջ):

Այս իրավիճակը իր գործնական արտայայտութիւնը կ'ունենայ, երբ 1921-ին Հալէպի մէջ, նախկին Հալէպի եւ Սուրիոյ նահանգներուն մէջ ինկող Հնչակեան մասնաճիւղերուն միջեւ կը գումարուի ՍԴՅԿ Սուրիոյ Շրջանի Պատգամաւորական Ա. Ժողովը, որ կ'ընտրէ Հալէպի մէջ գործող Սուրիոյ Շրջանի Գործադիր Յանձնախումբը (Comite Executif Du Partie S. D. Henchaguiste Cercle De Syrie): Յանձնախումբը իր շարաբերութիւնները կը պահէ ՍԴՅԿ Ամերիկայի Կեդր. Վարիչ Մարմին հետ: Յարկ եղած տուեալներէն դատելով, միայն մէկ առիթով է որ ՍԴՅԿ Թիֆլիսի Կեդր. Վարչութիւնը կապի մէջ կը մտնէ Սուրիոյ Գործադիր Յանձնախումբին հետ, անոր ղրկելով իր վերջին շրջաբերականը եւ ՍԴՅԿ-ի մասին Կոմիտէներէն (Մոսկուա) առած որոշումէն օրինակ մը:(17) Գործադիր Յանձնախումբին առաջնահերթ նախաձեռնութիւններէն կ'ըլլայ շրջանէն ներս տպարան եւ մամուլ ունենալը, «որուն կարեւորութիւնը ներկայ ըրպէին աւելի քան հրամայական է»:(18) Յաջորդ տարի կը սկսի լոյս տեսնել «Սուրիական Մամուլը»:



1922 թուականէն մեզի հասած են երկու ուշագրաւ փաստաթուղթերու կրկնօրինակները: Առաջինը ՍԴՅԿ Սուրիոյ Շրջանի (ձեպէլ Մուսա) Գործադիր Յանձնախումբի թիւ 2 շրջաբերականն է, 20 Փետրուար 1922,(19) որմէ կ'իմացուի, թէ Յունուար 8-ին գումարուած է Սուրիոյ շրջանի մասնաճիւղերուն պատգամաւորական ժողովը եւ ընտրած նոր Գործադիր Յանձնախումբը: Ժողովը կը դատապարտէ շրջանէ մը ի վեր Սուրիոյ շրջանին մէջ տեղի ունեցող եղբայրասպան ոճիրները եւ կ'արձանագրէ, որ այս կապակցութեամբ հանդիպում մը տեղի ունեցած է ՀՅԴ-ին հետ (դժբախտաբար այդ ոճիրները չեն դադրիր եւ անոնց գոհը կ'ըլլայ նաեւ ժողովին ատենապետը՝ Յաբէթ Իսկէնտէրեան): Ժողովը կը քննարկէ ՀԲԸՄ-ի Սիսուան դպրոցը անապաման պահելու հարցը, ինչպէս նաեւ աղբատ ընտանիքներուն ձրի բժշկութիւնը եւ դեղորայք ապահովելու կապակցութեամբ սկսուած աշխատանքը: Այս շրջաբերականէն զատ, Սուրիոյ շրջանի արխիւը կ'ընդգրկէ 9 ձեռագիր նամակներ, 1918-1938, բոլորն ալ բնագիր:

Սուրիոյ Շրջանի Բ. Պատգ. Ժողովը (Հալէպ, 1922 Յուլիս 10-22), գտնելէ ետք, որ Սուրիոյ շրջանը կազմակերպչականօրէն կը պատկանի Սուրիոյ շրջանին, կը մերժէ Սուրիոյ ղեկավար մարմինը կոչել Գործադիր Յանձնախումբը եւ գաջն կ'անուանէ Սուրիոյ Մասնաճիւղերու Ներկայացուցչական Մարմին: Այս մասին կը տեղեկանանք Սուրիոյ Շրջանի Բ. Պատգամաւորական Ժողովի թիւ 1 շրջաբերականէն,(20) որմէ նաեւ ի յայտ կու գայ, որ Բ. Պատգ. Ժողովին կը մասնակցին Հալէպի, Այնթապի, Քիլիսի, Դամասկոսի, Պէյրութի, Իսկէնտէրունի, Սուրիոյ եւ Պէյլան-Գրըզխանի մասնաճիւղերը ներկայացնող 8 պատգամաւորներ՝ 11 ձայնով: Այստեղ յիշատակուած Այնթապի, Քիլիսի եւ Պէյլան-Գրըզխանի մասնաճիւղերը, այդ շրջաններէն արդէն Հալէպ բռնազաղթած հնչակեաններով կազմուած մասնաճիւղեր էին, որոնք կը պահէին իրենց կազմակերպչական կառոցը, շուտով «հայրենիք» վերադառնալու յոյսով: Մասնաճիւղային այս դրութիւնը, առ նուազն Այնթապի մասնաճիւղի պարագային, կը շարունակուի մինչեւ 1932:(21) Ժողովը կը լսէ մասնաճիւղերուն տեղեկագիրները եւ ապա կը քննարկէ ազգային, կազմակերպչական, նիւթական, ուսնողական միութիւններու, մամուլի եւ կանոնադրային հարցեր: Կ'ընտրուի նոր Գործադիր Յանձնախումբ՝ Շաւարշ Շիշմանեան (ատենապետ), Վարդ Մեխակ (ատենադպիր), տոթթ. Գէորգ Մուշեան, Գէորգ Նալպանտեան եւ Սարգիս Թաշճեան:

Հնչակեան Արխիւին մէջ 1923 թուականէն մեզի հասած են ՍԴՅԿ Սուրիոյ Գործ. Յանձնախումբին պատկանող տարբեր բնութիւ 14 ձեռագիր նամակներ, բոլորն ալ բնագիր: Այս ընթացքին Հալէպի մէջ կը շարունակէ գործել ՍԴՅԿ Հալէպի վարչութիւնը, որուն «Տեղեկագիր ՍԴՅԿ Հալէպի Մ. ձիւղի վարչութեան (1924 Յուլիս 2-էն 1925 Յունուար 18)» վերնագիրը կրող բնագիր զեկուցագիրէն կը պարգուի, որ ան տուեալ

Շար.ը էջ 19

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՀԵՐԻ ԵՒ ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ



**ՄԱՍԻՍ - 2020**

# ԹՈՂ ՏԱՆՐ ԶԱՐԳԱՆԱՅ ԵՐԿԻՐԸ

ԶԱԽԵՆ ԽԱՆՃԵԱՆ

"When they go low, we go high"

Michele Obama

Դուք կարդացա՞՞՞ք Բագրատ Այվազեանի «Անին Ծախուեցաւ»:

Կամ Ստեփան Զորեանի «Պապ Թագաւոր»:

Դուք կարդացա՞՞՞ք Դերենիկ Դեմիրճեանի «Վարդանանք»:

Կամ Սերո Խանգատեանի «Մխիթար Սպարապետ»:

Հայոց պատմութեան հարգատ էջերէն հիւսուած վէպեր են վերոյիշեալները որ կ'երկարին չորրորդ դարէն մինչեւ տասնութերորդ դար, ընդհանրապէս տարածուելով հայ ժողովուրդի յետ քրիստոնէութեան ընդունման պատմութեան ժամանակամիջոցին վրայ:

Թէեւ վէպ են վերոյիշեալ հատորները սակայն այնտեղ մեր պատմագէտ հեղինակները կարողացած են հայելին դառնալ օրուայ պատմաքաղաքական իրադարձութիւններու, օրուայ ծանօթ աշխարհի գերիշխող ուժերուն, ներքին եւ արտաքին իշխանական հոսանքներու, աշխարհաքաղաքական բարի կամ չար դրացնութիւններու, աշխարհային եւ եկեղեցական իշխանութիւններու յարափոփոխ յարաբերութեան եւ այս բոլորին մէջ հանգոյցներ ստեղծող եւ գոյացող ճակատագրական սաղրանքներու, դաւադրութիւններու եւ նենգամտութեան:

Չէ՞ք կարդացած վերոյիշեալ վէպերը:

Ոչի՞նչ:

Ինծի կը թուի թէ ժամանակակից մեր պատմութիւնը, գուցէ մի քիչ մշտնջայտ բաց արդիական տարազներով եւ բովանդակութեամբ եւ անպայման 21րդ դարու թէքնոլոճի ծնունդ հասարակական եւ ընկերային համացանցերու էջերով մեզ կը լիշեցնէ վերոյիշեալ վէպերով ցոլացուած մեր պատմութեան արտասալի էջերը:

Անկախութեան առաջին քսանութ տարիներու փտածութեան, յուսախաբութեան, յուսալքութեան, արտագաղթի եւ լայնածաւալ աղքատութեան խեղդիչ հանգրուանէ մը ետք, հազիւ հեշտանքը տրուեցաւ մեր ժողովուրդին՝ ինք ի՛ր ճակատագրի տէրը եղած ըլլալուն, ահա ծրագրուած ապատեղեկատուութեան խլացնող աղմկալի խոցանքներու ականատեսներն ենք:

Զիրար խաչաձեւող ամբաստանութիւններ, զրպարտութիւններ, հնարքներով ծածկուած դիմատետրեան տխրեղձ ազդեր, բռնագրծով գործողութիւններ, այս բոլորը հայրենական լրատուական հրապարակը խիտ կերպով հագեցուցած են:

Հայաստանի առաջին հանրապետութեան բախտորոշ հարիւրամեակին, հայ ժողովուրդը՝ խաղաղ, անարիւն եւ մասսայական հրապարակային պորթկուծով մը տէր դարձաւ իր ճակատագրին եւ ժողովրդավար կարգերու հաստատումով, արմատականօրէն փոխեց իր գոյատեւման ուղղութիւնը:

Երկիրը ունի իր սահմանադրական կարգերը եւ ամէն ինչ որ կատարուեցաւ, ուղղամտօրէն, գիտակցօրէն եւ ամէնայն ողջամտութեամբ ընթացաւ սահմանադրական կարգերով հաստատուած օրէնքի լոյսին տակ:

Դէ՛հ, քննադատելիք բան կա՞յ, անպայման կայ: Քաղաքակիրթ ոճով քննադատենք:

Թող մեր քննադատութիւնը ըլլայ կառուցողական, կենսագործիչ, օգտակար եւ բարին ընդհանուրին կամեցող:

Յաճախ կը հպարտանանք քրիստոնէութիւնը ընդունող առաջին ազգը ըլլալու իրականութեամբ:

Հագար եօթը հարիւր տասնը ութը տարիէ իվեր ինչ սորուեցանք կիրարկել Քրիստոսի վարդապետութենէն:

Հաւատք քարոզելու մէջ սխալ բան չկայ բայց այդ չէ իմ պատգամս: Քրիստոնէական վարդապետութիւնը քաղաքակրթութեան պատուանդան է: Վարուելակերպ: Անտառի օրէնքէն մարդ արարածը դուրս հանող վարուելակերպ: Յարգանքի եւ խոնարհութեան վարուելակերպ: Հոգածութեան եւ սիրոյ վարուելակերպ: Երկայնամտութեան եւ հանդուրժողութեան վարուելակերպ: «Ծանիր Զքեզ»եան վարուելակերպ: Եւ վերջապէս իմաստութեան արմատը հանդիսացող, մեծամտութենէ հեռու մնացող գիտակցութիւն՝ թէ մեզմէ ոեւէ մէկը ամենագէտ չէ, անսխալ չէ, ամենակարող չէ եւ օրէնքէն վեր չէ:

Հայ ժողովուրդը այսօր վստահութեան քուէն տուած է: Այդ վստահութիւնը յաւիտենական չէ: Այդ վստահութիւնը անխախտելի ալ չէ այլ ետ կոչուելու ատակ՝ օրէնքի սահմաններու պարագիծով:

Տասնամեակներու օրինազանցութիւններէ, հարստահարումէ եւ ինքնահարստացումներէ ետք, այսօր՝ մաքուր, բարոյականի տէր եւ ժողովուրդին ծառայելու ոգին բարձր պահող իշխանութիւն մը ունի հայրենիքը:

Սխալական ե՞ն: Անշո՛ւշտ:

Անփորձ ե՞ն: Յարաբերական է եւ օգնենք շահին այդ փորձառութիւնը:

Թո՛ղ տանք ծառայեն՝ առանց իշխանութեան գլուխ գալու այլոց փափաքը խանգարելու:

Թո՛ղ տանք ծառայեն՝ սատարելով պետութեան եւ ժողովուրդին, որովհետեւ ներքին չէ մեզի որեւէ պատճառաւ, ժողովուրդի զարգացումին եւ հայրենիքի հզօրացումին նպաստող ամենափոքր առիթն իսկ կորսնցնել:

Իմաստութեան գազաթնակէտը մեծամիտ եւ յաւակնոտ ղեկավարներու իմացականութեան մէջ չէ՛ այլ ժողովուրդի հաւաքական կամքին մէջ:

Թո՛ղ տա՛նք ժողովուրդի կամքը իր ժողովրդավարական ընթացքը շարունակէ:

Թո՛ղ տա՛նք եւ օգնենք որ երկիրը խաղաղօրէն զարգանայ, հզօրանայ: Մեր բոլորին հայրենասիրութեան եւ քաղաքացիութեան ճիտի պարտքն է այդ:

Այսօրուայ Հռովմը, Բիւզանդիոնը, Շապուհն ու Թուրքը լորձնաշուրթն դուան են:

Թո՛ղ տա՛նք գարգանայ երկիրը:

\*\*\*\*\*

Յօդուածին մէջ արտայայտուած մտքերը կը պատկանին լոկ յօդուածագրին եւ որեւէ կերպով չեն ցոլացներ անոր ծառայած հաստատութեան կարծիքն ու տեսակէտը:

# ՆԻՔԵՐ ՍԴՅԿ ՀԱՒԷԿԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Շարունակուած էջ 18-էն

Հրջանին շարունակած է գործել խմբապետական ձեւով. հայաբնակ թաղամասերու մէջ «տեղացի եւ գաղթական ընկերներու համար» կազմուած են 18 խումբեր, որոնց մէկ մասը սակայն արդարացուցած չէ ինքզինք: «Ուսանողական միութեան եռանդն ու գործունէութիւնը գովելի է», բայց անխորհուրդ ու համարձակ կարգ մը քայլեր առնելու մէջ պէտք է շրջահայեաց ըլլայ: «Լսարան»ը իր դասախօսութիւններով ժողովուրդը կրթելու գործին մէջ մեծ դեր կատարած է ու այս աշխատանքին իրենց մասնակցութիւնը բերած են ընկերներ Վ. Պարիկեան, Գ. Պապոյեան, Հ. Տօլպազեան, Գ. Անդրէասեան, Ս. Տիրունի եւ տղթ. Ս. Տէմիրճեան: «Անդրանիկ» թատերախումբը, որ իր ներկայացումներով նաեւ կուսակցութեան տնտեսապէս կ'օժանդակէր, ընկ. Յակոբ Առաքելեանի մահուան պատճառով կաղացած է եւ 6 ամսուան ընթացքին միայն երկու ներկայացում կրցած է բեմադրել: Մասնաճիւղին հիմնական դժուարութիւնը տնտեսականն է:

Շրջաբերականը կ'եզրափակէ. «ՍԴՅԿ Հայլէպի Մ.ձիւղը, որ տարիներ շարունակ իր դրօշը վեր բռնած կը քալէ դժուարութեանց ընդմէջէն, եւ պիտի քալէ շարունակ տարիներով մինչեւ հասնի իր յոյսերու եւ իղձերու բաղձացուած վայրը»:

- 1- Աղասի, «Մոռցուած Դերոսներ», Պէյրութ, «Արարատ», 1952, էջ 31:
- 2- Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Հայլէպի վարչութեան նամակը Աղեքսանտրիոյ մասնաճիւղի վարչութեան. 8/21 Նոյեմբեր 1908»:
- Նկատի ունենալ, որ նամակը գրուած է ՍԴՅԿ Զ. Համագումարէն առաջ, ուր որոշուեցաւ նաեւ կուսակցութեան պաշտօնական անուանակոչումը՝ ՍԴՅԿ, որ կը գործածուի մինչեւ այսօր:
- 3- Գեորգ վրդ. Արսլանեան, «Ժիրայր (Յեղափոխական Առաքելի Կենսագրութիւնը 1881-1884)», Կ.Պոլիս, Յ. Գրլըճեան Գրատուն, 1911, էջ 7:
- 4-«Հնչակ».- 25 Յոկտեմբեր 1892, Մեղրունի, «Կիլիկիոյ Վիճակը (28 Յուլիս 1892)» - 25 Նոյեմբեր 1892, Կիլիկեցի, «Նամակ Կիլիկիայից (16 Յոկտեմբեր 1892)» - 30 Ղեկտեմբեր 1892, Կիլիկեցի, «Կիլիկիոյ Տեղեկագիր (23 Նոյեմբեր 1892)» - Նոյեմբեր-Ղեկտեմբեր 1893, Խօսնակ, «Կիլիկիոյ Վիճակը (26 Նոյեմբեր 1893)» - 10 Յունուար-10 Փետրուար 1894, Տօրոսցի, «Կիլիկիան (28 Ղեկտեմբեր 1893)» - 1 Փետրուար 1895, Մեղու, «Նամակներ Թիւրքիայից (20 Յունուար 1895)» - 7 Փետրուար 1895, Մեղու, «Կիլիկիա (2 Յունուար 1895)» - 7 Փետրուար 1895, Տօրոսցի, «Չոք-Մարգուանի Դէպքերի Մանրամասն Նկարագրութիւնները ... Նոր Ձերբակալութիւններ Բէյլանի Եւ Ղըրըխ-Խանի Մէջ (Նոյեմբեր 1894)» - 5 Մարտ 1895, Տօրոսցի, «Նամակներ Թիւրքիայից - Կիլիկիա (20 Յունուար 1895) ... 25 Ապրիլ 1895, Կազիմ [Լեւոն Սկրտիչեան], «Աքսորեալ Եկեղեցականներ»:
- 5-«Հնչակ», 20 Նոյեմբեր 1894. Տօրոսցի, «Տեղեկագիր Կիլիկիոյ (17 Օգոստոս 1894)»:
- 6-Դնչ. Արխիւ. «Արձանագրութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Զ. Պատգամաւորական ժողովի. Կ.Պոլիս, 1909», էջ 26-29:
- 7- Նոյն, էջ 8:
- 8- Նոյն, էջ 15-16:
- 9- Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Հայլէպի վարչութեան նամակը ՍԴՅԿ Գահիրէի վարչութեան. 1/13 Ապրիլ 1909»:
- 10-Դնչ. Արխիւ. «Վկայագիր», Հայլէպի Հնչակեան մ-ճիւղի վարչութիւն, 8 Յունիս 1909:
- 11-Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Հայլէպի վարչութեան նամակը ՍԴՅԿ Գահիրէի Եւ Աղեքսանտրիոյ վարչութիւններուն. 14/27 Յունիս 1909»:
- 12-Միակ բացառութիւնը 1 Սեպտեմբեր 1911 թուակիր նամակն է Ղըուած Եգիպտոսի վարչութեան, ուր կը հաստատուի, որ Կարպիս Պարսամեան կարգապահ կուսակցական մըն է:
- 13- Դնչ. Արխիւ. «Վարդ Մեխակի նամակը Գահիրէի ՍԴՅԿ «Փարամագ» մ-ճիւղի վարչութեան. 27 Յոկտեմբեր 1919»:
- 14- Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Հայլէպի վարչութեան նամակը Գահիրէի ՍԴՅԿ «Փարամագ» մասնաճիւղին. 10 Ղեկտեմբեր 1919»:
- 15- Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Գարատուրանի վարչութեան նամակը ՍԴՅԿ Գահիրէի վարչութեան. 13 Ղեկտեմբեր 1919»:
- 16-Այս մասին բացատրութիւն տեսնել՝ Ե. Ճէրճեան, «Պանդուխտ», Պէյրութ, 2019, էջ 110, 150-151:
- 17-Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Սուրիոյ Գործադիր Յանձնախումբի նամակը ՍԴՅԿ Լիբանանի մասնաճիւղերու Եւ Ուս. Միութեան վարչութիւններուն. Հայլէպ, 8 Յոկտեմբեր 1923»:
- 18-Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Սուրիոյ Շրջանի Գործ. Յանձնախումբի նամակը ՍԴՅԿ Եգիպտոսի Գործ. Յանձ.ին. Հայլէպ 11 Նոյեմբեր 1921»:
- 19-Բնագիրը՝ ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.259:
- 20-Բնագիրը՝ ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.260:
- 21-Դնչ. Արխիւ. «ՍԴՅԿ Սուրիոյ Շրջանի Գործադիր Մարմնի նամակը ՍԴՅԿ Լիբանանի Շրջանի Գործադիր Մարմնին. Հայլէպ, 16 Յոկտեմբեր 1932»:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝**  
**ՇՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



**ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ ԿԸ  
 ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՄԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ  
 ՄԱՂԹԵԼՈՎ ԲՈԼՈՐԻՆ ՔԱԶԱՌՈՂՁՈՒԹԻՒՆ, ՅԱՐԱՏԵՒ  
 ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԻՒՆ**

**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՆԱԵՒ ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԵՒ  
 MASSIS POSTԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՏԱՐԱԾ ՈՐԱԿԱՒՈՐ ԵՒ  
 ԱԶԳԱՆՈՒԵՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ**

**ԴՈԿՏ. ՍԻԼՎԱ Ս. ԳԱՐԱՅԵԱՆ  
 ՏՈՔԹ. ԽԱԶԻԿ ԵՒ ՉԵԼԱ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ  
 ԵՒ ԴՈՒՍՏՐԵՐԸ՝ ԹԱՄԱՐ ԵՒ ՓԱԹԻԼ**



# Մեր Մարտահրավերները ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Երբ վարչապետ Նիկոլ Փաշինեան մեր հայրենիքի դեկորատիվ ստանձնեց եւ բոլոր վարչակարգը փոփոխութեան ենթարկեց, մեր արդի պատմութեան մէջ նոր էջ մը բացուեցաւ որ բոլորս ալ կը յուսանք թէ միշտ փայլուն պիտի ըլլայ ու այդպէս ալ մնայ. հայ ժողովուրդը, ըլլայ հայրենիքի կամ սփիւռքի մէջ մեծամասնութեամբ մեծ խանդավարութեամբ եւ ուրախութեամբ դիմաւորեց այդ հրապարակային բողոքներով եւ խաղաղօրէն տեղի ունեցած յեղափոխութիւնը, որ (Թաւաշեայ յեղափոխութիւն) անունը կրեց, (թէեւ երբեք համաձայն չեմ որեւէ գոյն կամ ածական տալ անոր, որովհետեւ Ուքրանիոյ Նարնջագոյն, Վրաստանի Կարմիր, Ղրղզստանի Կակաչեայ եւ Բիրմանիոյ (Burma), Գեղին յեղափոխութիւնները, նմանապէս Արաբիոյ Գարուն կոչուած յեղափոխութիւնները երբեք այդ երկիրներու մէջ յաջողութիւն կամ բարգաւաճում չարձանագրեցին, եւ կը թուի թէ օտարներու մատն ալ կայ անոնց մէջ:

Հայաստանի յեղափոխութիւնը ժողովուրդի արգանդէն ծնունդ առաւ անարատութեամբ, թէեւ ակնարկութիւններ կան որ օգնութիւններ ստացած են արտերկրէն, եւ անոնցմէ արդէն վարչապետ Նիկոլ Փաշինեան յիշեց թէ Ռուսաստանի հայերէն նիւթական օգնութիւն ստացած են, այսուհանդերձ հարկ է որ յեղափոխութիւնը անարատ պահուի ու շարունակուի:

Ներկայիս մենք նոր պետութիւն մը ունինք երիտասարդ ուժերով, թէեւ անոնցմէ մաս մը անփորձ են, բայց եւ այնպէս կը յուսանք որ աշխատանքները յստակ եւ ուղիղ քայլերով ու յաջողութեամբ պիտի ընթանան, որովհետեւ սխալ որոշումները կարելի է աւերներ գործեն: Պէտք չէ առիթ տալ հին եւ նոր ձորձ Սորոսներուն որեւէ միջոցներով պղծել այս յեղափոխութիւնը, թէեւ անոնցմէ մաս մը ներկայիս արմատներ ունին Հայաստանի մէջ. մենք ծախու հայրենիք չունինք ոչ ալ ծախու դիրքորոշում. ի՞նչ որ ժողովուրդին եւ հայրենիքին հարկաւոր է եւ անոր շահին կը նայի ան պիտի ըլլայ մեր դիրքորոշումը. անոնք որ կը ցանկանան հայ ժողովուրդին նեցուկ կանգնիլ եւ օգտակար ըլլան, թող պետութեան խողովակներով աշխատին եւ թափանցիկ կերպով. պէտք է վերջ տալ գիշերային ջղջիկներու, անոնց շարքին ալ հին կարքերու գործակալներու աշխատանքներուն, որոնք մութին մէջ կը գործեն. պէտք է արմատախիլ ընել այն կողմերը որոնք կը շահագործեն ժողովուրդին տնտեսական վիճակը եւ կը ներթափանցին ընդհանրապէս չքաւոր եւ խեղճ խաւերու մէջ, եւ ինչու չէ մաս մըն ալ խորամանկ եւ մերօրեայ ազգը դաւաճաններու շարքերուն մէջ:

Ներկայիս քանի մը քաղաքացիներ երբ կամայ ակամայ, գիտակցաբար կամ անգիտակցաբար կը գործակցին օտար կազմակերպութիւններու հետ, մերթ մարդու իրաւունքները պաշտպանելու դրօշին տակ, մերթ ազատ խիղճի, մերթ ազատ խօսքի, ազատ մամուլի եւ այլ անուններու տակ, արդեօ՞ք անոնք տեղեակ են թէ ինչ ուղղութեամբ կ'երթան. միթէ մէջ մը հարց տուած են թէ ո՞վքեր են այդ կազմակերպութիւններու ծախսերը կապահովեն եւ ի՞նչու, կամ ո՞ր մայր միութիւններու կը պատկանին եւ անոնց արմատները ուրկէ են, ո՞ր երկիրներու կամ ազգերու կը պատկանին: Մարդու իրաւունքները պաշտպանելը, ազատ խիղճի, ազատ խօսքի, ազատ մամուլի եւ նման հարցերը կիրարկելը մեր բոլորին նպատակն է եւ արդէն աշխատանք կը տարուի այդ առումով. սակայն ի՞նչ կարելի է ըսել այն աղանդաւորներուն, որոնք 301 թիւէն քրիստոնէութիւնը իբր պետական կրօնք ընդունող Հայաստանը կ'ուզեն քրիստոնէայ դարձնել իրենց հասկացողութեամբ. կամ ի՞նչ կարելի է ըսել անոնց որոնք ցոյցեր կը կազմակերպեն միասեռականներու ազատութեան իրաւունքները պաշտպանելու համար: Ներկայիս երկրի աղքատներու թիւը մէկ միլիոնի մօտ է, արդեօ՞ք միասեռականներու իրաւունքները պաշտպանելէ առաջ մենք յաջողած ենք մեր չքաւորներուն իրաւունքները պաշտպանել. արդեօ՞ք կարողացած ենք մինչեւ հիմա մեր գիւղացիին հացը եւ ապրուստը ապահովել, անոր զաւակներուն ուսում եւ կրթութիւն ջամբել, անոր համար առողջապահութեան միջոցառումներ ձեռք ձգել. միթէ մենք կարողացած ենք մեր ժողովուրդին բաւարար աշխատանք հայթայթել կամ թէ արտագաղթը կասեցնել: Հարկ է նախ մեր այս բոլոր կենսական հարցերը լուծենք, եւ նոյն ատեն դուրսէն եկող

զանդիչ եւ մեր երկիրը, ազգը ու կրօնքը կործանել ուզող մտքերը կասեցնենք, դուրսէն եկած անարդար վճարումներու հոսանքին վերջ տանք, եւ Արեւմուտքէն ներառուած քանդիչ սկզբունքներուն վերջ տանք, այլապէս մեծ վտանգի մէջ պիտի գտնուինք:

Նոր Հայաստան կառուցելու համար, ազգային գիտակցութեամբ տոգորուած, ուսեալ եւ զարգացած նոր սերունդ պէտք է պատրաստել. ներկայ սերունդը զարգացնել իսկ պատանիները որոնք ապագայի երիտասարդները եւ ղեկավարները պիտի ըլլան անոնց հետ Ա. ու Բ.-էն ուղիղ ճամբով սկսիլ. հայ երիտասարդին համար հայրենիքը եւ հայութիւնը սրբութիւններու սրբութիւնը պէտք է ըլլայ, ան լաւ գիտակից պէտք է ըլլայ որ անոնք անսակարկելի են, հոն երբեք գիշում չկայ, հոն միայն վեհութիւն կայ. սակայն այդպէս սերունդ մը պատրաստելու համար նիւթական մեծ աղբիւրներու կարիք ունինք, որոնք պետութեան կարողութեան սահմաններէն դուրս են, եւ հարկ է որ ազգովին աշխոյժ աշխատանք տարուի եւ բոլորը մասնակցին զանոնք ապահովելու համար, ի մասնաւորի հարուստ դասակարգը: Քանի՞ համալսարանական հայ ուսանողներ ունինք ներկայիս, որոնք նպաստ կը ստանան իրենց բարձր ուսումը շարունակելու համար. Ալեքսանդր Մանթաշեանց (Մանթաշովը), 19-րդ դարու վերջերը եւ 20-րդ դարու սկիզբը 200 աշակերտներու ուսման ծախսերը կապահովէր. մենք հիմա 21-րդ դարու մէջ ենք եւ փառք Տիրոջ Մանթաշեաններ ունինք: Մենք յաջողեցանք Երեւանի Ամերիկեան Համալսարանի համար հարիւր բարերարներ (սիւներ) ապահովել, որոնցմէ իւրաքանչիւրը տարեկան տասը հազար տոլար պիտի նուիրէ, որ ամէն տարի մէկ միլիոն պիտի գումարէ եւ հինգ տարուայ ընթացքին հինգ միլիոն տոլար պիտի ըլլայ օժանդակութեան գումարը, այդպէս նախատեսուած է. մեզի համար մեծ յաղթանակ մըն է այն, ուրեմն ի՞նչու նոյնը չենք ըներ կրթական միւս բարձր հաստատութիւններուն համար, սկսեալ Երեւանի Պետական Համալսարանէն եւ կրթական միւս հաստատութիւններու համար, եւ ինչու չէ արդիական ժամանակակից նոր հաստատութիւններ կառուցելու համար:

Ֆինլանտայի մէջ տեղի ունեցած տնտեսական համաժողովի մը ընթացքին, երկրի վարչապետուհին իր ելոյթի ընթացքին յիշեց թէ Ֆինլանտայի տարեկան եկամուտը բացառի եւ թուղթի վաճառքէն աւելի շատ է քան թէ Սէնտ Արաբիոյ նաֆթի տարեկան եկամուտէն եւ բոլորին ուշադրութիւնը գրաւելով այն թիւերով փաստեց թէ շատ մը տնտեսական եկամուտներու ուրիշ միջոցներ ալ կան նաֆթէն առդին: Հայաստանը տնտեսական զարգացումի խիստ կարիք ունի, արդի գործարաններու, էլեկտրոնային, IT, եւ այլ մարգերու մէջ եւ այս բոլորը դրամագլուխի կը կարօտի: Երկիրը այդ կարողութիւնը չունի, սակայն մենք սփիւռք մը ունինք որ հարիւրաւոր նաֆթի հանգերու համագոր է, եւ պէտք է փոխադարձ շահերով օգտուիլ այդ կարելիութիւններէն. սփիւռքի ներդրումով Հայաստանի մէջ գործարաններ հիմնուին, հայը գործ ձարէ, ճակատի քրտինքով ապրուստը ապահովէ եւ գործատէրն ալ օգտուի. եթէ Synopsys, Credence, VMware եւ շատ մը ուրիշ ընկերութիւններ յաջողած են այդ ընելու, վստահ ենք որ բոլորն ալ պիտի կարենան յաջողիլ: Սփիւռք-Հայրենիք կապերու մասին կը խօսուի, ի՞նչ կապերու մասին է ան. ելոյթներով, արտայայտութիւններով, նկարներով եւ թերթերուն մէջ տեղ գտնելով չէ որ Սփիւռք-Հայրենիք կապերը կը զարգանան, իսկական աշխատանք պէտք է այդ կապերը ամրապնդելու համար:

Մենք ողորմութիւն չենք ուզեր, այլ փոխադարձ շահեր: Յեղասպանութենէն 105 տարիներ ետք եթէ մեր ազգը ողորմութիւնով պիտի ապրի վայ է եկեր մեր գլխուն:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated Every Friday

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**  
**ՏԻԿ. ՇԱՔԷ ՊԱԼԸԳՃԵԱՆ**  
**Ի ՅԻՇԱՏԱԿ ԿԱՐՊԻՍ ՊԱԼԸԳՃԵԱՆԻ**



Importers And Wholesale Distributors Of  
European And Mediterranean Foods  
Glendale CA 961204  
[www.krainpco.com](http://www.krainpco.com)

*Merry  
Christmas*

AND HAPPY NEW YEAR



Men's Sahara Soccer Team



Շնորհալուր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ



Men's Angel Soccer Team



# Արաբական Աշխարհ. Համառօտ Ակնարկ 2019ի

## Գ. ՄՈՒՆՅԵԱՆ

### Սուրիա



Սուրիոյ քաղաքացիական պատերազմին առնչութեւր երկրի Հիւսիս-Արեւելեան շրջաններուն մէջ 2015-էն ի վեր յառաջացած թրջական բանակի ներխուժումը, պատճառ դարձաւ ուժեղ ընդհարումներու նոր հողատարած քննրու բռնագրաւումներու եւ տեղահանութիւններու: Այս բոլորին մէջ իրենց մասնակցութիւնը բերին «Եփրատի վահան» թրջական գործառնքը, սուրիական բանակը, սուրիական դեմոկրատական ոյժերը եւ Սուրիոյ արաբական բանակը: Գրեթէ բոլոր կողմերն ալ ունէին նոյնանման լոգունգ մը «Պայքար ահաբեկիչներու դէմ»...:

Սուրիական ցամաքամասին վրայ, հակամարտութեանց մէջ զգալուն տեղերն ունէին ուսական բանակի շոկատները, որոնց ազդու միջամտութիւններուն շնորհիւ, տեղ տեղ անդորրութիւն հաստատելու փորձեր եղան: Աւելի ուշ ամերիկեան բանակն ալ իր մասնակցութիւնը բերաւ:

Գալով սուրիական բնակին, ան իր ազդեցութիւնը զգալի դարձուց ահաբեկիչներու դէմ պայքարին մէջ: Իր օդային ու ցամաքային հակա-յարձակումներուն գլխաւոր թիրախներն էին ահաբեկիչներու կեդրոնացումներն ու իսրայէլեան հրթիռներու դէմ հակա-օդային պաշտպանական միջոցառումները, ներկայիս երկրի գլխաւոր քաղաքներն արդէն ազատագրուած են:

Արդարեւ, Սուրիոյ կառավարութեան առաջնահերթութիւններէն են խաղաղութեան ամբողջական վերահաստատումը Հիւսիս Արեւելեան ձկրէի քրտաբնակ շրջաններուն մէջ, իսրայէլի կողմէ բռնագրաւուած կոլանի բարձունքին վերատիրանալը եւ երկրի աւերեալ շրջաններու վերաշինութիւնն ու տնտեսութեան բարեւալումը: Իսկ կոլանի հարցով ԱՄՆ-ի նախագահ Թրամփի տուած միակողմանի ճանաչողական յայտարարութիւնը՝ ամբողջոցին իսրայէլի ի նպաստ ըլլալուն համար՝ դժգոհութեան նոր ալիք մը ստեղծած է արաբական աշխարհէն ներս, ինչպէս նաեւ՝ իսլամ երկիրներու մօտ:

Սուրիական տագնապին պատճառով յառաջացած միլիոնաւոր քաղաքացիներու տեղահանութեան ու արտագաղթի պատճառով, զանգուածային տեղաշարժեր ստեղծուած են դէպի Թուրքիա, Յորդանան, Լիբանան եւ արտասահմանեան այլ երկիրներ: ՄԱԿ-ի տրւեալներով ցարդ սուրիացի գաղթականներուն տրամադրուած գումարի չափը կը գերազանցէ 37 միլիարտ տոլարը: Միայն վերջին ամիսներու ընթացքին իտլիպէն եւ քրտաբնակ շրջաններէն շուրջ 120,000 հոգի գաղթած են դէպի Թուրքիա:

Սուրիոյ հիւսիսը գտնուող քարիւղով հարուստ դաշտերն սկսած էին շահագործուիլ օտար ընկերութիւններու կողմէ եւ ապօրէն ճանապարհներով քարիւղ վաճառել: Այս առթիւ ԱՄՆ-ի ոյժերն սկսան տեղաւորուիլ ձկրէի մօտակայ շրջաններու քարիւղի դաշտերուն մօտ եւ համագործակցութեամբ Սուրիոյ ժողովրդային ոյժերուն, նպատակ ունենալով պաշտպանել քարիւղի շահերը: Թրամփի վարչակազմի

ցանկութիւնն է միշտ պարտուած տեսնել Տահէշի իսլամ ծայրայեղականները, նուազեցնել իրանի ազդեցութիւնը Սուրիոյ վրայէն եւ ապա քաղաքական լուծում մը տալ երկրի այժմու տագնապին: Միւս կողմէ ուսական ազդեցութիւնն ալ աւելի հեղինակաւոր դարձած է Սուրիոյ մէջ, առաւել եւս ամրացնելով երկրէն ներս իր ծովային եւ օդային ռազմախարիսխները:

### Իրաք



Սատտամ Հիւսէյնի վարչակազմի տապալումէն ետք, երկրի անկալուն վիճակը շարունակուեցաւ: Իրաքի տնտեսական եւ ընկերային բազմապիսի հարցերու լուծման աշխատանքները գրեթէ ապարդիւն դուրս եկան: Քաղաքական կեանքը առաջին կիսամեակին, համեմատաբար տանելի վիճակ ունեցած էր: Սակայն տարւոյն երկրորդ կիսուն ժողովրդային ընդդիմադիր շարժումն սկսելով, հարիւր հազարաւորներ հակակառավարական բողոքի ցոյցեր նախաձեռնեցին: Իսկ որպէս հակադարձութիւն, այս բոլորի հետեւանքով հարիւրաւոր սպանութիւններ եղան: Յուցարարներու պահանջն է վերջ տալ փտածութեան, անգործութեան եւ մեծատիրական ձգտումներուն:

Այս բոլորի ետին թաքուն մասնակցութիւն մը ունին իրանի ներկայ իշխանութիւնները, որոնք այստեղ եւս կը ձգտին պարտադրել իրենց ազդեցութիւնն ու շրջանի գերակալութիւնը:

### Եգիպտոս

Եգիպտոս յարաբերաբար խաղաղ տարի մը բոլորելով, կը շարունակէ իր դանդաղ յառաջխաղացքը երկրի տարբեր ոլորտներու, գլխաւորաբար ապահովական, տնտեսական վերականգնումի եւ կրթական ու թէքնիքագիտական ընկերա-մշակութային բնագաւառներու մէջ:

Շուրջ 84 միլիոն բնակիչ հաշուող արաբական այս մեծագոյն երկրին այժմու նախագահ Ապտէլ Ֆաթթահ Ալ Սիսին, իր ընտրութենէն՝ (2014) ի վեր հակաշուի տակ առած է ծայրայեղական «Իսլամ Եբդայրներ» կազմակերպութիւնը: Իսկ մամլոյ ազատութիւնը կը մնայ կաշկանդուած եւ երկիրը կը նկատուի լրագրողներու աշխարհի մեծագոյն բանտերէն մին:

### Եմէն

Ծայրայեղ թշուառութեան մէջ տուալտող այս երկիրը վարչակազմի բուռն կռիւներու եւ յեղաշրջումներու թիրախ ըլլալէ չի դադրիր: Պատերազմական վիճակը կը շարունակուի չորս տարիներէ ի վեր: Երկրի

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՌՈԶԻՆ ՏԵՐ ԴԱՒԻԹԵԱՆ





# Արաբական Աշխարհ. Համառօտ Ակնարկ 2019ի

ներկայ վարչակազմը կը վայելէ Մէուտական Արաբիոյ անմիջական հովանաւորութիւնն ու աջակցութիւնը: Իսկ ընդդիմադիր «Հուլի»ները գործնական աջակցութիւն կը ստանան Իրանէն: Սակայն այս ահաւոր կռիւներու իբրեւ հետեւանք հուլիները բաւական հողատարածք կորուստ ունենալով հանդերձ իրենց գոյամարտը կը շարունակեն:

Եմէնի քաղաքական տագնապը լուծելու համար Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը (ՄԱԿ)ը նախաձեռնած է երկկողմանի բանակցութիւն մը, խաղաղ ու համախոհ կարգավիճակ մը հաստատելու նպատակով: Այս առնչութեամբ ՄԱԿ-ի պատուիրակը՝ Մարթին Կրիֆֆիթ կը ծրագրէ մօտ լուս ապագային, Շուէտի մէջ բանակցային ժողով մը կազմակերպել հակամարտ ոյժերու միջեւ:

## Լիպիա



Լիպիոյ մէջ թրքական ընդլայնակեայ օժանդակութիւնը հակա-կառավարական խմբակցութիւններուն երկրի պառակտեալ վիճակը առաւել եւս սաստկացուց:

Ազգային բանակի հրամանատար գործակալ իսլայտ Մահմուդ յալանց որ ծովուծն ու օդուծը պատրաստ են եւ բանակը կարող է թիրախ դարձնել որեւէ ուժ որ մուտք կը գործէ լիպիական սահմանէն ներս:

Իր հերթին Ուաշինկթըն քննադատեց Թուրքիա-Լիպիա համաձայնութիւնը:

Նշենք որ Ռուսիան եւս մտահոգուած է թրքական ոյժերու տեղակայման առնչութեամբ: Արդարեւ Թուրքիոյ հետ Լիպիայի կնքած անվտանգութեան համաձայնութիւնը Մոսկուայի համար մտահոգիչ դրութիւն կը ստեղծէ:

Իր հերթին, Արաբական Լիպիան իր վերջերս գումարած նիստի ընթացքին, բուռն կերպով քննադատեց Թուրքիան ու իրանը, միջին արեւելքի կայունութիւնը խախտելուն համար:

## Սէուտական Արաբիա

Սէուտական Արաբիոյ ներկայի գլխաւոր հարցերէն մին է Եմէնի մէջ իր ազդեցութեան հզորացումը: Արդարեւ այդ երկրի համախոհական համակիր կառավարութիւնը չէ կրցած իր լրիւ հակակշիռին ենթարկել Եմէնի բովանդակ տարածաշրջանը: Այստեղ գործող հուլիներու ընդդիմադիր գինեալները տեղ տեղ իրենց գերակայութիւնը հաստատած են եւ կը վայելեն իրանի գինեալ աջակցութիւնն ու անմիջական հովանաւորութիւնը:

Սէուտական Արաբիոյ եւ Եմէնի միջեւ ձգտեալ վիճակին խաղաղ լուծում մը տալու համար ՄԱԿ-ի որոշումով եւ հովանաւորութեամբ պիտի կայանայ միջազգային երկխօսութիւն եւ բանակցութիւն:

## Լիբանան



2019-ի առաջին ինը ամիսներու ընթացքին Լիբանանի կառավարութիւնը եւ մայրաքաղաք Պէյրութի քաղաքապետական խորհուրդը՝ լուծած էին բնակչութիւնն ու տնտեսութիւնը յուզող կենսական հարցերը (ելեկտրականութիւն, գաղթականներու պարագան, գործազրկութիւն, աղբերու կուտակում եւայլն):

Ժողովրդային դժգոհութիւնն ու բարենկարգութեանց գործընթացի կաղացումն իր գազաթնակէտին հասաւ երբ յանկարծ, Հոկտեմբերի 17ին, յայտարարուեցաւ հեռախօսային ծրագրի մը (watsapp) արդէն իսկ բարձր տուրքերու վրայ եղած նոր չաւելումը:

Արդարեւ եթէ 1975ի քաղաքացիական կռիւները հատուածական բնոյթ կը կրէին, այս անգամ բովանդակ երկրի տարածքին, տասնեակ քաղաքներու եւ գիւղական շրջաններու մէջ, ժողովրդային անակնկալ եւ համատարած պողոթնում մը յառաջացած էր, պահանջելով վերջ տալ բոլորին, այսինքն թէ կաշառակերութեան, թէ փտածութեան, շահամոլութեան, ապականած իշխանութեան ու ընդհանուր ամլութեան...:

Արդարեւ պահանջներու իրաւատէր ժողովրդային շարժման իրենց մասնակցութիւնը բերին բոլոր անկուսակցականները, երիտասարդներն ու ուսանողները, առանց քաղաքական եւ կրօնական խտրականութեան: Խաղաղ ցուցերը հետզհետէ տարբեր գարգացումներ ունենալով՝ տեղի ունեցան մայրուղիներու եւ կամուրջներու փակումներ եւ տեղ տեղ ապահովական ոյժերու հետ բախումներ:

Այս բոլորի պատճառով կազմալուծուեցաւ երկրի առեւտրա-արդիւնաբերական կեանքը, փակուեցան դրամատնային գրեթէ բոլոր հաստատութիւնները, արժէզրկուեցաւ լիբանանեան լիրան եւ սեւ շուկայի վրայ անակնկալ ոստում մը արձանագրեց ամերիկեան տողարը ու օտար դրամանիշները:

Կառավարութեան լրիւ կազմի հրաժարականը պահանջող ժողովրդային զանգուածներու ցանկութիւնն իրականացաւ: Բոլորի ցանկութիւնն է արհեստավարժ եւ անկողմնակալ, երիտասարդ մասնագէտներէ բաղկացած նոր կառավարութեան մը կազմութիւնը: Հանրապետութեան նախագահ Միշլ Աունի հրապարակային խոստումով, յառաջիկայ օրերուն պիտի յայտարարուի նոր կառավարութեան մը կազմութիւնը: Այս մէկը՝ գուցէ ըլլայ տօնական նուէր ամանորի առիթով, որպէս բալասան երկրի խռովայն ժողովուրդին:

Սպասենք եւ չուսանք:

[www.massispost.com](http://www.massispost.com)  
daily news updates

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՄԱՅՏԱ ԵԱՂՍՁԵԱՆ



ՄԱՍԻՍ - 2020

### Արեւմտեան Թեմի Առաջնորդ Սրբազան Զօր Սուրբ Ծննդեան Պատգամը

ԷՄՄԱՆՈՒԷԼ՝ ԱՍՏՈՒԱԾ ԸՆԴ ՄԵԶ

Էմմանուէլ՝ Աստուած ընդ մեզ. այս է ողջ խորհուրդը Ս. Ծննդեան, տօնախմբութիւնը մեր կեանքէն ներս Աստուծոյ ներկայութեան՝ մանուկ Յիսուսի Ս. Ծննդեան հրաշքին ի տես: Յիսուս մանուկին ծնունդով Աստուած Ինք կ'այցելէ մարդկութեան՝ մեկնարկը տալով իր երկրային փրկչագործ առաքելութեան: Աստուած կը մարդանայ մեզի հետ ըլլալու, մեր մէջ բնակելու, իր հրաշալի ծնունդով մեզ վերստին ծնունդ պարգեւելու, որպէսզի մեր կեանքը ուղեգծենք իր կեանքին կենդանի օրինակով ու Աստուծոյ պատուիրաններուն համահունչ:



Ամէն անգամ, երբ կը տօնախմբենք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի Ծնունդը, մեր կեանքէն ներս իր մշտամնայ եւ մշտանորոգ ներկայութիւնը եւ ներգործութիւնը կը խոստովանինք նախեւառաջ, կը վկայենք, թէ «Աստուած ընդ մեզ» է եւ այդ գիտակցութեամբ մեր կեանքին ընթացքը կ'ողողենք դէպի բարին եւ գեղեցիկը, դէպի աստուածային կատարելութիւն ու ստեղծագործ կեանք:

Երբ կ'անդրադառնանք մեր կեանքէն ներս Աստուծոյ ներկայութեան, յայտնութեան պահ մըն է, որ կ'արձանագրենք, որով եւ հոգեւոր վերածնունդ կ'ապրինք՝ նոր խոստովանելով, նոր տեսիլքներով եւ նոր յանձնառութիւններով գարգարելով մեր կեանքը:

Ս. Ծննդեան եւ Ամանորի հոգեգմայլ տրամադրութիւններով խանդավառ, որպէս հոգեւոր սպասաւոր Հայց. Առաքելական մեր մայր սուրբ եկեղեցւոյ, մենք մեր աղօթքը կը բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Տէրը մեր սրտերը վերածէ բեթղէհէմեան մսուրի՝ մանուկ Յիսուսը հոն պատսպարելու համար: Եւ անշուշտ մեր աղօթքին մէջ կը յիշենք Խաղաղական Ժամերգութենէ Սգ Ներսէս Շնորհալիին «Շնորհեա՛ Մեզ Տէր» երգը ուր կ'ըսէ՞ «Եւ քանզի մանուկ ծնաւ, Որդի եւ տուաւ մեզ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց, զի Աստուած ընդ մեզ է: Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, զի Աստուած ընդ մեզ է: Եւ սքանչելի խորհրդակից, զի Աստուած ընդ մեզ է: Եւ Աստուած հօր իշխան, զի Աստուած ընդ մեզ է: Եւ իշխան խաղաղութեան, Հայր հանդերձելոյ յաւիտենին Տէր Աստուած ընդ մեզ է»: «

Մեր նախնիք Աստուծոյ մշտական ներկայութեան գիտակցութեամբ եւ հաստատումով առաջնորդած են իրենց կեանքի ճամբան՝ կերտելով հայրենիք ու եկեղեցի, հոգեւոր առաքելութիւն եւ արժէքներ, բարոյականութեան բարձր չափանիշներ եւ մշակոյթ, գիտութիւն եւ արուեստ: Առանց երկնչելու, ընկրկելու կամ վարանելու մեր նախնիք կերտած են ապագայ գալիք սերունդներուն համար, որովհետեւ համոզումն ունէին, թէ «Տէր Աստուած ընդ մեզ է»:

Աստուած ընդ մեզ գրիստոնեայ հաւատացեալը երբ բարձրաձայն կ'արտասանէ այս բառերը, անկասկածօրէն անդրադարձումի պահ մը կ'ունենայ, հոգեւոր պայծառակերպութիւն մը, որ իր մէջ կ'արթնցնէ շարժումը նոր կեանքին: Հոգեւոր բարձր ինքնագիտակցութեան կամ, եթէ կ'ուզէք՝ ինքնափտահոլութեան այդ զգացողութեամբ կարելի կ'ըլլայ պատասխանել Աստուծոյ կոչին՝ մեզի տրուած կեանքը իրմով արժեւորելու համար:

Այսօրուայ աշխարհի նոր պայմաններու բերումով յաճախ կը թերանանք աղօթքով համեմել մեր կեանքը, որուն որպէս արդիւնք ինքնըստինքեան կը հեռանանք Աստուծոյ՝ նմանելով այն ծառին, որու արմատները հողին մէջ չեն եւ բնականօրէն՝ կեանքը սահմանափակուած է ժամանակի մը մէջ: Մարդու պարագային ժամանակի մը մէջ

### Ծնունդ՝ Տօն Ցնծութեան եւ Նուիրատուութեան

Յիսուս Քրիստոսի Ծնունդը աշխարհի մեծագոյն հրաշքն է, քանի որ իր ծննդեան օրը երկրագունդի վրայ անմահ դէպք մը կը պատահէր եւ մարդկային կեանքի մէջ եզակի եւ անկրկնելի իրադարձութիւն մը տեղի կունենար: Այդ օր երկինքի փառքը երկրի վրայ կ'իջնէր եւ երկինք երկրի հետ կ'ողջագործուէր: Այդ օր Աստուած Քրիստոսի մէջ կը մարդանար եւ մարմին կ'առնէր, որպէս զի իր ստեղծած մարդ արարածները յաւիտենապէս իրեն եւ իրարու հետ մէկ ըլլան:



Աւելի քան քսան դարեր առաջ, Աստուած աննախընթաց ձեւով մը կուգար իր ստեղծած մարդ արարածները իրենց մեղսալի կեանքէն փրկելու: Կուգար իր Միածին Որդիին միջոցաւ, որ կը ծնէր ամենահամեստ պայմաններու մէջ, աշխարհածաւալ Հռովմէական կայսրութեան պատկանող աննշան երկրի մը՝ Պաղեստինի փոքրիկ աւանի մը՝ Բեթլեհէմի անշուք այրի մը մէջ:

Պարզ ու խոնարհ ծնունդ մը... պարզ երեխայ մը որ արտաքնապէս ոչ մէկ տարբերութիւն ունէր ուրիշ երեխաներէ: Պարզ բայց վեհ ծնունդ մը, շատ լուրի բայց աշխարհը դղրդացնող ծնունդ մը: Պարզ մանկիկ մը որուն գալուստը հրեշտակները աւետեցին, երկրին թագաւորը խոովեց, Արեւելքի իմաստուն մոգերը ոտքի հանեց եւ բերաւ մինչեւ Բեթլեհէմ:

Այդ պարզ մանկիկին տարեդարձն է, որ կը տօնէ քրիստոնեայ աշխարհը. տարեդարձ մը, որ ցնծութեան եւ նուիրատուութեան առիթ կ'ընծայէ մարդոց:

Արդարեւ, Յիսուսի Ծննդեան տարեդարձը տօն է ցնծութեան: Տօն է ցնծութեան որովհետեւ Յիսուս՝ Աստուծոյ Գերագոյն Նուէրն է մարդկութեան: Ան Աստուծոյ անհուն սիրոյն տեսանելի եւ շօշափելի մարմնացումն է:

Բեթլեհէմի դաշտերուն մէջ գիշերուան իրենց հօտերուն պահպանութիւն ընող հովիւներուն Աստուծոյ հրեշտակը կ'աւետէր. «Ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին ուրախութիւն պիտի պատճառէ» (Ղուկ. 2.10): Բեթլեհէմի մէջ ծնող Մանուկը «Յիսուս» կ'անուանուէր, որ կը նշանակէ Փրկիչ, որուն կոչումն ու առաքելութիւնը պիտի ըլլար մեղքի պատճառով Աստուծոյ եւ իր արարածներուն միջեւ ստեղծուած անջրպետը կամրջել եւ մեղքի ճիրաններուն մէջ գերի դարձած մարդկութիւնը ազատագրել իր մարմնի, մտքի ու հոգիի ներքին կապանքներէն:

Յիսուս Քրիստոսի Ծնունդը տիեզերական տարողութեամբ ուրախութիւն եւ ցնծութիւն պատճառող մեծ աւետիս մըն էր, չնաշխարհիկ դէպք մը, որովհետեւ Ան «Էմմանուէլ» էր, այսինքն «Աստուած մեզի հետ»: Ան կուգար ըլլալու մարմնացումը մարդկային ցեղի ազնուագոյն բաղձանքներուն եւ շքեղագոյն իտէալներուն: Ան կուգար ըլլալու արդարութեան Արեգակը, ճշմարտութեան եւ սիրոյ Աղբիւրը:

Յիսուսի Ծննդեան Տարեդարձը Տօն է նաեւ Նուիրատուութեան: Յիսուսի Ծնունդը գուշակող Արեւելքէն Պաղեստին ճամբորդող իմաստուն մոգերը երբ Բեթլեհէմ հասան, զիրենք առաջնորդող աստղը եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր Յիսուս Մանուկը կը գտնուէր: Մատթէոս Աւետարանիչը այսպէս կը գրէ «Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը Մարիամի հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեցին մանուկին: Ապա բացին իրենց արկղները եւ Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռ» (Մատթ. 2.11):

Արեւելքի մոգերը իմաստութիւնն ունեցան գիտակցելու, որ Բեթլեհէմի «նորածին մանկիկը» Աստուծոյ մասնաւոր Պարգեւն էր մարդկութեան: Առ ի երախտագիտութիւն Աստուծոյ այս մեծ Պարգեւին՝ անոնք ընծայեցին իրենց լաւագոյն նուէրները: Մոգերու նման, մենք ալ մեր

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԱՒՕ ԵՒ ԱԼԻՆ ՄԱԿԱՐԵԱՆ



# Մկրտիչ Խրիմեան Հայրիկի Ծննդեան 200-Ամեակը (1820-2020) ԽԱՉԻԿ ԸՆԴՈՒՄ

Այս տարի, 2020-ին հայ ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, արժանավայել շուքով եւ արդար հպարտութեամբ, պիտի նշէ հայ ժողովուրդի հոգեւոր, կրթական, քաղաքական-հասարակական ակնաւոր գործիչներէն ՆՍՕՏՏ Մկրտիչ Խրիմեան Հայրիկ կաթողիկոսի ծննդեան երկու հարիւր ամեակը:

Հայ ժողովուրդին համար, քրիստոնէութիւնը ընդունելէ ի վեր, հոգեւոր եւ ազգային փոքրաթիւ գործիչներ ունեցած է, որոնք իրենց հիասքանչ գործերով մեր հոգեւոր եւ մշակութային կեանքի լուսաշող աստղեր եղած են: Անոնց անունները ոսկէ տառերով գրուած են հայ ժողովուրդի պատմութեան էջերուն մէջ:

Անոնցմէ մին է Ամենայն Հայոց շնորհազարդ, կորովի կաթողիկոս՝ Մկրտիչ Խրիմեան Հայրիկը: Ան իր ծաւալած վիթխարի ծառայութիւններով, մեր ժողովուրդի վերջին երկու դարերուն յաւերժութեան ճամբան բացաւ, իսկ իր օրինակելի կեանքով՝ ջահաւորեց մեր ողջ հայութեան կեանքը:

Խրիմեան Հայրիկ եղած է ուսուցիչ, հրապարակագիր, վարդապետ, եպիսկոպոս Վանի Վարազայ վանքի եւ Տարօնի Ս. Կարապետ վանքի վանահայր, եղած է Պոլսոյ Պատրիարք, ծառայած է Երուսաղէմի Սուրբ Աթոռէն ներս, եւ ի վերջոյ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետ:

Խրիմեան Հայրիկ ծնած է Վանի Այգեստան քաղաքը 4 Ապրիլ 1820-ին, փոքր տարիքէն կը կորսնցնէ իր հայրը: Մեծցած է իր հօրեղբօր ինամքին տակ:

27 տարեկան հասակին, երբ ամուսնացած էր Մարիամ Սիվիքեանի հետ եւ մէկ գաւակ ունէր, Վանէն անցած էր Պոլիս, Եւրոպա մեկնելու եւ բարձրագոյն ուսումը ստանալու համար: Նիւթական պատճառներով չկրցաւ այս երազը իրականացնել, Պոլսոյ մէջ գործեց որպէս ուսուցիչ:

Պոլսոյ մէջ էր, որ կը կորսնցնէր իր մայրը, կինը եւ մէկ հատիկ աղջիկ գաւակը: Խրիմեան Հայրիկի վրայ շատ ծանր կը ճնշէին այս կորուստները:

1853-ին կը վերադառնայ իր ծննդավայրը Վան եւ կ'որոշէ վանական ըլլալ: Աղթամարի վանքին մէջ կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ՝ վարդապետ:

Խրիմեան վարդապետ շատ արթուն եւ պայծառ մտքի տէր էր, խանդավառ, ուսումնաստեղ եւ սրախօս հոգեւորական էր:

1854-ին, հոգեւորական իր լաչնածաւալ աշխատանքի կողքին, կը սկսի գրական եւ հասարակական գործունէութեան:

1855-ին Վանի մէջ կը ձեռնարկէ «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, որ գաւառի հայութեան համար նորութիւն մըն էր այդ հրատարակութիւնը, իր բովանդակութեամբ եւ հայկական ոգի դրսեւորումով: Թերթը շատ սիրուեցաւ ժողովուրդին կողմէ:

1862-ին կ'ընտրուի վանահայր Տարօնի Ս. Կարապետ վանքի: Այդ տարիներուն թերթին անունը կը փոխէ եւ կ'ըլլայ «Արծուի Տարօնոյ» թէ՛ Վարազայ եւ թէ՛ Ս. Կարապետ վանքերու վանահայրութեան շրջանին, բազմաթիւ դպրոցներ բացաւ, եկեղեցիներ կառուցեց եւ գիրքեր հրատարակեց:

1869-ին կ'ընտրուի Պոլսոյ Պատրիարք: Հոն եղած շրջանին, իր մշտատեւ քննադատութիւններուն, յանդուգն եւ կորովի գործելակերպին պատճառաւ, թրքական իշխանութիւնները զինք Երուսաղէմ կ'աքսորեն:

1878-ին Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեանի կարգադրութեամբ, Խրիմեան Հայրիկ, Մինաս Զերագի եւ Նարպէշի ընկերակցութեամբ կը մեկնին Պերլին, իբրեւ հայկական պատուիրակութեան նախագահ:

Այդ պատուիրակութեան նպատակն էր Պերլին երթալ, հոն տեղի ունեցած մեծ տէրութեանց ժողովին ներկայանալ եւ անոնցմէ խնդրել, որ գործադրութեան դնել հայկական նահանգներու բարեկարգութեանց, Սան Ստեֆանոյի մէջ մեծ տէրութեան ժողովի 16-րդ յօդուածով առնուած որոշումին գործադրութիւնը: Բայց հայկական պատուիրակութիւնը, ինչպէս յայտնի է համայն հայութեան, մեծ պետութիւններ քաղաքական մութ հաշիւներով եւ Ռուսիոյ դէմ քայլ մը առնելով Պերլինի մէջ 16-րդ յօդուածը փոխարինելով 61-րդ յօդուածով, որուն հիման վրայ եւրոպական վեց պետութիւններ պիտի հսկեն հայկական գաւառներու



բարենորոգման աշխատանքները, փոխանակ միայն Ռուսիան պիտի ընէր այդ գործը:

Պոլիս վերադարձին Խրիմեան Հայրիկ ժողովուրդին կը պատմէ ժողովի մանրամասնութիւնները եւ պատահած խեղդատակերգութիւնը եւ «Երկաթեայ շերեփ» հանրածանօթ առածը:

Մէկ կողմէ Խրիմեան Հայրիկ կը յայտնէ այդ ժողովին իր յուսախաբելութիւնը, միւս կողմէ հայ ժողովուրդին կը յորդորէ որ հոգեփոխուի եւ գիտնայ արժէքը գէնքի ուժին եւ ինքնապաշտպանութեան:

Խրիմեան Հայրիկի անձին, հոգեւորականին, հայրենասէրին եւ ազգասէրին մասին հիացմունքով արտայայտած են իրեն ժամանակակից մտաւորականները եւ գործիչները, մանաւանդ ժողովուրդը պաշտամունքի հասնող սէր եւ յարգանք ունէր «Հայրիկին» հանդէպ: Այսպէս Աւետիս Ահարոնեան կը գրէ. «Խրիմեան այս օրինական հոգեւորականը մէն միւսի մի խորունկ խորհուրդ է: Անոր կեանքը, նիստ ու կացը, հագուելու եղանակը, նրա կերակուրները անգամ (հռչակաւոր թանի ապուրը) անսահման սէր եւ հետաքրքրութիւն կը ստեղծէր ժողովուրդին մօտ: Նրա ամէն մի խօսքը անքննադատելի եւ վսեմ պատգամ է»:

26 Սեպտեմբեր 1893-ին Էջմիածնի մէջ ձայներու միաձայնութեամբ զինք Ամենայն Հայոց կաթողիկոս կ'ընտրեն:

Իսկ հայ ազատագրական շարժման ձեւաւորման եւ գաւառի հայութեան զարթօնքի գործին մէջ իր անփոխարինելի դերը կատարած է Խրիմեան Հայրիկը, որուն որպէս հետեանք վանի մէջ ծնունդ առաւ «Սեւ Խաչ», «Պաշտպան Հայրենեաց» եւ «Արմենական կուսակցութիւնը» ինքնապաշտպանական ջոկատները:

Կարելի չէ գրել ՆՍՕՏՏ Խրիմեան Հայրիկ կաթողիկոսին մասին, առանց չիշելու, թէ Ան հակառակ իր արտակարգօրէն զբաղած ըլլալուն, բազմաթիւ գրութիւններ եւ հատորներ ունի, որոնց մէջ կ'անդրադառնայ հողին սիրոյն մասին, հայ ընտանիքի գաղափարին, հայ աւանդութեանց

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՄԱՀԱԿ ԵՒ ՄԱՐԻԱ ՍԷՐԱՅՏԱՐԵԱՆ



**ՄԱՍԻՍ - 2020**

**Ամրոդուլէն Արմաշ**

**15-րդ Դարու Եւրոպայի Վերածնունդը  
Բաղեշի Ամրոդուլի Համալսարանը Եւ Չորս Մեծերը  
ԴՈՎՏ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

**Վերածնունդը**

Եւրոպայի մէջ տպագրութեան գիւտով 15-րդ դարուն վերածնունդ տեղի ունեցաւ որուն արձագանգը Հայ Եկեղեցւոյ եւ ազգի մտաւոր եւ իմացական կեանքին վրայ անջնջելի հետք թողուց: Գերմանիոյ մէջ Եոհան Կիւթեմպերկ 1450 թուին կատարեց տպագրութեան գիւտը, եւ վաթսունամեակ մը ետք, Յակոբ Մեղապարտ անուն, այլապէս բոլորովին անծանօթ հայորդին, որպէս ռահվիրայ նախակարապետ հայ տպագրիչը, վենետիկի մէջ հիմնեց առաջին հայ տպարանը: Տպագրեց առաջին վեց հայերէն գիրքերը 1513 թուականէն սկսեալ, ու 150 տարիներ ետք Ոսկան վարդապետ Երեւանցի Ամսդերտամի մէջ առաջին Աստուածաշունչ Մատեանը տպագրեց 1666 թուականին:



Պատրիարքութիւնը 1600 թուականէն սկսեալ յաջորդող մէկ դարու ընթացքին անկումի մատնուած էր, որովհետեւ Պատրիարքական Աթոռ ելած եւ իջած էին 55 պատրիարքներ, իւրաքանչիւրը միայն երկու կամ երեք տարի պատրիարքութիւն վարելով: Յոռի եւ քանդիչ սովորութիւն մըն էր եղածը երբ հոգեւոր եւ ազգային իշխանութիւնը, մէկը միւսին ձեռքէն խլելու մոլուցքով, Աթոռին գահավէժ անկումին պատճառ կը դառնար:



Յատկանշական պարագան այն էր որ Հայաստան եւ Ս. Էջմիածին չէին կրցած գլուխն անցնիլ վերածնունդի այդ մեծ շարժումին, եւ սակայն հայորդիք անձամբ, ինչպէս Յակոբ, նոյնպէս Աբգար Դպիր Եւզոկիացին ու որդին Սուլթանշահ, Նաչատուր Կեսարացին եւ Գրիգոր Մարգուանցին յաջորդաբար, թէեւ դանդաղ եւ սակայն յառաջընթաց քայլ պահեցին որպէս հետեւորդները Յակոբ Մեղապարտին, ու հայ գրականութեան մեծագոյն երաշխիքը եղող անցեալի մատեանները հետզհետէ տպագրեցին: Դարակազմիկ անցման այդ շրջանին Բաղեշի (այժմ Պիթլիս) Ամրոդուլի Համալսարանը եղաւ հայ գրչագրութեան ամենավերջին եւ ամենէն բեղուն կեդրոնը երբ այլեւս կարիքը չկար գրչագիր հատորներ ընդօրինակելու Հայաստանի եւ Կիլիկիոյ վանքերուն մէջ, քանի որ տպագրութեան հրաշալի գիւտը անցեալի մատեանները կարգաւ տպագրութեամբ պիտի յաւերժացնէր: Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի գնահատումով «Հայ տպագրութեան գիւտը հայ միտքի զարգացման նպաստաւոր փաստ մը եղաւ արեւելքի ազգերուն մէջ ուր Հայք յառաջընթաց գտնուեցան»:

**Հորիզոնական Գիծը**

Անվարան սկիզբէն կրնամ հաստատել որ Ամրոդուլէն Արմաշ եւ Արմաշէն Երուսաղէմ, ու ապա Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանք փոխանցումի հորիզոնական գիծը հետեւողական եղաւ, երբ նկատի ունենանք Արմաշական սերունդի պատկառելի դէմքերէն բարձրաստիճան հոգեւորականներ Մաղաքիա Օրմանեանն ու Եղիշ Դուրեանը, Կիւլէսէրեան Բաբգէնն ու Գուշակեան Թորգոմը, բոլորն ալ նուիրապետական Աթոռներու նուիրեալ գահակալներ, որոնց շունչին տակ ուսանած Փառէն Մելքոնեան եւ Շահէ Գասպարեան արմաշական եպիսկոպոսները, կարգաւ Երուսաղէմն ու Անթիլիասը արժանաւորապէս կնքեցին Ամրոդուլի եւ իրենց ուսումնարան Արմաշի անկրկնելի աւանդով: Երբ այս տողերը կը գրեմ կը հաստատեմ վերեւի ընթացքը որպէս Անթիլիասի Դպրեվանքի միջին սերունդի աւարտականներէն մին թէ անցեալի կամուրջն ու ներկայի արգասիքը որքան հարազատ գնացքով զարգացան ու հասցուցին հոգեւորականներու ընտիր փաղանգ մը:

**4. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը**

Մինչդեռ արեւմտահայութիւնը մշակութային մարզէն ներս հերոսական գործ կը կատարէր տպագիր գիրքերու եւ ուսումնարաններու բարձր մակարդակով, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը նոյն շրջանին առաջնորդողի դեր կատարելու իր առաքելութեան մէջ կը ձախողէր 17-րդ դարու սկիզբէն սկսեալ մինչեւ յաջորդող ամբողջ 100 տարիները:

**Ամրոդուլի Համալսարանը**

Այդ միջոցին փրկարար լոյս մը կը ծագէր Բաղեշի Ամրոդուլի վանքէն ուր մեծ վարդապետ վարդան Բաղիշեցիի ուսուցչապետութեան տակ Չորս Մեծերը կը գրաւէին Հայ Եկեղեցւոյ կեդրոնները ու ձեռք կ'առնէին անոր ղեկավարութիւնը, նոյն ինքն վարդան Բաղիշեցին եւ իր երեք աշակերտները՝ Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան եւ Գրիգոր Շլթալակիր պատրիարքները: Դպրանոցին բուն անունը «Ամլորդի» եղած է Չաքարիա քահանայի կնոջ Եղիսաբէթի ամուլ որովայնէն ծնած իր որդւոյն Ս. Յովհաննէս Մկրտչի անունով որուն մասին Աւետարաններուն մէջ կը կարդանք: Ամրոդուլ աղաւաղուած անունն է Ամլորդիին:

Ամրոդուլի վանքը 15-րդ դարուն հայ գրչութեան յատուկ դպրոց մըն էր հիմնուած Գրիգոր Տաթևացիի աշակերտ Դանիէլ վարդապետին կողմէ ուր դասաւանդած է աստուածաբանութիւն, կրօնագիտութիւն եւ գրչագրական արուեստը: Դպրոցը համբաւի տիրացաւ Ներսէս Մոկացի եւ ապա վարդան Բաղիշեցի վարդապետներու ուսուցչապետութեան տակ, երբ արդէն Ամրոդուլ Համալսարանի կոչում ստացաւ իր «45 միաբաններով, 40 կարդացողներով, եւ 5 մշակներով»: Վարդան Բաղիշեցի վերանորոգեց դպրանոցը, հարստացուց մատենադարանը, եւ բարձր աստիճանի հասցուց գրչութեան արուեստը: Ձեռագիր մատեաններու հարուստ եւ հաւաստի օրինակներ հոնկէ հասած են մեզի որոնց լիակատար գրացուցակը վարդան Բաղիշեցի ինք կազմած է որպէս «Ամրոդուլ Մատենադարանի Գրացուցակ»:

**Վարդան Վարդապետ Բաղիշեցի**

Վարդան Բաղիշեցիի սկսած մտաւորական եւ ուսումնական տեսչութեան ներքեւ իր ամենէն յալտնի երեք աշակերտները, Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան, եւ Գրիգոր Շլթալակիր պատրիարքներ, միասին զարգացան ու կազմեցին 18-րդ դարու արեւմտահայ մտաւորական սերունդին առաջատար



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ**

# 15-րդ դարու Եւրոպայի Վերածնունդը

Փառաբանող, տաննակ մը եւ ակելի աստուածաբանական եւ կրօնագիտական ծաւալուն հատորներ հրատարակելով, այս անգամ տպագիր անշուշտ, որոնց տիտղոսաթերթ էջերը կը վկայեն հնադարեան մեր ձեռագիրներու մանրանկարներուն տպագրեալ առաջին ձեռնարկները:

Վարդան Վարդապետի ձեռքով շարք մը պատմագիրներու ձեռագիր վերջին օրինակները գրուեցան, Փալատոս Բիւզանդ պատմիչէն մինչեւ Թովմա Մեծոփեցի պատմիչ, որոնք այսօր Երեւանի Մատենադարանին մնայուն եւ ամենահաւաստի աղբիւրները կը ներկայացնեն: Երեսնամեակ մը առաջ երբ 8-րդ դարու Ղեւոնդ Երէց հայ պատմիչի Արաբներու արշաւանքի երկը անգլերէնի կը թարգմանէի որպէս աւարտաճառ, գոյութիւն ունեցող լաւագոյն թիւ 3070 ձեռագիր օրինակը տեսայ եւ օգտագործեցի Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանին մէջ, ուր հասած էր Ամրդոլի Համալսարանէն՝ էջմիածնի ճամբով: Յիշատակարանին մէջ գրուած է թէ մատենը վերստին նորոգուած էր Վարդան Բաղիշեցիի ձեռքով, նոյն ձեռագրին գրիչներէն մին ինք ըլլալով 1669 թուին: Այլ օրինակ մը եւս տեսայ, թիւ 1902 մատենը, որ նոյնպէս կը գտնուէր Ամրդոլի Վանքի ձեռագրատան մէջ Վարդան Բաղիշեցիի հոգածութեան ներքեւ մինչեւ 1690, երբ Վարդան զայն յանձնած է Ս. էջմիածնի ձեռագրատան: Ահա հռչականուն մտքի վառարան մը եւս որ մինչեւ հարիւր տարի առաջ կանգուն էր եւ զոհ կ'երթար ցեղասպանութեան: Վարդան Բաղիշեցի վախճանած է 1704 թուին:



### Ամրդոլի Գրական Արգասիքը

Յովհաննէս Կոլոտ Պատրիարք պիտի փրկէր արեւմտահայոց կացութիւնը իր 26 տարիներու նուիրեալ եւ երկարատեւ գահակալութեան ընթացքին (1715-1741) հրատարակելով նաեւ Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան վերաբերեալ հիմնական վեց գիրքեր, որոնք են «Սուրբ Գիրքս որ կոչի Մաշտոց», «Գիրք Պարապմանց Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ յաղագս մարդանալոյ Միածնին», «Տօնացոյց եւ Աւետարանացոյց», «Պարզաբանութիւն քերականութեան կարճարօտ եւ դիւրիմաց», «Գիրք որ կոչի Հարանց Վարք», եւ «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Յօհաննու»:

Այդ երկերէն մին Աղեքսանդրոյ Կիւրեղ Պատրիարքի (+444 թ.) «Գիրք Պարապմանց»ն է որուն յունարէն բնագրէն լատիներէնի թարգմանութիւնը ծանօթ է որպէս Scholia de incarnatione unigeniti, որուն

բնագիրներն ալ լրիւ չեն հասած, բացի հայերէն թարգմանութենէն որ յունարէն բնագրէն թարգմանուած է Դաւիթ Հիւպատոս անուն գրիչին կողմէ, որ ցայսօր կը մնայ միակ ամբողջական բնագիրը բանասիրութեան առջեւ: Զայն գրաբարէն անգլերէնի թարգմանած է անգլիացի հայագէտ Գոնիբեր 1907 թուին Լոնտոնի մէջ: Տարիներ առաջ իմ մագիստրոսի աւարտաճառի նիւթը եղաւ սոյն «Գիրք Պարապմանց»ը, որ պարզապէս կը նշանակէ «ուսումնասիրութիւն» եւ կը վերաբերի Քրիստոսի երկու բնութեանց մէկ անձի մէջ միաւորման: Գիրքին հեղինակ Աղեքսանդրոյ Կիւրեղ Պատրիարքը ներկայ եղած է Եփեսոսի 431 թուի Տիեզերական Գժողովին եւ տիրապետած անոր:

### Ամրդոլէն Արմաշ Արմաշէն Երուսաղէմ եւ Անթիլիաս

Կ. Պոլսոյ Պատրիարքութեան յետագայ դարերը երջանկաբեր եւ արդիւնաւէտ եղան շնորհիւ այդ օրինակելի եւ նուիրեալ երեք պատրիարքներուն՝ Կոլոտի, Նայեանի, եւ Շղթալակիրի, առաջին երկուքը Կ. Պոլսոյ, եւ Շղթալակիրն ալ Երուսաղէմի պատրիարքութեանց համար, որոնք իրաւամբ ստացած են «ամենիմաստ եւ աստուածաբան վարդապետք» տիտղոսը: Գրիգոր Շղթալակիր (1715-1749) փրկեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը իր ծանրածանր պարտքերէն, իսկ Յովհաննէս Կոլոտն (1715-1741), ու Յակոբ Նալբան (1741-1749) Պատրիարքները իրենց վարչական ու մանաւանդ գրական վաստակով հիմնովին շրջեցին Կ. Պոլսոյ Պատրիարքութեան դիմագիծն ու գնացքը, որոնց յաջորդեցին արժանաւոր գահակալներ, միշտ պահելով Ամրդոլի գերագանց վաստակն ու աւանդը, ինչպէս Գէորգ Քերեստէճեան, Մկրտիչ Խրիմեան, Ներսէս Վարժապետեան, Խորէն Աշրգեան, Մատթէոս Իգմիրլեան եւ Մաղաքիա Օրմանեան Պատրիարքները:

Անկասկած անոնք եղան Ամրդոլէն Արմաշ կամրջող պատրիարքները, յատկապէս Գէորգ Պատրիարք որ իսկոյն եղաւ Գէորգ Դ Կաթողիկոս Ամենայն Հայոց ու հիմնեց Մայր Աթոռի Գէորգեան ձեմարանը, իսկ Աշրգեան Պատրիարքի օրով ալ Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոսի անասանջ ջանքերով բացուեցաւ Արմաշու Դպրեվանքը, երկուքն ալ որպէս Ամրդոլի Համալսարանին հարազատ հետեւորդ ուսման կեդրոնները: Ամրդոլէն Արմաշ անցքը յիւրախ Օսմանեան պետութեան հովանաւորութիւնն ալ ինքնաբերաբար ապահովեց 1863 թուի Ազգային Սահմանադրութեամբ, դարձնելով զայն օրինական, ճշդուած եւ հաստատ: Կ Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը Ազգային Սահմանադրութեան ուժով առաջնորդողի ընդհանուր դերը վերցուց իր վրայ Հայ Եկեղեցւոյ հեղինակութիւնը բարձր պահելով եւ լրիւ ստանձնելով Օսմանեան պետութեան ենթակայ նուիրապետական եւ Առաջնորդական բոլոր հայ կեդրոններու դեկը, ներառեալ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, Սիւսի եւ Աղթամարի Կաթողիկոսութիւնները, Եփեսոսի, Իրաքի եւ Միջին Արեւելքի թեմական հաստատութիւնները:

# HAPPY HOLIDAYS

# HOLIDAYS

and a wonderful New Year from your friends at Umpqua Bank

Thanks for helping our community grow!

Avo Markarian, VP  
700 N. Central Ave #150  
Glendale, CA 91203  
818-254-3498  
avomarkarian@umpquabank.com



Umpqua Bank logo featuring a tree icon and the text 'UMPQUA B • A • N • K'.

1-866-4UMPQUA (1-866-486-7782) [umpquabank.com](http://umpquabank.com) Member FDIC Equal Housing Lender SBA Preferred Lender

# Հայկական Տաղասացութիւն 1100-1722 (Ա. մաս)

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ



քաղաք մը) կը ներկայանայ, կը խօսի, կ'ողբայ կամ կ'ուրախանայ որպէս մարդ: Մեր գրականութեան ամենայայտնի դիմաւորութիւններէն մէկն է Ներսէս Շնորհալիի «Ողբ Եղեսիոյ» ստեղծագործութիւնը: Այդ երկարաշունչ քերթուածի մէջ Եղեսիա քաղաքը կը ներկայանայ որպէս վշտահար որդեկորոյս մայր. «...Ես մայր էի բազմորդի, / Անթիւ ծնայ դուստր եւ որդի / Չորս մայրաբար դիեցուցի, / Գեղեցկատիպ յօրինեցի, / Վայելչապէս զարդարեցի»:

Բանաստեղծութիւններու վերջին բաղադրիչներն են յանգը, բաղաձայնոյթը եւ առձայնոյթը: Առաջինի համար ամենայայտնի օրինակն է Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի «Հագարտողեան առ Մանուէլ» ստեղծագործութիւնը: Անոր 1016 տողերը յօրինուած են միեւնոյն հանգով («-ին»), ինչպէս՝ «...պատկերին», «...հրեշտակային», «...չարին»:

Իսկ բաղաձայններու եւ ձայնաւորներու կրկնութեամբ գրաւոր միտքը շեշտաւորելու ընտիր գիտն ու արուեստը կը պատկանի Գրիգոր Նարեկացիին: Ականջ տանք «ծ» եւ «չ» ձայներուն. «Մաւալէր ծաղիկ ծովային», «Շուշանն շողեր հովտին, շողշողեր դէմ արեգականն»:

Ահա այս պատուանդանի վրայ կառուցուեցաւ նոր գրականութիւն մը, որ լի էր երկրային կեանքը եւ անոր շնորհները լիովին ապրելու տրամադրութեամբ: Անոր լայնօրէն նպաստեցին արեւելեան Հայաստանի մէջ Զաքարեաններու իշխանութիւնը, իսկ Կիլիկիոյ մէջ՝ Ռուբինեան եւ Հէթումեան թագաւորութիւններու գոյութիւնը: Այդ շրջանը «Հայկական գրական վերածնունդ» մըն էր, որ ունէր աշխարհիկ ուղղութիւն, մարդասիրութեան եւ հայրենասիրութեան ընդհանուր գաղափարներու ներքոյ փառաբանեց սէրը, ծաղիկը, գարունը եւ գեղեցկուհին, խորապէս թափանցեցաւ նաեւ իմաստասիրական հարցերու, ինչպէս՝ «Կեանք-մահ», «հոգի-մարմին»:

Իսկ, երբ երկիրը օտարներու ասպատակութեան եւ իշխանութեան ենթակայ կ'ըլլար, հայ տաղասացը կ'երգէր ազգի վիշտը եւ կը ստեղծէր պանդխտութեան սրտածմլիկ տաղեր: Ժամանակի գրական լեզուն միջին հայերէնն էր, կամ՝ ռամկօրէնը, պարզ, անմիջական, բոլորին համար հասկնալի: Այդ շրջանի երեւելի բանաստեծներէն Փրիկը ըսեր է. «Փրիկը հանցեղ պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ»: Իսկ հիմա, յարգելի ընթերցող, վայելենք հեղինակներու փունջ մը՝ ժամանակարգական կարգով:

Նախ յիշենք ինքնատիպ բանաստեղծ Գրիգոր Տղայ Դ. կաթողիկոսը (1133-1193): Ան դասական սերունդի եւ նորերու մէջ կամուրջ մը եղաւ: Որպէս կաթողիկոս յաջորդեց Ներսէս Շնորհալիին: (Շնորհալիի աւագ եղբոր վասիլին տղան էր): Բացի դաւանաբանական եւ միջկեղեցական բազմաթիւ



Հայ ընթերցողի հորիզոնի վրայ երեւելի են հայկական գրականութեան փայլուն շրջաններ, ինչպէս՝ Ոսկեդարը, Զարթօնքի շրջանը եւ Գեղապաշտ շրջանը: Անոնք կ'արժանանան գրասէրի ուշադրութեան ու անոնց լաւագոյն օրինակները կը վերահրատարակուին նորատիպ գիրքերու շապիկի տակ: Դժբախտաբար, յարգելի ընթերցող, յաճախ անտես եւ անտիպ կը մնայ հայկական միջնադարեան տաղասացութիւնը, աշխարհիկ բնոյթ ունեցող հեղինակային ստեղծագործութիւններու 600 տարուայ հարստութիւն մը: Այսօր կը փափաքիմ ձեզի հետ բաժնեկցիլ ու ճաշակել այդ գանձարանէն պատուելիներ:

Նախ կ'ուզեմ յետադարձ ակնարկ մը կատարել ու տեսնել, թէ հայ տաղասացը, աշխարհիկ թէ հոգեւորական, իր մատենադարանին մէջ ի՞նչ գանձեր ունէր, իր նախորդները ի՞նչ ժառանգած էին անոր ու եթէ ան ուզէր տաղ, գանձ, առակ, ողբ, ներբող, վարք կամ խրատ հեղինակել՝ իր ձեռքին տակ ի՞նչ պաշար ունէր: Կարճ պատասխան. գրական հարուստ անցեալ մը: Մանրամասնօրէն՝ հետեւեալները...

Հայկական լեռնաշխարհի կամ Կիլիկիոյ մէջ գործող հայ բանաստեղծին ծանօթ էր Դաւթակ Քերթողը եւ անոր ներբող-ողբը՝ «Ողբ ի մահն Զեւանշերի մեծի իշխանին»: Ան գրուած էր Աղուանից աշխարհի իշխանի մահուան կապակցութեամբ ու կը համարուի հայկական աշխարհիկ քերթողութեան հնագոյն օրինակը: Հետաքրքրական է գիտնալ նաեւ, թէ «այբբենական» բանաստեղծութիւն է ան, որու առաջին ութը տունները կը սկսին այսպէս. Աստուածածին, Բեկումն, Գլորեցաւ, Դարձաւ, Երկին, Զանգիւտ, էր նստեալ, Ընդ ամենայն..., ու այսպէս մինչեւ «Քէ»:

Հայ տաղասացին ծանօթ էր նաեւ ծայրակապ բանաստեղծութիւնը, այսինքն այն ստեղծագործութիւնը, որու տուններու սկզբնատառերը եթէ վերէն վար հաւաքէք՝ կը յայտնաբերէք հեղինակի անունը կամ այլ բառ մը: Մայրակապ բանաստեղծութեան գեղեցկագոյն նմուշներէն մէկը մեզի տուեր է Սահակոսիստ երաժշտուհին: Տրդ դարու մենակեաց երգահան էր ան, որ կ'ապրէր Գառնիի ձորի քարանցաններէն մէկուն մէջ ու կը դասաւանդէր վարագոյրի ետեւէն: Անոր հեղինակած «Սրբուհի Մարիամ» երգը ունի Ս, Ա, Հ, Ա, Կ, Դ, Ո, Ի, Խ եւ Տ տառերով սկսող ինը տուն:


Մեր բանաստեղծին ծանօթ էր նաեւ դիմաւորութիւնը: Գրական արտայայտութեան ձեւ մըն է ասիկա, ուր անշունչ առարկան (ինչպէս՝

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐՄԷՆ ԵՒ ՌԻԹԱ ՊԱՐԱՆԵԱՆ



### Հայկական Տաղասացուքին 1100-1722



գործերէ, Գրիգոր Տղան ազգը դաստիարակելու համար գրի առաւ նաեւ խրատական բանաստեղծութիւններ: Կարդանք նմոյշ մը. «Մի՛ շարժել զքո լեզուդ, որ քեզ օգուտ չէ, / Եւ մի՛ խօսիր բանս որ քեզ կօրուտ է: / Լեզու, լցեալ հրով, նա սուր սրեալ է, / Անիրաւ գորոյ պարծանք եւ զարդարանք է»: Յաջորդ քառեակի մէջ հեղինակը կ'ապրի մարդկային տենչերու եւ իրականութեան ստեղծած հակասութեան խոր տառապանքը. «Կայ եւ հուր սիրոյ, բայց սարուցեալ է, / Եւ հորմն քաղցրածիզ՝ խորշակահար է: / Ջերմ եմ առ Աստուած, այլ ցուրտն մերձ է, / Կամիմ բուսացանել, բայց սոթն չար է»:

Յովհաննէս Պլուզ Երզնկացին (մօտ. 1220-93) խոհա-խրատական քառեակներու ռահվիրան է: Ծնած եւ ապրած է Եկեղեցի գաւառի Երզնկա քաղաքի մէջ: Հոգեւոր գրականութեան աւելցնելով, ան մշակեց նաեւ տիեզերագիտական, քերականական եւ իմաստասիրական աշխատութիւններ, Երզնկայի հայ արհեստաւորներու «Եղբայրութիւն» կազմակերպութեան կանոնագրութիւնը: Յ. Երզնկացին կ'ուզեմ յիշել իր հայրեններով (քառեակներ՝ որոնք իւրաքանչիւր տողի վրայ ունին տասնհինգ վանկ): Անոնց մէջ կը տեսնենք կեանքի եւ մահուան իմաստասիրութիւնը՝ աշխարհիկ գեղեցկութիւններու ենթապատկերի վրայ... «Աշխարհս է ի ծով նման, ով որ գայ՝ անթաց չմնայ, / Յայտ ծովս ես ի նաւ մտայ, գնաց նաւս եւ ես չիմացայ, / Յեզեր մօտեցել եմ ես, վախեմ թէ քարի դիպենայ, / Քակտի իմ աղուոր շինուածս, ու տախտակս մէկմէկանայ»: Բանաստեղծին

ակնարկած «աղուոր շինուած»ը մեր աշխարհիկ կեանքի ձեռքբերումներն են, գործ, տուն եւ այդ տան կողքին փոքրիկ պարտէզ մը, գոր կը մշակենք, եւ որու պտուղը կ'ուզենք վայելել: Սակայն մահն է, որ կու գայ եւ այդ պարտէզը արմատախիլ կ'ընէ: Իսկ «տախտակս մէկմէկանայ» արտայայտութիւնը, սարսափելի բան, մեզի կը յիշեցնէ կեանքի անխուսափելի վախճանը, այն իրականութիւնը, թէ աշխարհը եւ անոր փայլը անցաւոր են: Մէկ այլ քառեակի մէջ Յ. Երզնկացին մեզ կը զգուշացնէ որ մարդը չնմանի օձին, այսինքն չունենայ երկճիւղ լեզու. «Լեզուն է գործիք բանի / Եւ արդարոյն գերզ խալաս ոսկի, / զՄարդոյն է մէկ փերթ արել եւ օձին է երկու ճղղի, / Էնց մարդն որ երկու խօսի՝ զմէկն քաղցր ու մէկն լեղի, / Եղբայր է օձին եղել ու գնորա անէծքն ընդունի»:

Ֆրիկը (13րդ դար) հասարակական նիւթերու առաջին բանաստեղծն է: Ապրած է մոնղոլական ասպատակութիւններու եւ տիրապետութեան օրերուն: Ֆրիկը հայրենասէր է, ժողովրդասէր, արդարամիտ: Երկրի քաղաքական անկայունութեան եւ ընկերային քայքայման խնդիրներով աչրող, դառնացած անհատ է ան: Ֆրիկը կ'ենթարկուի հարստահարութեան եւ գերեվարութեան: Ընդվզելով՝ հասարակութեան անունով եւ անոնց լեզուով կը պոռթկայ, հանդէս կու գայ աստուծոյ առջեւ ու արդարութիւն կը պահանջէ: Ահա այսպէս են Ֆրիկի խօսքերը. «Աստուած արդար եւ յիւրաւի... / Հանդէս ունիմ բան մի վիճի, / Թէ դու լսել քո ծառայի... / Որքա՞ն տանջեն զմեզ յաշխարհի, / Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի, / Եւ դու ներես յամենայնի / Անտես առնես զմեզ ի վշտի / Գիտես, մարմին ենք մսեղի, / Գէմ արձան չեմք ինչ երկաթի»: «Գանգատ» բանաստեղծութիւնը կ'օգտագործէ հակադրութեան հնարքը ու կը նկարագրէ երկրի բեւեռացուած վիճակը. «Մէկին հազար ձի եւ ջորի, մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի... / Մէկին հազար դեկան»՝ ոսկի, / մէկին ոչ փող մի պղնձի»: Այդպէս էր եղած ընկերութեան վիճակը, որովհետեւ՝ «...Որ թաթարն եղաւ թագաւոր, / Ու գողերն եղիր (դրաւ) մեծաւոր»:

Բայց, յարգելի ընթերցող, պիտի անցնին տասնամեակներ, զարուսը դարձեալ պիտի գայ, հայկական տաղասացութիւնը իր պայծառ գոյներով եւ պատկերներով դարձեալ պիտի ծաղկի Հայկական լեռնաշխարհի մէջ ու այս անգամ պիտի յայտնուին վարդի եւ սոխակի այլաբան երգիչը՝ Կոստանդին Երզնկացին, երագի եւ իրականութեան հակադրութեան մէջ տառապող ինչպէստուր Կեչառեցին, Յովհաննէս Թլուրանցին, որ սէրը պիտի երգէ անկաշկանդ պոռթկումերով, այրի նկարիչ Մկրտիչ Նաղաշը, որ պիտի դառնայ պանդուխտի ձայնը, բաժանման եւ կարօտի երգիչ տարագիր կաթողիկոս մը՝ Գրիգորիս Աղթամարցին եւ ուրիշներ: Այն ժամանակ սէրը պիտի յաղթահարէ չարին եւ մահուան: Այդ բոլորը կը կարդանք յաջորդ յօդուածի մէջ:

\* Ոսկի դրամի միւս կողմ:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՍԻՆԱՆ ՍԻՆԱՆԵԱՆ  
SINANIAN DEVELOPMENT**



**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՆԵՐՈՎ  
 ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՍՓԻՒՈՒՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
 ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**LAW OFFICES OF  
 ALICE TAVOUKJIAN  
 ALHAMBRA, CA**







**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ**

**Middle Eastern &**

**European Cakes**

**Delicious Pastry**

**For All Occasions**

**(Glendale, Anaheim & Pasadena)**

**KOLANJIAN BROTHERS**



# Տոմարագիտական 2020 Նահանջ Տարւոյ Հայ Եկեղեցւոյ Գլխաւոր Տօները Ըստ Եկեղեցական Տօնացոյցի

ԴՈՏԿ. ԶԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Նահանջ Տարին

Յառաջիկայ 2020 տարին Նահանջ Տարի է, փետրուար 29-ի յաւելեալ օրով: Ներկայ ուսումնասիրութիւնը յառաջիկայ նոր տարուան Հայ Եկեղեցական տօներու Օրացոյցը կը ներկայացնէ իր գոյգ ՇՆ Տարեգիրներով, որոնց առաջնորդութեամբ մինչեւ Բուն Բարեկենդան Շ տարեգիրով, եւ մնացեալ ամիսներուն ալ Ն տարեգիրով կը ճշդուին Հայաստանեայց Եկեղեցւոյ տօները: Եթէ սովորական տարիներուն մէկ Տարեգիրով միայն կ'առաջնորդուինք, Նահանջ Տարիներուն գոյգ Տարեգիրներուն հարկ է հետեւիլ, առաջինը՝ մինչեւ Բուն Բարեկենդանի տօները ճշդելու համար, եւ երկրորդը՝ մնացեալ ամիսներուն, անմիջապէս նշելով Չատիկի Կիրակին համաձայն երկրորդ Տարեգիրին:

Սոյն ուսումնասիրութիւնը պատրաստուած է հայ եկեղեցականներու, ընծայարաններու, եւ ժառանգաւորներու համար, ուր ընթերցողը որպէս ուղեցոյց պիտի գտնէ յաջորդ տարուան 366 օրերու վրայ բաշխուած Հայ Եկեղեցւոյ գլխաւոր տօնակա-տարութիւնները: Գրութեանս նպատակն է նաեւ Տօնացոյցի երկու հատորներուն ցուցմունքներով եւ հրահանգներով խմբաւորել տարուան լրիւ օրերուն կառուցն ու յիշատակելի դէպքերը ինչպէս նաեւ Պահքի օրերը: Հաշուարկումները յատկապէս՝ կատարուած են յառաջիկայ 2020 տարուան համար եւ ըստ այնմ հիմնական թուականները ճշդուած, գլխաւորութեամբ Ս. Ծննդեան ՅՈՒՆԻՄԱՐ 6-ի Երկուշաբթի օրուան, եւ Ս . Չատիկի Կիրակին՝ ԱՊՐԻԼ 12-ին:

## Չորս Խմբաւորումներ

### Տէրունի, Սրբոց, Պահոց, Ազգային

Հայաստանեայց Եկեղեցին տարուան ընթացքին չորս խմբաւորումներով դասաւորած է Տէրունի, Սրբոց, եւ Ազգային տօները, լայն տեղ տալով նաեւ Պահոց օրերուն: Տօներուն մեծագոյն մասը շարժական տօներ են, այսինքն տարուէ տարի իրենց ամսաթիւերը կը փոխուին որովհետեւ անոնք կը սահմանուին Չատիկի Կիրակի օրուան թուականին համեմատ: Անշարժ տօները կը տօնուին անշարժ թուականներով, առանց կախում ունենալու Չատիկի թուականէն, նկատի ունենալով որ անոնք Աստուածաշունչի տուեալներու հիման վրայ ճշդուած ըլլալով անխախտ կը մնան: Պահքի օրերը թիւով գերակշիռ են Տէրունի եւ Սրբոց տօներուն բաղադրամասերը: Հայ Եկեղեցւոյ տօները յատուկ դասաւորումով եւ իրենց ուրոյն նկարագրով չորս դասակարգերու վրայ բաշխուած են ըստ հետեւեալին: Չատիկի թուականներով կը նշենք ստորեւ:

**ՏԷՐՈՒՆԻ ՏՕՆԵՐ**, որոնք Տիրոջ Յիսուսի Քրիստոսի կեանքին եւ տնօրինութեանց պաշտամունքը կը կազմեն, ինչպէս նաեւ Սուրբ Մարիամ Աստուածածնի յատուկ յիշատակութիւնն ու յարգանքը կը մատուցանեն համաձայն իր կեանքի այլազան հանգրուաններուն: Տէրունի տօներ են նաեւ Ս. Խաչին նուիրուած չորս տօները որոնք նշուած են իրենց կարգին:

**ՍՐԲՈՑ ՏՕՆԵՐ**, որոնց յիշատակին ձօնուած յատուկ օրեր են, թէ՛ Սուրբ Գրական անձերուն եւ թէ՛ եկեղեցւոյ նախնազոյն վկաներուն եւ Եկեղեցական Հայրերուն: Մինչ առաջինները Աստուածաշունչ Մատենով սրբագործուած են, վերջինները եկեղեցւոյ կողմէ կանոնականացուած Սուրբերն են, որոնցմէ շատեր Հայ Եկեղեցին ընդունած է եւ պատիւ ընծայած անոնց որպէս Քրիստոսի վկաներն ու բարեխօսները:

**ՊԱՀՈՅ ՕՐԵՐ**, որոնց նպատակն է ապաշխարանքով պատրաստ ըլլալ Տիրոջ կեանքի հանգրուաններուն արժանի դառնալու համար: Եկեղեցին մեծ կարեւորութիւն ընծայած է քառասնօրեայ Մեծ Պահքին եւ առ հասարակ պահեցողութեան, որպէսզի հաւատացեալը իր հոգեկան կեանքը մաքրելով կարենայ մօտենալ Աստուծոյ:

**ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐ**, որոնք կը յիշատակեն հայոց պատմութեան անկիւնադարձային դէպքերը՝ Աստուածաշունչի թարգմանութիւնը, Մեսրոպեան տառերու Ոսկեղարեան գիւտն ու հայ մշակոյթը, հայոց Քրիստոնէութեան մեծ դարձին յարակից դէպքերը, Վարդանանց հերոսամարտն ու Հայ Եկեղեցւոյ յատուկ դարադարձերը: Նկատի ունենալ սա պարագան որ բոլոր տօները հոգեւոր ցնծութեամբ արտայայտուած են մեր սրբազան շարականներուն միջոցաւ, զմայլելի կերպով, արձագանք

հանդիսանալով Աւետարանական պատմմաներուն:

## Տէրունի Տօներ

Յիսուսի կեանքն ու Տնօրինութիւնները  
Ա. Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտութիւն: Չորսն ալ անշարժ տօներ են՝

- Սուրբ Ծնունդ Յունուար 6
- Մկրտութիւն Յունուար 6
- Անուանակոչութիւն Յունուար 13
- Տեառնընդառաջ Փետրուար 14
- Բ. Քրիստոսի Յարութիւնը եւ յարակից տօներ
- Գ. Տարուան բոլոր կիրակիները եւ
- Բուն Բարեկենդան Փետրուար 23
- Ղազարոսի Յարութիւնը Ապրիլ 4
- Ծաղկազարդ Ապրիլ 5
- Աւագ Շաբաթ Ապրիլ 6-11
- ՁԱՏԻԿ Կիրակի Ապրիլ 12
- Համբարձում՝ Հինգշաբթի Մայիս 21
- Երկրորդ Ծաղկազարդ Մայիս 24
- Հոգեգալուստ Մայիս 31
- Դ . Պայծառակերպութիւն (Վարդավառ) Յուլիս 19 (Չատիկէն 14 շաբաթ ետք)

## Սուրբ Աստուածածնի Տօներ

- Աւետում Ապրիլ 7 (անշարժ)
- Գիւտ Տիրոջ Յուլիս 5
- Վերափոխում՝ Կիրակի Օգոստոս 16
- Գիւտ Գօտույ Օգոստոս 30
- Ծնունդ Ս. Կոյսին Սեպտեմբեր 8 (անշարժ)
- Ընծայում Նոյեմբեր 21 (անշարժ)

## Խաչի Տօներ

- Երեւման Խաչ Մայիս 10
- Վերացման Խաչ Սեպտեմբեր 13
- Վարագայ Խաչ Սեպտեմբեր 27
- Գիւտ Խաչ Հոկտեմբեր 25

## Եկեղեցւոյ Տօներ

- Նոր Կիրակի Ապրիլ 19
- Աշխարհամատրան Կիրակի Ապրիլ 26
- Տօն Կաթողիկէ էջմիածնի Յունիս 14
- Շողակաթ Օգոստոս 15
- Խաչվերացի յաջորդող 6 օրերը Սեպտեմբեր 14-19

## Սրբոց Տօներ

Հայ Եկեղեցին Սուրբերուն յատկացուցած է շաբթուան չորս օրերը՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ: Կիրակի օրերը Տէրունի օրեր են եւ նուիրուած Քրիստոսի Սուրբ Յարութեան: Չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը պահքի յատուկ օրեր են:

Յանուանէ Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններէն 89 Սուրբեր քաղուած են, իսկ մնացեալները եկեղեցւոյ առաջին հինգ դարերու Առաքելական Հայրերէն են, ներառեալ առաջին երեք Տիեզերական Ժողովներու Հայրերը որոնք ուղղափառ հաւատքը հաստատեցին ու Նիկիական հաւատոյ հանգանակը բանաձեւեցին: Հայ Եկեղեցին անոնց վրայ աւելցուց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ու իր շառաւիղէն եկած եկեղեցւոյ Հայրապետներն ու յաւելեալ հայ սուրբեր, հինգերորդ դարէն

Շար.ը էջ 43

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՌՈՒԲԷՆ ԵՒ ՇՈՂԻԿ ԵԱՂԱԶԵԱՆ



# Թող Միասնական Յաղթանակների Տարի Լինի Գալիք 2020 թ. Ռ. ԿՈՐԻՆ

Մասամբ այսպիսի բովանդակությունները 2016-ին մի յօդուած էի գրել Շուշիի ազատագրութեան 24-րդ տարեդարձի առիթով, պատշաճ գտայ ամանորին առնչող իմ խօսքը յաղթութեան կամ յաղթանակի նշանաբանով լինի: Ինչպէս ժողովրդական խօսքի մէջ է ասուած՝ ուրախութիւնը ուրախութիւն է բերում, կամ բարի նպատակները բարի ճանապարհներ են բացում, սէրը՝ սիրով ծաղկուք է բերում, որ այսպէս է, ուրեմն կարելի է նաեւ ասել որ յաղթութիւնը՝ յաղթութիւն է բերում: Եթէ պարտութիւն լինի, դա պատճառ կը դառնայ նուաստացումների, ստորացումների եւ վարկաբեկումների, եթէ սէրը փոխուեց ատելութեան դա կը դառնայ չարիք թէ՛ անձի եւ թէ՛ շրջապատի համար, չարիք կը ծնի ու չարիք կը տարածի: Վաչն եկել է մեր «հարեւան» երկրի իշխանաւորներին, որոնք ատելութեամբ են լցուած հայ ժողովրդի նկատմամբ, կ'ուզեն շարունակ չարութեամբ եւ շանթալից սպառնալիքներով իրենց սին նպատակներին հասնել:

Ինչո՞ւ մեր «հարեւանը» չի ուզում հասկանալ, որ Սոււմգայիթի, Բաքուի, Մարաղայի եւ այլ քաղաքների անմեղ մարդկանց անմարդկային սպանութիւնները, Արցախի ուժեղացումներն ու աւերիչ յարձակումները պատճառ դարձան, որ մեր ազատամարտիկները հերոսական դիմակալութեամբ ազատագրեն հազարամեակների պատմութիւն ունեցող պապենական տարածքները եւ ցանկանում են այդ տարածքների տէր ու տիրականը ազատ ու խաղաղ ապրել, ոչ թէ նախկինի պէս հայածանքների եւ նուաստացումների ներքոյ տառապել, ուստի ոչ մի զիջում, (դեռ շատ տարածքներ մնում են գաւթուած), ազատագրուած տարածքները ինչո՞ւ պիտի վերադարձնել, հազարաւոր երիտասարդների սրբազան արիւն է թափուել, ընտանիքներ իրենց սրտահատոր զաւակներին կորցնելով սգաւոր են դարձել, ուրեմն բազմաթիւ հերոսների կորուստ, աւեր ու աւերածութիւն եւ ահաւոր տառապանքներ մեր «հարեւան»-ի միջոցով եւ այդ բոլորից յերոջ հայկական տարածքներ վերադարձնել՝ կամ վերաբնակեցնել փանահական մարդասպաններով, հարկ է խորը մտածել հեռուոր ապագան նկատի առնելով, եթէ աղբբեջանցի վերադառնայ ազատագրուած տարածքներում, լաւ իմացէք, որ դրանք կը դառնան պատուհաս, երկպառակութիւն հրահրող եւ չարիք: Խելքի աչեցէք իշխանաւորներ եւ չիշէք փանահ խանը ինչ արաւ, նրա սերունդները կազմակերպեցին Շուշիի հայութեան ջարդը եւ քաղաքի հրկիզումը: Ուրեմն նկատելով փոքր ածու ենք անհրաժեշտ է ողջ հայութեան կողմ հաւատքով ու միասնական ոգով կազմակերպուել եւ միշտ պատրաստ լինել տարբեր բնագաւառներում նոր յաղթութիւնների եւ ձեռքբերումների՝ դիւանագիտական եւ քաղաքական դաշտերում, ազգային ռազմավարական, պաշտպանողական, տնտեսական, գիտական, հասարակական, ուսումնական, մշակութային, մարզական եւ այլն: Այս հոգեբանութիւնը պիտի դրոշմուի իւրաքանչիւր հայի ուղեղում եւ հոգում, սա պարտադիր առաքելութիւն է, քանի որ ապրում ենք այնպիսի մի տարածաշրջանում, ուր բարոյական արժէքները եւ արդարութիւնը դրուշ իսկ հաշուի չեն առնուած, սուտն ու խաբկանքը, կեղծիքն ու շողոքորթութիւնը, ազգամոլութիւնը թուրք իշխանաւորների մօտ դարձել է արեան գոյն եւ բջիջ: Ահա այսպիսի տարածաշրջանում ապրելու համար մեր իշխանաւորներն նոյնպէս մեծ առաքելութիւն ունեն երկիրն ու ժողովուրդը պաշտպանելու եւ շարունակ մտածելու յաղթութեանց վերոյիշեալ անհրաժեշտ հարցերում: Ի՞նչ չափով պիտի հաւատանք իշխանաւորների ազգանուէր ու հայրենանուէր աշխատանիսներին... կը յուսանք հանգոյն սարի դոշից բխող ջուր, ոչ թէ լցնովի:

Այստեղ յարմար եմ նկատում չիշել մեր մեծ երգիծաբան Յակոբ Պարոնեանի պատգամը ուղղուած իշխանաւորներին. «Ականջներդ դէպի հայրենիք դարձուցէ՛ք, անոր հառաչանաց ունկնդիր եղէք, ձեր եղբարցը օգնեցէք... ազգութիւնը յառաջադէմ ազգաց կարգը անցնելու աշխատեցէք, հաստատամիտ եղէք...»:

Անցեալում շատ բաներ ենք կորցրել՝ հայրենի անասման տարածքներ, ժողովուրդ, կոթողներ, թանկագին մատենագրութիւն, արհեստի եւ արուեստի հրաշալի գործեր... Ինչո՞ւ այս բոլորը, քանի որ ապրել ենք ուրիշներին հաւատալով որպէս մեր փրկիչը, պաշտպանը, զօրակցողը եւ

դաշնակիցը, նաեւ ապրել ենք ստրկահոգեբանութեամբ, այլոց միջոցով պառակտումի անմիաբանութեամբ:

Ապրել ենք օտարների համար շահի խաղաքարտ դառնալով, ապրել ենք մեր ձիրքերն ու ստեղծագործութիւնները տրամադրել օտարների փառքի ու հօրացման համար: Ապրել ենք օտարամոլութեամբ, վանել ենք մեր արժէքները եւ ուրիշների արժէքներով տարուել:

Այս մտածումներով չի նշանակում մենք դէմ ենք երկրների միջեւ հաղորդակցութիւններ եւ յարաբերութիւններ ու կապեր ունենալ, այլ ընդհակառակը մեր նպատակը այն է որ առողջ ու սերտ կապեր նոյնիսկ մեր թշնամի «հարեւաններ»-ի հետ իրատես եւ արդարացի քաղաքականութեան շահերի վրայ հիմնուած:

Սպասում ենք Ռուս եւ ԱՄՆ-ի իշխանաւորներից թէ՛ ցեղասպանութեան պահանջատիրութեան եւ թէ՛ Արցախի հարցում արդար տնօրինութիւն կատարեն: Գեր մեծերը Թուրք իշխանաւորների անօրինութիւնները

Շար.ը էջ 42

### «Մասիս» Շաբաթաթերթի Յարգարժան խմբագրական կազմ

Ահա 2020-ի սեմին ենք կանգնած, նա գալիս է մեր կեանքում սպիտակ զգեստներ զգենած, ձեան նման անբիծ, որի երանգն են ակնկալում Հայաստան, Արցախ եւ ամբողջ հայութիւնը ներկայ ազատագրուած տարածքներով, քանզի սահման քաջաց գէն իւրեանց, այդ տարածքները հայկական պատմական հողեր են Արցախի եւ Հայաստանի անվտանգութեան եւ պաշտպանութեան երաշխիկ: Դա աներկբայ իրաւունքն է հայութեան եւ ցանկանում է բարի դրացիական կեանք խաղաղ ու անվրդով, սակայն սուրը ձեռքին թուրքը ինչ է հասկանում բարի դրացիութիւն, յոյսով մի օր հասկանալ որ հայ ժողովրդի կամքը միշտ դա է եղել եւ զոհ է գնացել մարդկային բարոյական արժէքների:

Այո՛, նորն ենք ցանկանում աղանաթեւ երկիր խաղաղութեան մարդիկ հաճութեան: Արդեօ՞ք նորն այսպէս է լինելու, թէ 2019-ի նման թուրքիայի ծաւալապաշտական յարձակումներով: Հայր խաղաղասէր է եւ խաղաղութեամբ հետամուտ հողային պահանջատիրութեան եւ ցեղասպանութեան՝ մէկ ու կէս միլիոնից աւելի հայերի կոտորածների արեան եւ կողոպտուած ունեցուածքի հատուցում: Սա հայերի արդար իրաւունքի պահանջն է եւ այս նպատակով կը շարունակի իր պահանջարկութիւնը առանց դադարի:

Ամանորեան այս տարեմուտի առիթով սրտագինս շնորհաւորում եմ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական ողջ կազմին մաղթելով նորանոր յաջողութիւններ այս գալիք տարում եւ ամուր կամք ու եռանդ լծուած առաքելութեան ի կատար:


Ուրախալի է «Մասիս» շաբաթաթերթը յաջողութեամբ բոլորեց 2019 թուականը իւրաքանչիւր շաբաթ թեւածելով ընթերցասէրների օջախը, «Մասիս»ին սպասում են մասիսասէրները եւ բոլոր նրանք որ ցանկանում են անսքող տեղեկատուութիւն Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մասին: «Մասիս»-ը բազմաբովանդակ է առնչուելով տարբեր հարցերի նաեւ միջազգային իրադարձութիւնների շուրջ: «Մասիս»-ը որպէս պաշտօնաթերթ աւանդական կուսակցութեան օրգան նպատակասլացօրէն լծուած է համահայկական կեանքի ձգտումներին զօրավիզ եւ պաշտպան: Հայկական «Մասիս» թերթի գոյութեամբ ուրախ մեր սրտագին մաղթանքն է անխափան հրապարակում տեղեկ պահելու հայրենեաց գոյգ երկրների եւ ի սփիւռս աշխարհի ցուրուած հայութեան հասարակական, հասցապահանջման եւ մշակութային կեանքի իրադարձութիւնները:

Շնորհաւոր Ամանոր եւ Ս. Ծնունդ:  
Ռ. ԿՈՐԻՆ



## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԻԱՐ ԹՈՐԳՈՄ ՓՈՍԹԱՃԵԱՆ



**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ  
 ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ  
 ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵԲԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**VREJ PASTRY**

**PASADENA  
 626-797-2331**

**GRANADA HILLS  
 818-366-2526**

**GLENDORA  
 626-914-1940**

# Նաւասարդ Ծեպել Մուսայի Լերան Լանջին ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Միտքդ պահէ, որ դուն Ծեպել Մուսայի ես, այսինքն ապառաժներու առասպելատիպ լեռնաշխարհէն ծնած ես հողի մը վրայ, որ վերելք էր միայն ու շքեղութիւն, որ պայքար էր լոկ ու խանդավառ խոյեանք, կռիւ էր: Եւ ազատ ապրելու անբեկանելի վճիռ:

## ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱԾԵԱՆ

Նաւասարդ, հուր հրացայտ Նաւասարդ, աշխարհական մարդիկ Նաւասարդ են տօնախմբում: Իրենց աշխարհի լեռների քարայծների մորթուց պատած թմբուկներն են որոտում, փողեր հնչում, բամբուկներ զարկում, մուսանների նորալույս շէնի հարիւր-հարիւր մարդիկ Անտիոքի Փոխ Արքայ Բագարատին եւ Տիգրան Արքայի Մովակալ Վարդանին են դիմաւորում: Բագարատ, Տիգրան արքան սելեւկեանների պետութիւնը ու նրա ոստան Անտիոքը նուաճելուց յետոյ այնտեղ Փոխ Արքայ նշանակել էր գորավարներից՝ Բագարատին: Լերան լանջին խարոյկ էին վառել, նրանց գալուստի պատուին լոյս մատուցելու: Շէնի առաջ, նրանց նժոյգները երկու ոտքերը վեր բարձրացրած բարեւի կանգնել դիմաւորողներին, խորը ակնածանքով խոնարհել էին ձիավար Փոխ Արքայ Բագարատի ու Մովակալ Վարդանի առաջ, միաբերան բացականչել:

Նայէ՛ք լերան գագաթին, արմէնների աստուածները խարոյկների բոցերը որպէս ջահեր վեր պարզած ողջոյնում Ձեզ, փառք արմէնների աշխարհի Արքաների-Արքայ Տիգրանին, փառք սելեւկեանների Անտիոք ոստանի Փոխ Արքայ Բագարատին, արմէնների Մովակալ Վարդանին:

Թմբուկների խրոխտ զարկերով, Բագարատին ու Վարդանին առաջնորդել էին լերան լանջի իրենց շէն: Տների դիմացի ճանապարհի եզրի ձիթենիների, թզենիների հովանու տակ եղջիւր հիւսուած աթոռներ ու սեղաններ էին: Փոխ Արքայ Բագարատի, Արտեմիա հարսի ու Մովակալ Վարդանի համար գահի նման ծաղկազարդ բարձր աթոռներ էին: Շէնի աւագ Պարոյրը նրանց առաջնորդել սեղանների մօտ: Յորեանի ցողուններից հիւսած նախազարդ սկուտեղներին իրենց շէնի դարաւանդներին հասունացած տանձ, կարմրուկ խնձոր, վարդ երեսներով դեղձ, ժպիտը դէմքին թուզ, արեւից շիկնած խաղող բրգացել: Փոխ Արքայի հետ եկած Անտիոքի արմէններին էին հրաւիրել սեղանների առաջ նստելու: Փոխ Արքայ Բագարատ նայել սեղաններին, ժպտացել... : Հազար-հազար տարիներից եկած ձեպել Մուսայի Հայ, յիշում էր քու լերան լանջի Նաւասարդի առաւօտը, եկեղեցիի բակում խոռովները զրկախառնում, շէնի բարձր բլուրին յենած առիւծի բաշերով արեւն էր լոյսի շանթեր զարկում լերան լանջին, շէնի կարմիր տանիքներին, հուր հուրհրան Նաւասարդ:

Սեղանների դիմացի խոզանի բացատն էր հարթեցուած, յարդախառն ցեխով ծեփուած գետնին ցորեանի ցողուններից հիւսուած խսիրնէր էին: Թմկահարներն էին եկել բացատ, Նաւասարդին նուիրուած պարի եղանակներ զարկել: Արմէնների Սասուն աշխարհի սասունցիների շէներում, դեռ հիմա էլ նման զարկերով թմբուկ որոտում, իրենց աշխարհի Նաւասարդի տօնախմբութիւնների պատարագ է այն: Շէնի այրերը, հարսերը բացատ էին ելել, կարծես իրենց աշխարհի մեհեանները զրկած Նաւասարդի շուրջ պար էին բռնել: Այդ շուրջ պարերը հազար-հազար տարիներ յետոյ էլ յարատեւեցին արմէնների աշխարհում: Տեսե՞լ էք, խորով թագաւորի անտառի դիմացի բարձունքին Միհր աստուծոյ տաճարի առաջ իրենց ռազմի ու յաղթանակի աստուած Վահագնի ծնունդին նուիրուած շուրջ պարերը, նախնիների ոգու դողանչներն էին պայթել իրենց սրտերում, հապա հարսերի ու պարմանուհիների նազանքի ելեւէջները, կարծես գնում էին իրենց նախնիների շէների այգիներ, խաղող քաղելու: Բագարատի ու նրա հարս Արտեմիա մանչ Տիգրանը վազել է շուրջ պարի կեդրոն, կարմիր թաշկինակը վերեւ պարզած նրանց պարն էր նմանակել: Բոլորը ապշած նայել էին, նրա սրտից պայթած նախնիների աստուածների մեհեանների անթեղուած ոգու կրակն էր:

Փոխ Արքայ Բագարատ, ահա իրենց լանջերին մանկիկներ սեղմած շէնի հարսերը, ձեռքը դէպի նրանց երկարելով խօսել էր շէնի աւագ Պարոյրը: Այս շէնի տները պատելուց, մուսանների լեռների լանջերին այս

նորակերտ շէնի կրակարաններից դէպի իրենց աստուածների տաճարներ իրենց լինելիութեան պատգամը յղելուց, այս ձորերի կողերին դարաւանդներ արարելուց, ցորեանի հացի առաջին բերքը հաւաքելուց յետոյ . . . մայրացել էին շէնի պարմանուհիները: Նրանք, իրենց գաւակներն են բերել, նախնի մեծերի քաջութեան ոգու հուրը հոսելիւր նրանց սրտիկներին: Քու ափերով քաղած արեւ աստուծ Միհրի լոյսով ցողես նրանց դէմքերը: Նրանց ցանկութեամբ իւրաքանչիւրին տաս քու եւ նախնիներիդ անուններ՝ Բագարատ, Հայկ, Արամանեակ, Կատմոս, Արամ, Արա, Արամէ, Արմայիս, Իշբուլիսի, Մէնուա, Սարտուրի, Ռուսա, Էրիմենա, Արաստ, Արմինակ, Արմէն, Տիգրան, Արտաշէս, Սաթենիկ, Աստղիկ, Անահիտ, Նանէ, Գիսանէ, Նար Մովինար, Տիգրան, Արտաւազդ, Վահագն, Միհր, Վանատուր, Տիգր, Արէզ, Հրանդ, Վարագ եւ բազում այլ անուններ: Բագարատ փոխ արքան, բամբուկների անուշ հնչիւնների, թմբուկի մեղմիկ զարկերի հետ, գիրկն առել, իւրաքանչիւր մանչ, արմենական անուն շնորհել, Միհր աստուծոյ արեւի ճառագայթների եօթը գոյներով օժել դէմքերը նրանց: Անտիոքի արմէնները իրենց հետ բերած հաց, խորոված երէնների միս, գինի, գարիի ջուրի կաւէ փարչեր փռել էին սեղաններին: Շէնի հարսերը թոնիրներին թխած հաց, լերան կաղնու անտառներում որսացած վարազների խորոված մսով լիքը սկուտեղներ շարել էին սեղաններին: Նաւասարդ էր, փառաբանել էին դիցամայր Անահիտի մայրութեան ու պողաբերութեան հրաշապատումը, Հայկ նահապետի ազատութեան կուռի յաղթանակը: Արմէնների աշխարհի հեռու լեռների յուշը իրենց սրտերում՝ խրախճանալու էին, ինչպէս իրենց աստուածների մեհեանների առաջ կատարած տօնախմբութիւնների ատէն: Միջօրէ, Միհր արեւ աստուածն էր կանգնել լերան լանջի կապոյտ երկնակամար, լոյս, լուսեղէն ժպիտ ցանում:

Նաւասարդ է այսօր, խօսել էր Փոխ Արքայ Բագարատը, նայէ՛ք Միհր աստուածն է բազմել Մուսանների լերան այս շէնի երկնակամար, կրակով շառագունած ճառագայթները փռել ձորակի կողերի դարաւանդներին, հազար գոյնի ծիածան կապել նրաց վրայ: Նաւասարդ, արմէնների տարի առաջին օրն է այսօր: Երկու հազար չորս հարիւր իննսուն երկու տարիներ առաջ, արմէնների նահապետ Հայկը ազատութեան կուռի էր տարել որդիներին ու իր խալիսի քաջերին, մահ սփռել երկիր եկած թշնամու գործի շարքերին: Հայկ Նահապետ, հինգ հարիւր կանգուն հեռաւորութիւնից նետահարել թշնամու թագաւորին: Ամէն տարուս այս օրը աստուածների մեհեանների հրապարակներում, Նահապետի յաղթանակը տօնախմբելու Նաւասարդ տօնախմբել, գուսանները երգել էին պատերազմի աստուած Վահագնին նուիրուած տաղը եւ Նահապետին ու նրա քաջերին ձօնուած բազում այլ տաղեր: Մուսանների լերան լանջի նորակերտ շէնի արտի բացատում Նաւասարդ ենք տօնախմբելու: Շէնի աւագ, ջահը ձեռքիդ գնա՛ վառիր Նաւասարդի խարոյկը:

Չուարթ բացականչութիւնների հունդիւնի հետ, շէնի աւագը վառել խարոյկը: Կարմիր բոցերը ժայթքում վերեւ, արեւ աստուած Միհրի դէմքն էր շառագունել: Հազար-հազար տարիներ Արմին-Հայ արեւորդիների սրտերում չէր մարել լոյսի, արեւի, կրակի աստուածներ՝ Արայի, Միհրի, Նանէի տիեզերական խորհուրդի ջահի բոցերի յուշը: Խենթանում էր խարոյկը, պայթում էր խարոյկը, կրակի կարմիր բոցերը բարձրանում վերեւ, նրա լոյսը տանում արմէնների հին աստուածների տաճարներ, աւետելու նրանց իրենց յաղթանակի բերկրանքը: Խարոյկի բոցերը շիկնել էին շէնի պարմանուհիների անուշ դէմքերը, պարմանների սրտերին քաջութեան սիրանք, իրենց արտերին ու հանդերին սիրոյ հուր կաթել: Կրակի բոցերի կարմիր խոցեանքով հազար-հազար կարմիր աստղիկներ դուրս թռել խարոյկի բոցերից, պարմանները նրանց իրենց ափերի վրայ պահած՝ տարել որպէս սիրոյ ծաղիկ նուիրաբերաբերելու պարմանուհիներին: Յնծութիւն էր, արմէնները ցատկում էին խարոյկի վրայից, նրա բոլորտիքը շուրջ պար բռնում, խարոյկի բոցերից ու թմբկահարի զարկերից շիկնել էր թմբուկի երեսը, շիկնել էին մուսանների շէնի պարման ու պարմանուհիների սրտերը:



# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

## ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԹԻԻ ԵՒ ՆԻՆԱ ԹԱՊԱՆԵԱՆ



## Նաւասարդ Գեպել Մուսայի Լերան Լանջին

«Պարոյր, կանչել էր Փոխ Արքայ Բագարատը, խարոյկի բոցերից մախրի ծառերի փայտի շեղջերից ջահեր վառէք, Նաւասարդ է, թող շէնն այս լոյսով ցնծայ, լերան լանջերը ու ձորի դարաւանդները լոյսով հեղեղուեն:

«Արմէն քաջեր, Հայկ Նահապետի յաղթանակի լոյսը իրենց սրտերում, գէնքով հասել ծովեր, ծովերից այն կողմն աշխարհներ եւ այս լեռներ: Որտեղ հասել էր իրենց քաջերի գէնքը, չէին ստրկացրել մարդկանց արարումը, այնտեղ տարել իրենց երկրի իմաստութիւնը: Ինքնիշխանութեան իրաւունք շնորհել քաղաքներին, ձանապարհներ շինել, տարբեր ազգերի ժողովուրդներ իրենց արարումը տանէին փոխանակելու, վաճառելու: Քաջերն այդ հայացրել աշխարհներ, արարչութեան լոյս հոսէր հեռուներ:

«Հայացել են այս լերան լանջերը, աղուոոր շէն էք պատել այստեղ, արմէնների խոնջանքն է այս ձորակի կողերին, իրենց երկրից բերած խաղողի, բազում անուշահամ այլ պտուղների տնկիներ, իրենց աստուածների երկնի աստղերից բերած ծիրանների տնկիներ, երկրի հրաբուխների կրակի համով ծիրան: Աստուածների բերած ցորեանի աաջին հունձքն է արտերում: Բարձր գագաթներով լեռ է շէնի թիկունքին, փարած մնացէ՛ք ձեր լեռներին, վտանգի պահերին բարձրացէ՛ք նրանց գագաթներ: Լեռն ի վեր բարձրանալ ձգտող թշնամու վրայ ժայռեր գլորէ՛ք, տեսէ՛ք, նրանք ինչպէ՛ս են փախչելու:

«Ծովն է ձեր առաջ կապոյտ-կապոյտ փուռել, թող ձեր շէները հասնեն նրա ջրերի ափեր: Ծովն ապահով էլք է դէպի վարդան Ծովակալի մօտակալ նաւահանգիստներ, հելլէների բնակավայրեր: Ո՞վ կարող է իմանալ պատմութեան ընթացքը:

«Արօրների, հողի մշակման գործիքների հետ ձեր տներում նիզակ, թուր, աղեղ, կապարճներով նետեր պահէ՛ք: Զէնքին, ուժին, վահագն աստուծոյ պաշտամունք նուիրեցէ՛ք: Հողին պաշտամունք նուիրեցէ՛ք, նրա մշակման ուսուցման հետ ձեր մանչերին գէնք կրել վարժեցրէ՛ք: Այս լեռները որպէս վահան բռնած կուռի ելէ՛ք թշնամու դէմ:

«Լցրէ՛ք գինու թասերը, Նաւասարդեան ողջոյն, Հայկ Նահապետին յաւերժութիւն, գինի խմէ՛ք, ցնծացէ՛ք, ծիծաղէ՛ք, արբեցէ՛ք: Նաւասարդ է այսօր, նախնիների աստուածների խրախճանքով խնդան ձեր սրտերը: Փառք արմէնների աստուածներին, իչքան բազում բարիք հոսել ձեր արտերին, հանդերին, դարաւանդները ծիծաղում են արեւի լոյսից: Փոխ Արքայ Բագարատը, մանչ Տիգրանը գրկին Արտեմիսը, Ծովակալ վարդանը, Անտիոքի արմէնները, շէնի մարդիկ նստել սեղանների շուրջ շարուած աթոռներին: Կարմիր գինիով լիքը թասերը գարկել իրար, խմել, արբեցել, գրկախառնուել, շէնի մի երգասաց երգել իր յօրինած տաղերը, երգել վահագնի ծնունդի տաղը, ուժգին ծափ էին տուել, Նաւասարդի արբեցման տարերքից լեռները դողացել: Իրենց Նաւասարդն էր, այդ լեռների լանջի շէնի առաջին Նաւասարդն էր, ինչպէ՛ս շարբենային նրա տօնախմբութեան հրայրքից:

Շէնի աւագ Պարոյրը բացատում էր, Անտիոքի Փոխ Արքայ գորավար Բագարատ ողջ լերուք, կանչել էր, Շէնի մարդիկ ոտքի էին ելել, գինու թասերը վեր պահած խմել Փոխ Արքայ Բագարատի ողջութեանը: Պարոյրը շարունակելով խօսքը, բացականչել՝ Նաւասարդ է այսօր, Տիգրան արքայի նախապապ հայկազուն Արտաշէս արքայի ընդձանքը եղել՝

«Ո տայր ինձ գծուխն ծխանի եւ գառաւօտն Նաւասարդի,  
Զուագելն եզանց եւ գուագելն եղջերուաց,  
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանեաք,  
Որպէս օրէն թագաւորաց»

Տաղ ասածները երգում այն, հազար-հազար տարիներ յետոյ՝ Հայկական կամաւորական լեգէոնի կապորալ Արմենակի մանչ, Նաւասարդ տօնախմբել օտարացած իրենց շէնում, ծառեր տնկել նրա դարաւանդներին:

Պարոյր շարունակել խօսքը,

«Արմէնների աշխարհի անուշ շէների ըղձանքը, պայթած աղբիւրների ջրերի քրքիջը, լերան լանջերի անտառների հովիկների դողի հեշտանքը, հայրենի հողի ոգու սարսուռը սրտերում արմէն արքայի գորքի

հետ հասել ենք այս կողմն աշխարհի: Արմէնների ոգու հրայրքի արարչութեամբ հայացնում ենք լեռները այս, արտերն այս, դարաւանդները նրա:

«Տիգրան արքան, աշխարհի այս կողմի հելլէների աւանդապատումի յուշի պատումը դարերին տանելու համար, Փոխ Արքայ Բագարատին թելադրել Անտիոքի մատենում լեռն այս անուանել այնպէս, ինչպէս իրենք էին կոչել՝ «Մուսաների պաշտամունքի Լեռ», հայու նոր պատած այս շէնը՝ «Մուսաների Լերան Շէն»: Հոգ չէ անուանը, լեռն ու նրա լանջի շէնը դարերին գնան, պատմութիւն դառնան: Ըմպենք գինի, անսասան լինի արմէնների աշխարհի գահը:

«Ծովակալ վարդան ողջ լերուք, լերան շէնի արմէններ, Անտիոքի արմէններ, գինիով լիքը թասերը կապուտակ ծովի ալեակներին ուղղած, իմենք Ծովակալ վարդանի ողջութեանը, անխորտակ լինեն նրա նաւերը: Նաւասարդի ինդուլթեամբ արբեցած արմէններ, վազէ՛ք դէպի Ծովակալը, թասերը գարկէ՛ք նրա թասին, գինու ծով հոսի նրա առաջ: Հարսեր, որպէս Նաւասարդեան տօն, թասերով ջուր ցանէ՛ք Ծովակալի վարսերին:

«Ողջոյն Անտիոքի Փոխ Արքայ՝ գորավար Բագարատ, անուշ հարս Արտեմիս, մանչ Տիգրան, ողջ լերուք: Անտիոքի հելլէները, արմէնները հիացած են աթոռանիստ Անտիոքը կառավարելու Ձեր հմտութեամբ, արմէնների արարման իմաստութիւնն էք բերել Անտիոք ոտան: Արտեմիս քնքուշ հարս, քու մանչ Տիգրանը արժանաւոր լինի արմէնների արքայի անուանը, արմէնների գորքի ջոկատները յաղթական կուռի տանի: Գինու թասերը գարկէ՛ք Բագարատի ու Արտեմիսի թասերին, գրկեցէ՛ք մանչ Տիգրանին, բարձրացրէ՛ք դէպի արեւ աստուած Միհր, դէպի նահապետ Հայկի աստղաբոյլ, Նաւասարդեան հրայրք նրա սրտիկին:

Բացատն էր բացուել, մի խումբ պարմաններ կանգնել էին Փոխ Արքայ Բագարատի առաջ, իրենց Տիգր աստուծոյն նուիրուած Նաւասարդեան քաղցր երգեր հնչեցրել: Թմկահար, գարկ թմբուկը՝ ի պատիւ Հայկ Նահապետի յաղթանակի, գարկ թմբուկը, որ արմէնների քաջերի գէնքերը ամրանան, գարկ թմբուկը արմէնների աստուածներին յաւերժութիւն լինի, գարկ թմբուկը, արմէնների արքայի գարմին անմահութիւն լինի, նրա թագին արեւալոյսի եօթ ալիքները հուրհուրան:

Բացատ էր ելել թմկահարը, որոտում էր թմբուկը, արբեցած արմէնները լերան գագաթները գրկած, շուրջ պար էին բռնել: Արմէնների բոլոր շուրջ պարերը արմէնների աստուածները ոգու սիրանքն են երկնում: Շուրջ պարի երկու թեւերին վարդան Ծովակալը ու Փոխ Արքայ Բագարատն էին, Արտեմիսն էր նրանց առաջ պարի ելել, եթէ տեսնէիք նրա նազանքը, Մուսա քոյրերի նման սահում լերան լանջերին, գնում նրանց կարմիր գագաթ կրակ քաղելու: Եւ յանկարծ, Նաւասարդեան գինիով արբեցած Փոխ Արքայ Բագարատը բացատ ելել, Միհր աստուածն էր արեւի եօթը գոյնը ցանում Բագարատի ու շուրջ պարի ելած արմէնների վրայ, սեղմուած էին շուրջ պարի շարքերը Բագարատի շուրջ, նրան որպէս մեհեան գրկած խելայեղ պար բռնել, գէնքով աշխարհներ նուաճած խենթացած արմէններ: «Բացէ՛ք բացատը» կանչել էր թմբկահարը, խրոխտ եղանակ գարկել: Երկու կողմերից պարմաններ, մերկ սուսերը վեր պահած, մօտեցել իրար, գարկել սուսերը, կայծեր էին ժայթքել, վախեցած մանչեր կպել մայրերի քղանցքներին: Ետ էին ընկրկել, շարունակել պար գալ, նորէն սուսերների ճարճատոյն կայծեր էին շէնի տների պատերին զարնուելով շիջել: Փոխ արքան հրճուալից դիտել նրանց գէնքերի վարժ ու յախուռն շարժումները:

Անտիոքի ու արմինների շէնի պարմանուհիներն էին բացատ, փողահարներն էին մեղմանուշ նուագ հնչեցիւնում, Արտեմիսն էր Բագարատի հետ բացատ ելել, պարում էին նազանի ելեւէջներով, ծովի ալեակների նման փրփրում, հովիկներին յենած թռչում դէպի լերան լանջեր, արեւի ճառագայթներ քաղում: Աստղիկ դիցուհին, ինչքան սիրոյ կրակ տեղացել նրանց սրտերին, հոգիներին, նրանց ակներին սիրոյ շանթեր վառել: Մարել էին թմբուկների ու նուագարանների հնչիւնները,

▶▶▶

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂ

## ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԴԷՔ ԵՒ ՊԻԱԹՐԻՍ ՔԱԽՄԵԱՆ



# Նաւասարդ Գեպել Մուսայի Լերան Լանջին

քանդուէլ էին պարի օղակները, ում սրտերը սիրով խոցուած էին, վազել էին իրար գրկելու, Նաւասարդի հրճուանք էր:

Նաւասարդի տօնախմբութեան հարճուանքով արբեցած արմէններ, կաւէ սափորներով ջուր էին ցանում իրար վրայ, ջուր ցանում Բագարատի պարեգոտի վրայ: Զրուած Արմէն այրեր ու տիկնայք խանդաղատանքով գրկում իրար: Պարմանները վազում պարմանուհիների վարսերից, իրաններից հոսած անուշ ջուր ըմպում: Նաւասարդ էր, իրենց նահապետի յաղթանակի տօնահանդէս:

-Նաւասարդեան խաղեր թող լինեն, կանչել էր Փոխ Արքայ Բագարատը: Անտիոքի արմէնների եւ լերան այս շէնի կտրիճ ու առոյգ տղաներ բացատ թող ելլեն: Ծովակալ Վարդանը թող վարի արմէնների նախնիների Նաւասարդեան խաղերը, որոշի յաղթողներին:

Ծովակալ Վարդանն էր կանգնել բացատում, առաջարկել Անտիոքի ու շէնի արմէններին իրենց դիւցածուններին բացատ առաջնորդել: Բացատի բոլորակ ելել գօտեմարտի առաջին գոյգը: Երկու կիսամերկ տղաներ կանգնել էին իրար դիմաց, ողջագուրուել, պինդ գրկել իրար: Երդուել սահմանուած կարգով գօտեմարտել: Գօտեմարտողներին քաջալերողները գոչել էին՝ «յաղթանակը կտրիճին է վայել»:

Ծովակալ Վարդանը, ձերքը վեր պարզելով ազդարարել սկսել գօտեմարտը: Մրցողները խոյացել էին իրար վրայ, հնարքներ փնտուել գրկելու մրցակցի իրանը: Բռնուել էին, տապալել իրար, անկարող հակառակորդի իրանը սեղմած պահելու գետնին: Երկրպագուներն էին բարձր կանչերով ոգեւորել նրանց: Բացատի շարքերից երկու պարմանուհիներ էին առաջ եկել, իրենց ակների շանթերի կրակով ուժ հոսել մրցողների բազուկներին: Լերան շէնի տղայի սրտին իրենց Անգեղաց Տորքի ուժի հրայրքն էր պայթել, գգեսնածի կոնակն հողին սեղմած պահում: Ծովակալ Վարդանն էր երկու ձեռքերը վեր պահած յաղթանակ շնորհել նրան: Սիրով արբեցած պարմանուհին, վազել դէպի յաղթանակած տղան, գրկել նրան, շտապել դէպի դարաւանդներ, կարգի համաձայն արգասաւորութիւն նուիրաբերելու իր քաջին...:

Ծովակալ Վարդանը պատուիրել էր բացատից հինգ հարիւր կանգուն հեռաւորութեան քարին գինով լիքը թաս դնել: Երկու հազար չորս հարիւր ինսուռ երկու տարիներ առաջ, իրենց Նահապետ Հայկն էր նոյն հեռաւորութիւնից խոցել թշնամու լանջը, նրա յուշը տանում իրենց յաւերժութեան ճամբաներով, ոչ ոք կարողացաւ մարել նրանց ոգու լոյսը: Նաւասարդ, Օգոստոսի 11, թէ Յունուար մէկ, Արմէն ցեղի յաղթանակի ու ազատութեան խորհրդանիշի ջահն է այն, իրենց սրտերի բորբ արիւնը հրաբխում նոր ժամի գանգերի զարկերի հետ, նահապետի սխրանքի յուշը փոխանցում սերունդներին:

Ծովակալ Վարդանն էր գիծ արել հողի երեսին, հրաւիրել շէնի նետաձիգին: Տղան յաղթ կանգնել էր, մի պահ ուժ հաւաքել, ձգել աղեղի լարը, պինդ պահել, նշան անել, ապա թողել այն: Նետը սուրալով թռել... կպել քարին, լուռ էին շէնի արմէնները: Երկրորդ տղան էր կանգնել գծի

եզրին, նայել թասին, դէպի իրեն էր քաշել աղեղի լարը, նետի ծայրն էր նշանին ուղղել, պինդ պահել աղեղը, ապա թողել լարը: Նետն էր արծուային թռիչքով սուրացել, փշրել թասը, գինին էր կարմիր շիթերով հոսել քարին:

Շէնն էր դողացել ծափերի որոտից, Անտիոքի արմէն կտրիճ տղան էր խոցել գինու թասը: Նաւասարդեան տօնահանդէսի խորհուրդի վայելքը ըմբոշխնելու համար պարմանուհին գնացել գրկել էր յաղթանակած քաջին, աղեղը կախել վզից, ո՛վ պիտի կարողանար մարել նրանց Նաւասարդեան վայելքը: Նրանք էլ վազել էին դէպի դարաւանդների ձորակ, Նաւասարդ էր, կարգն էր այդպէս: Շարունակել էին տարբեր մրցամարտեր՝ ձիավարութիւն, քաջերին էր վայել եղել ձիերին մարտի տանել: Արմէնների այրուձի, աշխարհներ գնացել, Երուանդունի Տիգրան թագաւորի վարած այրուձին մասնակցել հզօր Բաթելունի տապալմանը:

«Փոխ Արքայ Բագարատ», հարել էր Պարոյրը: Շէնի մարդիկ ցանկանում են, Անտիոք վերադառնալու Ձեր ճանապարհին այցելելիք մօտիկ ձորակին կողերին պատած դարաւանդներ, քայլէիք նրանց հողին, ծառերի լոյսին: Նրանք դարերին կը պատգամեն, Անտիոքի Փոխ Արքայ Բագարատն ու Ծովակալ Վարդանն են անցել այստեղից: Մուսալեռցի արմէնները շառաւիղներն են այդ շէնի մարդկանց, երկու հազար ու աւելի տարիներ մաքառել նրա հողի պաշտպանութեանը: Աշխարհի մեծեր դաւեցին իրենց, այնտեղ հիմա միայն հարիւր երեսուն արմէններն են: Նաւասարդով արբեցած արմէնները՝ Փոխ Արքայ Բագարատին, Տիգրան մանչի հետ Արտեմիս հարսին, Ծովակալ Վարդանին տարել էին իրենց պատած դարաւանդներ: Հազար գոյնի ճարմանդներ իրենց թեւերին, ծառերն էին հազար գոյնի հուրհուրում: Ունկնդրել էին գեփիւռի քնքշանքից օրօրուող ծառերի սօսափիւնը, դիտել նրանց ոստերի դողը, լոյսի հրավառութեան սքանչանքը:

Փոխ Արքայ Բագարատը բացականչել էր, որ դարաւանդները հրավառուած են շէնի մարդկանց արարման ջահերով, պտուղների գոյնի ու լոյսի ծիծաղ է դարաւանդներում, անդաստանի ծաղկած այգիներ: Փոխ Արքայ Բագարատը, ծովի գեփիւռի համբոյրից վարսերը շաղ եկած դէմքին, Ծովակալ Վարդանի, տիգրանի ձեռքից բռնած Արտեմիսի հետ բարձրացել դարաւանդների շարքեր, գովաբանել շէնի մարդկանց արարումը: Աշնանային բազում գոյների երանգներով դեղձ, խնձոր, տանձ փրցրել ծառերից, կերել, ապշել նրանց համից: Մանչ Տիգրանն էր փախել մայրիկի ձեռքից, վազել դարաւանդների շարքերով, պտուղ լցրել ծոցը:

Լերան շէնի արմէնները նրանց հետ իջել գետակի եզերք: Նաւասարդի խրախճանքով արբեցած Փոխ Արքայ Բագարատը, Արտեմիսին ու Տիգրանին իրանից սեղմած՝ նրբիրան նժոյգին բազմած, արծուային թռիչքով թռել միւս ափ, նրան հետեւել էր Ծովակալ Վարդանը, Անտիոքի ձիավար արմէններն էին նաեւ թռել միւս ափ: Նժոյգների թռիչքի հանդէս էր գետակի ջրերի վրայ:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍԵԱՆ  
Ի ՅԻՇԱՏԱԿ 20 ԿԱԽԱՂԱՆՆԵՐԷՆ  
ՎԱՀԱՆ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ**



**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ  
ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ  
ԱՄԱՆՈՐԸ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԳԻԸ  
ՀԱՅՑԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ**

**DOCORS OPTIONS SERVICES, INC  
MR & MRS GEORGE & JULIA OGANYAN**





# Ժագ Ս. Յակոբեանի Աւանդը

ՄԻՔԱՅԷԼ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

Նոյեմբեր 2-ին իր մահկանացուն կնքեց հայ գրական աշխարհի հսկաներէն մէկը, Ժագ Ս. Յակոբեան: Իր 102 տարիներու կեանքը անցաւ յաւիտենականութեան՝ հարուստ գրական վաստակ մը ձգելով իր ետին:

Ծնած էր Գահիրէ, Ազատուհի հետ ամուսնանալէ երկու տարի ետք կը գաղթէ Մելլալուն, Աւստրալիա, ապա կը վերադառնայ Գահիրէ, 1956-ին երեք զաւակներով ընտանիք կը փոխադրուին Պեյրութ, Լիբանան, ուր կը ծնի անոնց չորրորդ զաւակը, յետոյ դարձեալ Մելլալուն, Աւստրալիա եւ վերջապէս Գալիֆորնիոյ Փասատինա քաղաքը:

Երեսունէ աւելի հատորներու հեղինակ, Հայրապետներու կողմէ շքանշանակիր, իր գործերէն մի քանին արժանացած գնահատագիրներու, Կոտակը կը կանչէ թատերախաղի հեղինակ, որ 100-է աւելի անգամներ ներկայացուած է զանազան քաղաքներու բեմերուն վրայ, վերջապէս տաղանդաւոր եւ իւրայատուկ բանաստեղծ, արձակագիր, քարոզիչ եւ հայերէն լեզուի եւ գրականութեան դասատու:

Իր հեղինակութիւններէն մէկը կը ներկայացնէ մեծ գիւտարարին փնտռածն ու գտածը:

Կրնանք առանց տատամսելու Ժագ Ս. Յակոբեանը ներկայացնել որպէս գիւտարար, մեծ գիւտարարին աշակերտը:

Այս մի քանի տողերուն մէջ կ'ուզենք չիշել իր կեանքին իմաստ տուող բազմաթիւ գիւտերէն ոմանք:

30 տարեկան էր երբ գտաւ իր հերոսը, եթէ արդար պիտի ըլլանք, իր հերոսը գինքը գտաւ: Այդ հերոսը? որ գէնքով եւ դաշոյնով չէր շահած իր շքանշանները:

Մէր ըսուած բան մը կար,  
ո՛չ բնութեան սէրը,  
ո՛չ աղջկայ սէրը,  
ո՛չ հագար ու մէկ գոյն սէրեր:  
Այդ հերոսը սէր մը ունէր որ կ'երկարէր մինչեւ անհաշուելի սահմանները տիեզերքի,  
եւ Ժագ ժամանակ չկորսնցուց ստանալու այդ սէրը, տիրանալու այդ սիրոյն:

Այդ սէրը անուն մը կը կրէր,  
այդ սիրոյ անունը Յիսուս էր,  
եւ այդ օրէն ի վեր Յիսուս եղած էր իր երգը, իր բառը, իր ժպիտը, իր պաշտօնը, իր երազն ու ապրելու իմաստը:

Այդ օրէն սկսեալ Ժագ Յակոբեան դարձաւ Քրիստոսակեդրոն գրականութեան հեղինակը՝ Նարեկացիի եւ Շնորհալիի հանդերձներով:

Եւ ան գտաւ կեանքը, գլխազիր կեանքը, որ սկիզբ ունէր բայց ոչ վախճան, որուն համը առնելէ ետք անկարելի եղած էր աշխարհիկ սեղանի մը հիւրը ըլլալ, որչա՛փ համեղ ըլլար հոն մատուցուածը:

Ան գտած էր խոնարհ ըլլալու գաղտնիքը, իր բնակարանը, իր ինքնաշարժը, իր հանդերձները, իր դինագիծը, իր ապրելու ոճը խոտոր կը համեմատէին իր հանճարի հարստութեան տիրացածի մը:

Ան գտած էր կեանքի իմաստը, այսինքն ծառայութիւն, որ հակառակ իր համալսարանական յաջողութիւններուն որպէս դեղագործ, գինք մղած էր երկար տարիներ վարժարաններու մէջ շունչ սպառելու՝ իրեն վստահուած աշակերտներուն առողջ եւ հայեցի դաստիարակութիւն ջամբելու համար:

Յակոբեանի բառարանը չէր կրէր նախանձի եւ ատելութեան զգացումները, իր գրչեղբայրներուն եւ առ հասարակ մարդոց հանդէպ:

Կ'արժէ ձեռք ձգել Յակոբեանի «Ողկոյց» հատորը, կարդալու համար թէ ի՞նչ հիացումով կը ներկայացնէ հանճարեղ գրագէտներ Մկրտիչ Պէշիկթաշեան, Դանիէլ Վարուժան, Նշան Պէշիկթաշեան եւ Անդրանիկ Ծառուկեանը:

Ապա ան կը պատմէ իր կեանքի պատմութիւնը, կը խօսի Աղբալեանի եւ Թէքէեանի մասին եւ փունջ մը նկարներով կը ծանօթացնէ իր ընտանիքին:

Երախտագիտութեամբ կ'ուզենք մօտենալ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին Բարձրաշնորհ Առաջնորդ Մուշեղ Մարտիրոսեանի, որ մեծ սիրով Յակոբեանի վերջին մի քանի հատորներու հրատարակիչը եղաւ:



Ան գտած էր հայ ըլլալու, հայ ապրելու, հայերէն խօսելու, հայերէն գրելու կիրքը, գինովութիւնը, որ գինք դարձուցած էր հայրենիքի, հոն գտնուող հարստութիւններուն՝ Արարատին, Սեւանին, Էջմիածնին եւ Երեւանին, Սարգարապատին եւ Ծիծեռնակաբերդին ի բացակայ ներկայ ըլլալու ուրախութիւնը: Առանց ֆիզիքայէս հայրենիք այցելելու ան վայելած էր հայրենիքի օդն ու ջուրը:

Ան գտած էր Մեսրոպի հնարած տառերը՝ որոնք իր գրիչով վերածուած էին ծանօթ եւ անծանօթ բառամթերքի, եւ ամենէն կարեւորը՝

Ան գտած էր Աստուածաշունչ մատենը եւ այդ երկնաուաք գրքին մէջ ապրող հերոսներու ներկայութիւնը: Այդ մատենին բաց մնալը փափաքած էր ամէն վայրկեան, իր գրասեղանին վրայ ու աշխարհի բոլոր սեղաններու վրայ:

Երիտասարդ տարիքին ան սիրած էր Ազատուհին, իրեն հետ ամուսնանալէ ետք աշխարհ եկած էին չորս տաղանդաւոր զաւակներ, որոնց հայեցի դաստիարակութեան համար քուն փախցուցած էր, սիրած եւ խաղցած էր անոնց հետ եւ երբ կրտսեր որդին պետական դպրոց արձանագրած էր, գինք օտարին յանձնելէ ետք թաց աչքերով տուն վերադարձած էր:

Ան գտած էր ազգային տառապանքը աշխարհի քարացած խղճին դրկելու միջոցը եւ իր բազմաթիւ գրութիւններով՝ արձակով եւ բանաստեղծութիւններով ջանացած էր ոճրագործ թուրքը պատժել:

Ան գտած էր իր հոգիին հարստութիւնը ուրիշներու բաժնելու ամենօրեայ վազքը՝ հոգեւոր պատգամներով, Աստուածաշունչի սերտողութիւններով, բարեկամական հանդիպումներով:

Ան գտած էր հայերէն նոր բառեր հնարելու գաղտնիքը՝ որոնցմով հայերէն բառարանները հարստացուցած էր:

Կ'արժէ թուել անոնցմէ ոմանք.

Գրանկար, կրկնածունդ, անձնակոծում, հոգելից եւ հոգալից, մեսրոպաշունչ, մասիսածին, ժագափունջ, հայատրոփ, ուլունքաշար, հոգեշնչում, մեսրոպատրոփ, ծննդերգութիւն, պատգամափունջ, երկնաղօղանջ, համբոյրագօծ, համբոյրագեղ, համբոյրահոս, համբոյրաբոյր, հօտաքօծել, նեխագրկիչ, բոյրագէտ, գեղատուն, Յիսուսաբոյր, եղեմաբոյր, շնորհաբոյր, աստուածաբոյր, դրախտաբոյր, Աւետարանածին, Սաղմոսածաղբոց, գերվաճառատուն (supermarket), նեկտարաքաղ, Աւետարանասփռում, Յիսուսասփռում, Յիսուսատար (missionary), Յիսուսօրէն, Յիսուսավարակուիլ, Յիսուսաթաթախուիլ, Յիսուսագարդ, ողջունահանդէս եւ բազմաթիւ ժագերէն բառեր, որոնք հարստացուցած են եւ գունաւորած մեր գրականութիւնը:

Ժագ Յակոբեան գրական իր առաջին քայլերը առած էր Գահիրէի

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### ՏԻԱՐ ՕՍՔԱՐ ՕՀՆԻԿԵԱՆ



### 2019 Թուականը Իմ Տեսանկյունից

Շարունակում էք 26-ԷՃ

Արարա՞տը: Լաւ է ասում շնորհաւատ քաղաքագետ Արա Պապեանը՝ «Յեղասպանութեան ճանաչումը Պահանջատիրութիւն չէ»: Այսօր մենք Պահանջատիրութեան խնդիր ունենք աւելի՛ քան Յեղասպանութեան ճանաչումը:

Ժամանակին Խորհրդային իշխանութիւնը թքած ունենալով ԱՄՆի նախագահ Ուիլյամսի կողմից Սեւրի միջազգային համաժողովում հաստատուած՝ Հայաստանի նոր քարտէզի վրայ, թուրքերի հետ «ալիշ-վերիշ» անելով իրար մէջ արեցին Հայաստանին պատկանող 100 հազար ք.կմ. տարածութիւն՝ իր մէջ առնելով Լեռնային Ղարաբաղը:

30 տարուայ լուծութիւնից յետոյ, չէ՞ք կարծում, որ եկել է ժամանակը, որպէսզի գէթ Սեւրի Դաշնագրի 100-ամեակի կապակցութեամբ, Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը իր եղբայր Սփիւռքի հետ միակամ, 2020 թուականին Ամերիկեան կառավարութիւնից սկսի պահանջել Սեւրի դաշնագրի իրականացման գործնթացը՝ իրենց նախագահ Վուդրօ Ուիլյամսի կողմից վաւերացուած միջազգային ատենանի անժամկետ որոշումը: Իսկ ողջ Հայ ժողովուրդն էլ այս անգամ կ' սկսի Պահանջատիրութեան ցոյցի ելնել «Մեր հողերը», «Մեր եկեղեցիները», «Հատուցէք մեր արեան գինը» եւ նման այլ՝ Պահանջատիրութեան իմաստն արտայայտող պատասխաններով:

Հիմա գանք այս տարուայ բաւական չարհրկուած նիւթին՝ Թեյթոնին:

Ներկայիս Հայաստանում տիրող բարոյութեան եւ չարոյութեան, Սպիտակ-Սեւ մտայնութեան, մասամբ էլ երկրի հանդէպ ունեցած անվստահութեան պառճառով մենք կանգնեցինք տխուր իրականութեան առջեւ: Մարդիկ հազարումի պատճառներ են մէջտեղ բերում նման իրավիճակն արդարացիելու համար, եւ ո՛չ ոք չի խօսում «Հայաստան» հիմնադրամի նախորդ տարուայ տնօրէնի մասին, որը հիմնադրամից շորթած դրամները, իր ասելով, տանու էր տուել խաղատանը: Եւ այս մասին յայտարարուած է Թեյթոնից ընդամենը մի քանի ամիս առաջ: Այդ աղմկայարոյց դէպքը շեշտակիօրէն եւ անդառնալի կերպով յուսախաբ արեց ամբողջ հայութեանը:

Եւ դուք՝ թեյթոնականներ, ուզում էք որ մարդիկ ձեզ հաւատա՞ն, ո՛չ, չեն հաւատայ: Դուք ձեր անմտածուած գործերակերպով վախեցրիք ժողովրդին: Լաւ է ասուած՝ «Աչքը տեսածից է վախենում»: Պէտք ունէի՞ք, ինչպէս ժողովուրդն է ասում՝ «Ձեր աիբը» (ամոթ) ցուցադրելու: Պետական գործ էք անում, եւ, եւ՝ այդքան թափանցիկ գործերակերպ, ո՞ւմ համար, ինչի՞ համար Պրն. Վարչապետ: Դուք արեցիք դա՞ Ձեր «հանցաւոր» եւ ազնիւ մաքրութեամբ: Ձեր մէջ լուծէիք հարցը: Աղտոտ սպիտակեղէնը պարանին փոխելով Թեյթոնի դեկավարները ձախողեցին իրենց առաքելութիւնը:

Իսկ «Հայաստան» հիմնադրամի, նախկին տնօրէն Արա Վարդանեանը մի քանի ամիս բանտում նստելուց եւ հիմնադրամին մեծագումար վերադարձնելուց յետոյ դուրս եկաւ ազատ աշխարհ:

Միշտ պիտի չիչել, որ մէկ անգամ կորցրած վստահութիւնն ու վարքը՝ տաս եւ աւելի «մեղայականով» հնարաւոր չէ ջնջել մարդկանց չիշողութիւնից:

Ուշքի եկէ՛ք Հայրենիքի իշխանաւորներ, կուսակցութիւններ, ազգային, նոյնիսկ՝ ապագային իմբաւորումներ: Լաւ, գովելի նախագծեր են կեանքի կոչուել 2019 թուականին: Գնահատէ՛ք եղածը եւ օգնէ՛ք Վարչապետին եւ կառավարութեանը նորանոր բարձունքներ նուաճելու համար: Քէն-մէն, ռիս-մոնի թոթափեք Ձեր վրայից: Ներել կարողացէ՛ք դիմացիին: Ներողութիւն խնդրելն էլ է հերոսութիւն:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

### Սրբազան Զոր Սուրբ Ծննդեան Պատգամը

Շարունակում էք 26-ԷՃ

սահմանափակուած կեանքը հոգեւոր բոսորկութիւն է, այն ալ՝ չափազանց վտանգաւոր: Մարդը իր բնութեամբ անքակտելիօրէն կապուած պիտի մնայ Աստուծոյ հետ՝ առանց մոռնալու, որ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած է: Այլապէս՝ ան կը դադրի կենսագործելէ եւ ծառին նման կը չորնայ:

Սիրելիներ՛ի Քրիստոս,

Յիսուսի Ծննդեան պատկերին մէջ գտէ՛ք Ձեր կեանքին նոր ուղին: Ապրեցէ՛ք հաւատքով, կեանքը մշակեցէ՛ք հոգեւոր ու բարոյական արժէքներով, Ձեր հոգիին սլաքը միշտ ուղղէ՛ք դէպի Աստուած, զեղուն պահէ՛ք Ձեր սէրն ու եռանդը հայրենիքի ու Ս. էջմիածնի հանդէպ: Մի գլանաք Ձեր զաւակաց որպէս ժառանգ աւանդել մեր ազգի ու եկեղեցոյ սրբութիւնները, որպէսզի հոգեւորապէս գինած ըլլաք գանտնք դիմակայելու ժամանակի բոլոր մարտահրաւէրները:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,

Օրհնեա՛լ է Յայտնութիւնն Քրիստոսի:

Թող Աստուած աշխարհին պարգեւէ խաղաղութիւն ու բարգաւաճ կեանք, մեր երկրին՝ Հայաստանին մնայուն վերելք, մեր Ս. Եկեղեցոյ՝ անասանութիւն, ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կենաց արեւշատ օրեր, որպէսզի շարունակէ առաջնորդել մեր ազգն ու եկեղեցին դէպի նորանոր բարձունքներ:

Էմմանուէլ՝ Աստուած ընդ մեզ, Աստուած մեր ժողովուրդին հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի

### Ծնունդ՝ Տօն Յնծութեան

Շարունակում էք 26-ԷՃ

նիւթական, բարոյական եւ հոգեւոր նուէրները ընծայելու ենք Աստուծոյ փառքին ու մարդոց ծառայութեան համար:

Այս ծննդեան եղանակին որչա՛փ նպատակաշարժար պիտի ըլլայ, որ մեր ընծայելիք նուէրներուն հետ՝ չիչենք նաեւ Լիբանանահայ մեր հայրենակիցները, որոնք նիւթական տաղանապալի օրեր կ'անցնեն ընթացիկ տարուան Հոկտեմբեր 17-էն իվեր, որպէս հետեւանք տիրող տնտեսական անկայուն վիճակին:

Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօնը խորապէս իմաստալի սօնակատարութիւն մը կը դառնայ մեզի համար երբ մեր սրտերը կը նուիրենք իրեն որպէս կենդանի պատարագ եւ ցնծութեամբ կը պատգամենք Անոր աշխարհ գալուն նպատակը բանիւ, գործով եւ կեանքի վկայութեամբ:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. Ձեզի մեզի մեծ աւետիս:

ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ Գործադիր Տնօրէն, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

### Թող Սիսանական Յաղթանակների Տարի Լինի

Շարունակում էք 35-ԷՃ

պաշտպանելով հետագային նրանց փանխլամիտական ու փանթուրանական նկրտումները սպառնալիք կը դառնան իրենց համար, կը յայտնուեն սարդոստայնական որոգայթում: Արդարեւ արեւմուտքը եւ Ռուսաստանը ճակատագրական սխալ են թոյլ տալիս փոխնէ-փոխ թուրքերին հզորացնելով եւ պաշտպանելով:

Ահա կանգնած ենք գալիք տարուայ շեմին, գնացող տարուայ ընթացքում ականատեսն ու վկան եղանք Միջին Արեւելքում հակամարտութիւնների, իմ կարծիքով դեռ նրանք շարունակուելու են: Թուրքիան ու ադրբեյջանը սպասում են պատերազմական խառն վիճակի. որպէսզի մէկը ցեղասպանութեան պահանջատիրութիւնը ի սպառ մոռացնել տալու, իսկ միւսն իր ցանկացած տարածքներին հասնելու նպատակով: Յիչենք 1914 թ. առաջին համաշխարհային պատերազմը, թէ ինչպէս թուրքերը օգտուելով առիթից կատարեցին մեր Արեւմտահայոց ցեղասպանութիւնը եւ հայրենիքի բռնազրաւումը:

Գալիք տարին զգօնութիւն է պահանջում եւ հեռակայ ծրագրաւորումներ, որքան կարող ենք բարեկամ երկրներ շահել, կազմակերպուելու եւ հզորանալու ձգտումը օղից ու ջրից կարիք են մեզ համար ամբողջ հայութեան միասնական ոգու առկայծակումով:

Հերոս եւ նուիրեալ իշխաւորներն են կերտում անկախ, խաղաղ, անփորձանք, բարեկեցիկ եւ ուժեղ հայրենիք ժողովրդին պահելով իրենց թիկունքին:

Ահաւասիկ հին տարին գնում է եւ նորն է փոխարինում անգոյն, նորով նորանանք անցեալի դասերով գինուած երկիր պաշտպանել, այս մէկը անանձնական հերոսների գործն է, հազար ու հազար անգամ ողջոյն այսպիսի հերոսներին, մեր պատմութեան ոլորտներում հերոսների աստղահամար թիւ ենք ունեցել թէ՛ մեր անցեալի պատմութեան եւ թէ՛ մեր օրերի Արցախի գոյամարտերում, թող մեր իշխանաւորները վստահ լինեն որ պահանջի դէպքում էլի կ'ունենանք:

Ամանորեան եւ Ս. Ծննդեան շնորհաւորանքներ բոլորին սրտագին մաղթանքներով, յոյս առ Աստուծոյ ցանկութիւնների իրականացում: Թող վրայ հասնող տարին իր բովանդակ ընթացքում իմաստաւորուի ազգասիրական, հայրենասիրական եւ ժողովրդասիրական աշխատանքներով:

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* USA \$50.00, \$100.00 (First Class)

\* Canada \$125.00 (Air Mail)

\* Overseas \$250.00 (Air Mail)

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

# Տոմարագիտական 2020 Նահանջ Տարւոյ Հայ Եկեղեցւոյ

Շարունակուած էջ 34-էն

մինչեւ տասնըչորրորդ դար: Ամենավերջին Սուրբերը եղան հայոց 1915 թուականի ցեղասպանութեան նահատակները որոնք 2015 թուին սրբացան Ս. Էջմիածնի մէջ Մեծ Եղեռնի հարիւրամեակին «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

### Պահոց Օրեր

Համաձայն Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցին Պահքի օրեր յատկացուած են հետեւեալ գլխաւոր տօները կանխող օրերուն՝ համապատասխան տեւողութեամբ:

- ա) Սուրբ Ծնունդ Քրիստոսի՝ վեց օրեր (Դեկտեմբեր 30 - Յունուար 4)
  - բ) Առաջաւորաց Պահք՝ հինգ օրեր (Փետրուար 2-6)
  - գ) Մեծ Պահքի 48 օրերը, ներառեալ Աւագ Շաբաթը (Փետրուար 24 - Ապրիլ 11)
  - դ) Պահք Եղիա Մարգարէի՝ հինգ օրեր (Յունիս 1-5)
  - ե) Ս. Գրիգոր Լուսաւորչի Պահք՝ հինգ օրեր (Յունիս 22-26)
  - զ) Պայծառակերպութիւն Տեառն՝ հինգ օրեր (Յունիս 13-17)
  - է) Վերափոխումն Ս. Աստուածածնի՝ հինգ օրեր (Օգոստոս 10-14)
  - ը) Վերացման Սուրբ Խաչ հինգ օրեր (Սեպտեմբեր 7-11)
  - թ) Վարագայ Ս. Խաչի Պահք՝ հինգ օրեր (Սեպտեմբեր 21-25)
  - ժ) Յիսնակաց Պահք՝ հինգ օրեր (Նոյեմբեր 16-20)
  - ժա) Ս. Յակոբայ Պահք՝ հինգ օրեր, ձմեռնամուտին (Դեկտեմբեր 7-11)
- Վերոյիշեալ պահքի օրերու գումարն է 99: Իսկ տարուան պահքի օրերու ընդհանուր թիւն է 139:

### Ազգային Տօներ

- ա) Որդւոց եւ Թոռանց Սուրբ Լուսաւորչի (Փետրուար 1)
- բ) Սրբոց Ղեւոնդեանց (Փետրուար 18)
- գ) Սրբոց Վարդանանց (Փետրուար 20)
- դ) 1915 թուի Հայոց Ցեղասպանութեան վերջին Սուրբերը (Ապրիլ 24)
- զ) Վարագայ Խաչ (Սեպտեմբեր 27)
- է) Սրբոց Թարգմանչաց (Հոկտեմբեր 17)

### ԱՍՓՈՓՈՒՄ

Տէրունի, Սրբոց, Պահոց, եւ Ազգային տօնական օրերը հետեւեալ համագումարը կը ներկայացնեն

- Պահքի օրեր 13
- Ուտիքի օրեր 58
- Սրբոց օրեր 114
- Կիրակիներ 44
- Այլազանք 11
- ԳՈՒՄԱՐ 366 օրեր

Նկատի ունենալ այստեղ հետեւեալ երկու պարագաներ: Վերելի կիրակիներուն թիւը 44 է, որովհետեւ Մեծ Պահոց կիրակիները պակսեցուցած են եւ աւելցուցած պահոց օրերու գումարին մէջ: Իսկ «Այլազանք» նշուած 11 օրերը հետեւեալներն են:

- Ճրագալոյց Ծննդեան Յունուար 5
- Սուրբ Ծնունդ Յունուար 6
- Ծննդեան վեց օրեր Յունուար 7-12
- Անուանակոչութիւն Յունուար 13
- Տեառնընդառաջ Փետրուար 14
- Ծնունդ Աստուածածնի Սեպտեմբեր 8

Թէեւ նշուած թուականները ինչպէս ըսուեցաւ 2020 տարուան յատուկ են, կատարուած աշխատանքը կարելի է գործադրել նաեւ որեւէ տարուան համար, միշտ նկատի ունենալով Նահանջ Տարիի բացառութիւնը ինչպէս այս տարուան պարագային, պայմանաւ սակայն որ հետեւինք Տօնացոյց-ի երկու հատորներու ցուցմունքներուն եւ հրահանգներուն՝ դեկավարուելով Գիր Տարւոյ կոչուած տառով որ յաջորդ տարուան համար գոյգ ՇՆ գիրերն են ինչպէս բացատրեցինք սկիզբը: Ամէն տարի իրեն յատուկ Գիր Տարւոյն ունի: Առաջին հատորը տօներն է որ կը նշանակէ եւ կը բաշխէ, իսկ երկրորդը՝ օրերու հաշուարկումները կը կատարէ: Ի միջի ալ յոյս չի չենք նաեւ որ ամէն Նահանջ Տարիին է որ չորս տարին անգամ մը Ամերիկայի Նախագահական ընտրութիւնները տեղի կ'ունենան:

## Ժագ Ս. Յակոբեանի Աւանդը

Շարունակուած էջ 27-էն

մէջ, երբ իր Գաղտնի ձամբանե գողտրիկ հեղինակութեամբ ուշադրութիւնը գրաւած էր այդ օրերու նշանաւոր գրադատ Նիկոլ Աղբալեանի, որուն գնահատանքն ու քաջալերութիւնը մղած էին զինք շարունակելու եւ գործածելու իր Աստուածատուր տաղանդը:

Այդ օրերուն էր որ ծանօթացած էր բանաստեղծ Վահան Թէքէեանի, որուն հետ մտերմիկ յարաբերութիւն մշակած էր, եւ այնչափ սիրած էր իր երէցը, որ անոր մահուան առիթով արտայայտած էր իր զգացումները Մարդ մը մեռաւ հրաշալի եւ երկարաշունչ ներբողով մը:

Ժագ Յակոբեանի հետ իմ բարեկամութիւնս ծնունդ առած էր Պէչրուկի կենաց Վարժարանի մէջ, ուր երկուքս ալ ուսուցչութիւն կ'ընէինք, իսկ այդ բարեկամութիւնը հասունցաւ երբ ան աշխարհի մի քանի ցամաքամասերը այցելելէ ետք վերջապէս Փաստախնայ հաստատուած էր եւ առիթ ստեղծած որ նամակներով մեր սէրն ու զգացումները Պէչրուկէն Փաստախնայ իրարու փոխանցենք:

Ժագի 60-է աւելի նամակները եւ իմ պատասխաններս գիս մղեցին որ,

## Մկրտիչ Խրիմեան Հայրիկ

Շարունակուած էջ 27-էն

պահպանման, հօր եւ զաւակի յարաբերութեան մասին, Յիսուսի վերջին շաբաթը (Աւագ Շաբթուան), խաչին ճառը, ժամանակ եւ խորհուրդի մասին:

Որիմեան Հայրիկ կը հաւատար, թէ «Աշխարհի մեծագոյն մարգրիտը՝ Աւետարանն է», «Առանց Աւետարանի առաջնորդութեան ուրիշ ուղիղ ճանապարհ չկայ»:

Ունի նաեւ «Հայ Գոյժ» եւ «Վան Գոյժ» երկու նշանաւոր գործերը, որոնք կը պատկերացնեն թրքահայ եւ Վանի հայութեան աղէտները:

Որիմեան Հայրիկի գլուխ գործոցը կը նկատուի «Պապիկ եւ Թոռնիկ» գործը, ուր պապիկը իր թոռնիկին կը փոխանցէ հայկական հողին սէրը, ընտանեկան սրբութիւններուն եւ աւանդութեանց պաշտամունքը:

1929-ին Նիւ Եորքի մէջ հրատարակուեցաւ հսկայածաւալ հատոր մը, որ կը պարունակէ Որիմեան Հայրիկի գրական ամբողջական գործերը:

Որիմեան Հայրիկի ժամանակակիցները կը վկայեն, թէ Ան ինքզինք հոգեւորականի չափ բանաստեղծ կը համարէր: Որիմեան աննման Հայրիկ արտաքինով ոտքէն գլուխը փարթամ հասակով առնական գեղեցկութիւն ունէր: «Ոչ մէկ նկարով կարելի չէր պատկերացնել Որիմեան Հայրիկին դէմքը, մանաւանդ անոր խոշոր կապոյտ աչքերը», կը վկայեն զինք մօտէն ճանչցողները:

Որիմեան Հայրիկ սրամիտ էր: Նոյնիսկ լուրջ եւ ամենահանդիսաւոր պահերուն չէր մոռնար իր բնածին հիւմորը:

Էջմիածնի մէջ, Որիմեան Հայրիկին կը ներկայանար բանաստեղծ մը իր փոքրամարմին տիկնոջ հետ, Որիմեան կը նայի տիկնոջ, ապա հարց կու տայ բանաստեղծին.

□ Տիկինդ է, որ քեզ կը ներշնչէ եւ կ'ոգեւորէ բանաստեղծութիւն գրելու:

□ Այո, պատասխանեց բանաստեղծը:

□ Զաւակս, աղէկ ըրած ես, չարիքներուն փոքրագոյնը ընտրած ես: Սրախօսութեան հսկայ ժառանգ մը ձգած է Որիմեան Հայրիկ, որ հատորներ կարելի է լեցնել:

Վեփահառ Մկրտիչ Որիմեան Հայրիկի բազմաբեղուն կեանքի վերջին կոնդակն ալ իր տեսակին մէջ հայրենասիրութեան եւ ազգասիրութեան փայլուն օրինակ մըն էր իր կեանքին եւ իր խօսքին:

«Այժմ իմ հայրապետական կոնդակով, տարաբախտ ազգիս վշտալի հայրապետս, որ հասել եմ իմ կեանքի մայրամուտին, յորդորս եմ կարդում ձեզ, մեր բոլորի սիրելիներին, որ իսպառ թօթափեն սրտերից ատելութիւնը, մեծամտութիւնը եւ լինեն ընդմիշտ մի սիրտ եւ մի հոգի համերաշխ եւ եղբայրական սիրով գործեն այնպիսի խոհեմութեամբ, իմաստութեամբ, որ իրենց գործունէութեան արգասիքները վնաս չբերեն մեր ազգին, այլ օգուտ ու զարգացում»:

Ամենայն Հայոց «Հայրիկ»ի կեանքը վերջ գտաւ 20 Հոկտեմբեր 1907-ին, ծովածաւալ բազմութիւն մը ներկայ եղաւ իր թաղման արարողութեան, որ թաղուեցաւ նախորդ կաթողիկոսներուն պէս, Ս. Էջմիածնի մէջ:

Բիւր յարգանք անոր յաւերժալոյս եւ անմահ յիշատակին:

Իր արտօնութեամբ, գրականութիւնը սիրող հանրութեան ներկայացնեմ 222 էջնոց հատորով մը որ իր հիացումին եւ ուրախութեան նուէրը եղաւ ինծի եւ բազմաթիւ ընթերցողներու, իր երկնազանցութեանն տարի մը առաջ:

Այսօր ժագ այս երկրի վրայ իր 102 տարուան պանդխտութիւնը աւարտելէ ետք իր յաւիտեական բնակարանը կը գտնուի ուր ողջագուրուած է իր սէրերու մեծագոյնին հետ՝ Յիսուսի հետ եւ ուր հանդիպած է իրմէ առաջ հոն հասած հարագատներու, դեղագործ հօրը, սիրասուն մօրը, երաժիշտ եղբօրը, իր կրտսեր եղբօրը, քրոջ եւ իր կեանքի ընկեր Ազատուհիին:

Այսօր ան տեղաւորուած է Մեծ Ճարտարապետի կողմէ մասնաւորաբար իրեն համար կառուցուած բնակարանի մը մէջ, շրջապատուած վարդերով, շուշաններով եւ մեր երկիրը կը դիտէ գերագանց փափաքով մը? որ հայ ժողովուրդը, միլիոններ հաշուող հայ ժողովուրդը, մէկ հոգի իսկ չզրկուի այն փառքէն որուն մասին երգեց երկրի վրան ապրած օրերուն եւ որուն ան տիրացած է անսահման երջանկութեամբ:

Իր քերթուածներէն շատերը աշխարհիկ կեանքի սնանկութիւնը կը պոռան, եւ կ'աղաչէ իր ազգակիցներուն որպէսզի անոնք իրենց վրայէն հանեն կեղծ աւանդապաշտութեան ցնցոտին եւ երկինքի սպիտակ հանդերձով զարդարեն իրենց այլասերած հոգիները, որպէսզի իրենց աղբէն մաքրուին եւ Քրիստոսի լոյսով հարստանան:

Յովհաննէս առաքեալ իր գրած Աւետարանի Ա գլխուն 2-5 համարներուն մէջ այսպէս կը ներկայացնէ այդ լոյսը. «Սկիզբէն էր բանը եւ բանը Աստուծոյ քով էր եւ բանը Աստուած էր: Անիկա սքիզբէն Աստուծոյ քով էր՝ Ամէն բան անով եղաւ եւ առանց Անոր բան մը չեղաւ ինչ որ եղաւ: Կեանքը Անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր: Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր, ու խաւարը զանիկա չճանչցաւ»:

Ժագ Ս. Յակոբեան, սակայն ճանչցաւ Լոյսը եւ այդ Լոյսն է որ ճառագայթեց իր գրիչով 80 տարիներու ընթացքին:

Մեր մաղթանքն է որ մեր գրական աշխարհը յորդի այս լոյսով եւ օգնէ որ ընթերցասէր հասարակութիւնն ալ հարստանայ այդ երկնային լոյսով: Յարգանք Աստուածասէր, հայրենասէր եւ մարդասէր բանաստեղծ ժագ Ս. Յակոբեանի յիշատակին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՔՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ  
ՄԱԳԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ  
ԵՐՉԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՏՕՔԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
Central Diagnostic Imaging**